

Հ. Գ. ԱԿԱՑԱՅԵՑ

ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԳԻՐԾ ՄԻՋԱԿԱՐԳ ԴՐԱՅՎԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԱՆԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՏԻ Հ ԼԱՒՋՈՂԿՈՄԱՆԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԿՈՂՄԱՑ

551.4
10-51

ԹԱՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1938 ՅԵՐԵՎԱՆ

31.07.2013

11822

29 JUL 2010

551.4

L. T. U 1618413

U-51
un.


162791
10/10/

9605

ՓԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐԸ ՄԻԶՆԱԿՎԻՐ ԴՊՐՈՅԵԿՏԻ ՀԱՇՎԸ

Աւաման 5-րդ սարի



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1933 ՅԵՐԵՎԱՆ

ՆԵՐԱԾՈՒՅՈՒՆ

Ֆիղիկական աշխարհագրությունն ուսումնասիրում ե յերկրի կեղեց, յերկրի ջրերը և մթնոլորտը բոլոր այն յերկույթներով, վորոնք տեղի ունեն նրանց մեջ: Յերկրի կեղեց, ջուրը և ոդը վոչ միայն փոխադարձաբար շփվում են իրար, այլև իրար մեջ են ներթափանցում և փոխադարձաբար ազդում են իրար վրա: Ֆիղիկական աշխարհագրության յերկույթները հենց այդպես ել ուսումնասիրվում են— ցույց ե արվում նրանց տարածումը յերկրի վրա և նրանց փոխադարձ կապը: Յերկրի մակերեսույթի բոլոր մասերը շարունակ փոփոխվում են. նրանց մեջ տեղի ունի անդադար շարժում, լարված կյանք: Նրանց կյանքը տվողն արեկի եներդիան և Առանց այդ եներդիայի ծածկոցները մեռած կլինելին, նրանց փոխադարձ շփումը փոխադարձ ազդեցություն չեր առաջնի:

Այս բոլորից ել բղխում ե ուսումնասիրության կարգը:

Նախ ծանոթանում ենք յերկրի կենսաբյուրի՝ արեկի հետ, ու այն հանգամանքի հետ, թե ինչպես յերկրի մակերեսույթի տարբեր տեղերը նույն չափով եներդիա չեն ստանում: Այս նույթով դրադվում ե գրքի առաջին հատվածը, վորը բացատրում ե, թե յերկիրը մոլորակ ե և արեղակնային համակարգության մի մասը:

Այնուհետև տրվում ե անհրաժեշտ հասկացողություն քարտեղի մասին, վորն աշխարհագրության հիմնական ձեռնարկն է: Բոլոր աշխարհագրական յերկույթները պետք ե ուսումնասիրվեն քարտեղի վրա:

Ապա հաջորդաբար ուսումնասիրվում են յերկրի պինդ, հեղուկ և զաղային ծածկոցները, նկատի ունենալով նրանց փոխադարձ ազդեցությունը, հողա-բուսական զոնաները՝ նրանց կենդանական աշխարհով, կապված կլիմայի հետ:

Յեղրափակման մեջ տրվում ե առանձին աշխարհամասերի բնական յերկույթների տեսությունը:

Պատ խմբ

Տեխ խմբ — Գ. Զենյան

Թարգմ. - Ա. Սահակյան

Լեզվ խմբ. — Ա. Առաօմյան

Սրբագրեց — Վ. Տերյան

Հրտակ № 2700. Գուափիտ 8264 (բ) Գոտմեր 1872. Տիրած 26,000

Համար 1. Ազգային 1933

Ստորագրմած և տպագրելու և սպառեմբերի 1933


Կետերատի տպարան. — Ենթերակ

I. ՅԵՐԿԻՐԸ ՄՈԼՈՐԱԿ Ե

1. ՑԵՐԿՎԻ ԿՈՐՆԹԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐ

Եկթե բաց հարթության վրա կանգնած ժամանակ մեր չուրջը դիտենք, ապա կտեսնենք մի լնդարձակ տարածություն, վոր կոչվում է հորիզոն: Մեզ կթվա, թե հեռվում յերկիրը միանում է յերկնքի հետ. այն զիծը, վոր կարծես գոյանում և յերկնքի և յերկիրի միացման տեղում, կոչվում է հորիզոնի գլխ: Հորիզոնի զիծը շրջանագծի ձև ունի:

Ուր ել վոր գնանք, ամեն տեղ հարթ տարածության վրա հորիզոնի զիծը կունենա շրջանագծի ձև: Այդ ցույց և տալիս, վոր



Նկ. 1. Հորիզոնի ընդարձակվելը դեպի վեր բարձրանալիս


յերկիրն ուռուցիկ, կորնթարդ ձև ունի: Վորքան ավելի բարձրանանք, հորիզոնի տարածությունն այնքան ավելի՝ կընդարձակվի և հորիզոնի դիմն ել մեղնից ավելի ու ավելի կհեռանա: Հարթության վրա՝ տափաստանում, հորիզոնի դիմը մենք կտեսնենք 5 կմ հեռավորության վրա: Եեթե բարձրանանք բարձր լնուն գագաթը կամ աերոպլանով ուղղակի բարձրանանք, ապա կտեսնենք, վոր

100	մետր	բարձրության	վրա	հորիզոնն	ընդարձակվում	և	միջեւ	26	կմ.
500	,	,	,	,	,	,	,	80	,
1000	,	,	,	,	,	,	,	113	,
5000	,	,	,	,	,	,	,	253	,

Հորիզոնի աստիճանաբար ընդարձակվելը (նկ. 1) նույնպես աղացուցում է, վոր յերկրի մակերեսույթը կորնթարդ է:

Յեթև յերկրի մակերեսույթը տափակ լիներ, գեղի վեր բարձրանալիս հորիզոնը հետղհետե չեր ընդարձակվի, այլ կմնար նույնը: Յերկրը մեղ տափարակ և թվում այն պատճառով, վոր մենք նրա մակերեսույթի մի փոքր մասն ենք միայն տեսնում:

Ծովի վրա հեռացող նավին հեռագիտակով նայելիս, մենք տեսնում ենք, վոր հորիզոնի տակ ծածկվում են նաև նրա ստորին մասը, ապա միջին և վերջապես նրա վերին մասը (նկ. 2):




Նկ. 2. Նավի ծածկվում և հարիզոնի տակ նրանի մեջ, նայել նավի տեսքը նառադիտական նայելիս

Այս դիտողությունները նույնպես աղացուցում են, վոր յերկրի մակերեսույթը կորնթարդ է:

Յերկրի գնդանեւորյան ապացույցներ: Լուսնի խավարումների ժամանակ յերկրի ստվերն ընկնում է լուսնի վրա: Յերկրի ամեն դիրքում այդ ստվերը միշտ կլոր է լինում. այդ փաստն անկանություն է տալիս, վոր յերկրը գնդանեւ է (նկ. 3):

Յերկրի գնդանեւորյունն ապացուցվում է նաև չուրչերկրյա ճանապարհորդություններով: Առաջին չուրչերկրյա ճանապարհորդությունը կատարել և պորտուգալացի ճանապարհորդ Մատաւանը (XVI դարու սկզբին):

Յերկրագնդի մեծությունը: XVII դարում սկսվեցին յերկրագնդի շրջագծի աստիճանի՝ այսինքն նրա $\frac{1}{100}$ -րդ մասի ճիշտ չափումները, վորոնք շարունակվում են և այսօր: Այդ չափումները ցույց տվին, վոր յերկրի գնդանեւ ե, վորը սակայն բնեռների կողմից փոքր ինչ սեռմած է: Դուանով և բացարկվում այն, վոր յերկրագնդի բոլոր շառավիղները հավասար չեն: Բնեռային չա-



Նկ. 3. Յերկրի տակները ընկնամ և լուսնի վրա.

ռափիդը, այսինքն յերկրագնդի կենտրոնից մինչև հյուսիսային բնեռը յեղած տարածությունը, հավասար է 6356 կմ., իսկ հասարակածային շառավիղը, այսինքն յերկրի կենտրոնից մինչև հասարակածի վորեւ կետը յեղած տարածությունը, հավասար է 6378 կմ.: Յերկրագնդի շառավիղը միջին հաշվով հավասար է 6370 կմ.: Յերկրի շրջագիծը հավասար է 40·070 կմ.: Այդ շրջագիծի ամեն մի աստիճանը 111 կմ. է (նկ. 4):

2. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՊՏՏՎԵԼՆ ԻՐ ԱՌԱՆՑՔԻ ՇՈՒՐՋԸ


Յերկրագունդը պտտվում է յերեակայական առանցքի շուրջը: Հենց այդ պտտվելուց և առաջացել յերկրի սեղմվածությունը յերկու բնեռների կողմից:

Իսկ սեղմված գնդի ձև կարող են ընդունել միայն իրենց առանցքի շուրջը պտտվող փափուկ կամ զաղանման մարմինները՝ չնորհիվ պտտվելուց առաջացող կենտրոնախույս ուժի (այսինքն այն ուժի, վոր ուղղված է յերկրագնդի կենտրոնից դեպի դուրս): Այդպիսի մարմինների թվին եր պատկանում յերկրագունդը, յերբ նա չիկացած վիճակում եր գտնվում: Մեղ թվում է թե արեւ ծառագում և արեւելքում, աստիճանաբար բարձրանում հորիզոնի վրա:

կեսորին Հասնում առավելադույն բարձրության, իսկ յերեկոյան մայր մտնում հորիզոնի արևմտյան կողմում:

Բայց իսկապես վոչ թե արևն ե շարժվում արևելքից դեպի արևմուտք, այլ յերկրագունդն ե պտտվում իր առանցքի շուրջը՝ արևմուտքից արևելք:

Նման յերեւոյթ մենք կարող ենք նկատել այն ժամանակ, յերբ ինքներս ենք շարժողության մեջ լինում. որինակ՝ յերկաթուղով



Նկ. 4. Յերկրագնդի մեծարյալթը.

Պնալիս մեղ թվում ե, թե անտառը, դաշտերը, հեռադրասյուները, կայարանները շարժվում են մեր իսկական շարժման հակառակ ուղղությամբ:

Յերբ դիշերները դիտում ենք աստղերի շարժումը, մեզ թվում ե, թե աստղերն ել արեի նման շարժվում են արևելքից դեպի արևմուտք: Աստղերի մեջ միայն մեկն ե անշարժ մնում. դա թե՛ռային աստղն ե: Վորովհետև աստղերը շարժվում են մի վորոշ ուղղությամբ և իրար վերաբերմամբ իրենց դիրքը չեն փոխում, ապա մեղ թվում ե, թե ամրող աստղային յերկնքը պտտվում ե յերկրի շուրջը, կատարելով իր մեկ պտույտը 24 ժամում:

Բայց յեթե նկատի ունենանք այն հանդամանքը, վոր արելք

անհամեմատ ավելի մեծ ե (մոտ 1·305·000 անդամ), ապա բոլորվին անհամականալի յե մնում թե այդպիսի հսկայական մեծություն ունեցող գունդը՝ արելք պետք ե շարժվի յերկրագնդի նման մի փոքրիկ գնդի շուրջը:

Ավելի ևս անհամական ե այն յենթադրությունը, թե Հեռավոր մոլորակներն ու աստղերը պտտվում են յերկրի շուրջը: Յեթե դա ճիշտ լիներ այդ դեպքում արևելք ամենահեռու գտնվող մոլորակներից մեկը՝ Նեպտունը, մի որդա ընթացքում պետք ե անցներ 28 մլրդ. կմ. տարածություն, իսկ Կապելլա աստղը պետք ե սլանար մի վայրկյանում 32 մլրդ. կմ. արագությամբ:

Ինչպես են առաջանալ ցերեկը և գիշերը: Յերեկը և գիշերը առաջանում են յերկրագնդի իր առանցքի շուրջը պտտվելուց: յերկրագնդի լուսավորված կողմում լինում ե ցերեկ, իսկ չլուսավորված կողմում՝ գիշեր:

Յերկրագունդը պտտվելու միջոցին նրա բոլոր կետերը գծում են շրջաններ, մի քանիսը մեծ, մի քանիսը փոքր, միայն յերկրագնդի հակառակ կողմերում գտնվող յերկու կետ շրջան չեն գծում: Այդ յերկու անշարժ և իրար հակադիր կետերը կոչվում են բեկոններ:

Յերկրի այն բևեռը, վոր դարձած ե դեպի բևեռային աստղը, կոչվում ե հյուսիսային, իսկ հակադիրը՝ հարավային: Հյուսիսային բևեռային աստղը յերեւում ե մարդու ուղիղ գույսավերեկը (զենիթում):

Այն յերեւակայական շրջադիմը, վոր գտնվում ե բևեռներից հավասար հեռավորության վրա, կոչվում ե հասարակած. նա յերկրագունդը բաժանում է յերկու հավասար կիսագնդերի՝ հյուսիսային և հարավային:

3. ՅԵՐԿՐԱԴՐՆԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Տարվա տարբեր ժամանակ յերեկը և գիշերը տարբեր տեսղություն են ունենում: Մարտի 21-ին յերեկն ու գիշերը իրար հավասարվում են, այսինքն, թե՛ մեկի և թե՛ մյուսի սկզբանը՝ նույնը հավասար ե լինում 12 ժամի: Այնուհետև մինչեւ հունիսի 22-ը յերեկն սկսում ե հետեղետե յերկարել. հունիսի 22-ին նրա տեսղությունը Մոսկվայում հավասար ե լինում 17 ժ. 35 րուելի:

Հունիսի 22-ից հետո ցերեկն սկսում է կարճանալ. սեպտեմբերի 23-ին նա տևում է 12 ժամ, իսկ դեկտեմբերի 22-ին ընդամենը 6 ժամ 25 րոպե։ Դեկտեմբերի 22-ից հետո ցերեկն սկսում է յերկարել և մարտի 21-ին նրա տևողությունը կրկին հասնում է 12 ժամի։ Ի՞նչից ե առաջանում այդ։


Առաջանում է դա նրանից, վոր արեկի չուրջը պտտավելով, յերկրագունդը տարվա զանազան ժամանակներում տարբեր դիրքով և դարձած լինում դեպի արելը։ Եեթե յերկրագնդի առանցքն ուղղահայաց լիներ իր անցած ճանապարհի (որրիտի) մակարդակին, այն ժամանակ տարվա յեղանակների փոփոխություն չեր առաջանա և ինչպես ցերեկիվա, այնպես ել դիշերվա տեղողությունը թիշտ հավասար կլիներ 12 ժամվա։ Բայց, իսկապես, յերկրագնդի առանցքն իր որբիտի մակարդակի վերաբերմամբ միշտ թեք դրության մեջ և լինում, կազմելով նրա հետ $66 \frac{1}{2}^{\circ}$ անկյուն, իսկ հյուսիսային բևեռը միշտ դարձած է լինում դեպի բևեռային աստղը, վորը հորիոնի վրա միշտ պահպանում է մինույն դիրքը։ Այդ ե պատճառը, վոր արեգակի ուղղաձիգ ճառագայթների տակ ընկնում է կամ յերկրագնդի այն մասը, վորը հասարակածից հյուսիս և գտնվում կամ ինքը հասարակածը կամ թե չե նրանից հարավ ընկած մասը։ Առաջին դեպքում հյուսիսային կիսագնդում ամառ և լինում, իսկ հարավային կիսագնդում՝ ձմեռ։ յերկրորդ դեպքում՝ դարուն և աշուն, կամ աշուն և գարուն, իսկ յերրորդ դեպքում՝ հարավային կիսագնդում ամառ, հյուսիսային կիսագնդում ձմեռ (նկ. 5)։

Նկարի վրա դիտեցեք յերկրագնդի զանազան դիրքերն արեգակի վերաբերմամբ (նկ. 6, 7, 8)։

Մարտի 21-ին յերկրագունդը լինում է առաջին դիրքում։ Լուսարաժան գիծը (այսինքն յերկրագնդի լուսավորված և չլուսավորված մասերի սահմանագիծը) անցնում է բևեռների վրայով։ այս դիրքում յերկրագնդի վրա ցերեկն ամեն տեղ հավասար է լինում դիշերվան։ Այդ դիրքը կոչվում է դարնանային օրահավասար արեգակի ճառագայթում և ամառի ժամանակակի հասարակածի վրա զենիթում և գտնվում, այսինքն ուղիղ մարդու դիմավերել։

Հունիսի 22-ին յերկրագունդը լինում է յերկրորդ դիրքում։

Դա ամառային արևադարձի որն է։ Յերկիրն այդ դիրքում զտնվելու ժամանակ հյուսիսային կիսագնդում ամառ է, հարավայինում՝ ձմեռ։ հյուսիսային կիսագնդում ամեն տեղ ցերեկն յերկար է, քան դիշերը։ ցերեկն ու դիշերը հավասար են լինում միայն հասարակածի վրա։




Նկ. 6. Տարվա յեղանակների փափախությունը.

Սեպտեմբերի 23-ին յերկրագնդի դիրքը նման է մարտի 21-ի դիրքին. այդ աշնանային սրահավասարն է։ հյուսիսային կիսագնդում աշուն և լինում։

Դեկտեմբերի 22-ին յերկրագունդը լինում է չորրորդ դիրքում։ այդ դիրքը կոչվում է ձմեռային արեագարձ։ հյուսիսային բևեռը և շրջակայի մի զգալի տարածությունը ստվերի մեջ են գտնվում։ արեգակի ճառագայթուն ուղղաձիգ են բնկնում հասարակածից հարավ։ Այդ ժամանակ հարավային կիսագնդում ամառ է, իսկ հյուսիսայինում՝ ձմեռ։

Արեւի ջերմությունը յերկրի վրա հավասարապես չի տարածվում։ Վորքան արևն ավելի յերկար և տաքացնում յերկրի վորևէ


մասն, այնքան վերջինս արևելց ավելի շատ ջերմություն ե ստառնում: Բայց ստացած ջերմության քանակը կախված է վոչ միայն տաքացնելու տևողությունից, այլև նրանից, թե ճառագայթներն ինչպես են ընկնում յերկրի մակերևույթի վրա, ուղղահայաց թե՛թեք: Ուղղահայաց ճառագայթներն ավելի շատ ջերմություն են տալիս, քան թեք ճառագայթները:



Նկ. 6. Գաբրիանային յեկ աշնանային որակափառք

Նկ. 7. Ամառային արեվադարձ

Հասարաւածի վրա արեվակը զւնիթում լինում է տարվա ընթացքում յերկու անգամ—մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին: Հասարաւածին զուգահեռական շրջագիծը, վոր անցնում է նրանից հյուսիս 23½° հեռավորության վրա, կոչվում է հյուսիսային



Նկ. 8. Զմեռային տակադարձ

արեվարձ կամ հյուսիսային տրոպիկ: Նույնպիսի զուգահեռական գիծ, հասարաւածից նույն հեռավորության վրա, անցնում է նաև հարավային կիսագնդով և կոչվում է հարավային արեվադարձ կամ հարավային տրոպիկ (տրոպիկ նշանակում է դարձի շրջան, արևել

հասնելով նրանց, կարծես կրկին դառնում ե դեպի հասարակածը): Հյուսիսային արեվադարձի վրա արևը զենիթում լինում է հունիսի 22-ին, իսկ հարավայինի վրա՝ դեկտեմբերի 22-ին:

Հասարաւածին զուգահեռական և նրանից 66½° դեպի հյուսիս գտնվող գիծը կոչվում է եյուսիսային բևեռային շրջան: Նույնային մի զուգահեռական և հասարաւածից նույն հեռավորության վրա անցնում է հարավային կիսագնդով և կոչվում հարավային բևեռային շրջան:

Բևեռային շրջաններում տարվա ընթացքում միայն մեկ անգամ ցերեկը տեսում է 24 ժամ: Նույնպիս մեկ անգամ դիշերը տեսում ե նույնքան ժամանակ:

Հյուսիսային բևեռային շրջանում հունիսի 22-ին ցերեկը տեսում է 24 ժամ և դեկտեմբերի 22-ին դիշերը 24 ժամ: Հարավային բևեռային շրջանում ընդհակառակը, հունիսի 22-ին դիշերն են տեսում 24 ժամ, իսկ դեկտեմբերի 22-ին՝ ցերեկը: Բևեռներում մոտավորապես 6 ամիս ցերեկ ե լինում, 6 ամիս՝ դիշեր¹⁾:

Տոմար: Հին և նոր տոմար: Տարվա տեսղությունը վորոշելու խնդիրը մեծ դժվարությունների հետ է կապված յեղել: Բանն այն է, վոր տարվա տեսղությունը չի կարելի ամբողջական որերի թվով արտահայտել, քանի վոր տարվա ճիշտ տեսղությունը հավասար է 365 օր 5 ժամ 48 րոպե և 46 վայրկյանի: Անհարմատ կլիներ տարին սկսել որվա տարբեր ժամերից: Այդ դժվարությունը վերացնելու համար 46 թվին, վորոշվեց 3 իրար հաջորդող տա-

¹⁾ Ցերեկվա և դիշերկա առավելագույն տեսղությունը հասարաւածից տարբեր հեռավորության վրա:

Հեռավորությունը հասարաւածից աստիճաններով	Առավելագույն տեսղությունը	
	Ցերեկվա	Դիշերկա
0	12 ժամ	12 ժամ
66½	1 օր	1 օր
70	64 >	60 >
75	106 >	97 >
80	133 >	126 >
90	186 >	179 >

ըլներից յուրաքանչյուրը հաշվել 365 որ, իսկ հաջորդ՝ չորրորդ տարին 366 որ (իբրև այսպես կոչված «Նահանջ» տարի): Նահանջ համարվում են այն տարիները վորոնց տարեթիվը բաժանվում է չորսի. որինակ՝ 1904, 1908, 1912, 1916 թ. թ.։ Բայց այդ ուղղումն ել ճիշտ չէր, քանի վոր այդ հաշվով տարին հավասար եր համարվում 365¼ որվա, այսինքն իրական տարուց 11 րոպե և 46 վայրկյան ավելի:

Դրա շնորհիվ 128 տարվա ընթացքում մի ամբողջ որվա տարրերություն եր ստացվում: Այդպիսի տարեհաշվումը կոչվում ե իին տամար:

Դրանից կուտակված սխալն ուղղելու համար 1582 թվին որացույցը 10 որով առաջ գցեցին: Հետազայում առաջանալիք սխալները վերացնելու նպատակով, վորոշվեց յերկու զերոյով վերջացող թվականներից այն տարիները հաշվել նահանջ, վորոնց առաջին յերկու թիվը բաժանվում է չորսի. այսպես՝ 1600, 2000 թվականներին տարին նահանջ ե, իսկ 1700, 1800, 1900 թվականներին՝ հասարակ: Այս տարեհաշիվը կոչվում ե նոր տամար:

Մեղ մոռ՝ ԽՍՀՄ-ում նոր տոմարը գործադրության մեջ ե դրվել 1918 թվի փետրվարի 14-ից: Հին և նոր տոմարների մեջ այժմ 13 որվա տարրերություն կա:

4. ՅԵՐԿԻ ԴԻՐՔԸ ՏԻՑԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տիյեղերական տարածության մեջ յերկիրը մեն-մենակ չե. բացի նրանից այդ տարածության մեջ են գտնվում նաև արևը, լուսինը, և բազմաթիվ մոլորակներ ու աստղեր:

Արև: Արև, մի հսկայական շիկացած գունդ ե, վորի բարեխառնությունը մակերեսույթի վրա 6000°-ից ավելի ե, իսկ խորքում, պետք ե յենթադրել, վոր այդ բարեխառնությունն անհամեմատ ամելի բարձր ե: Արևի ծագալը յերկրագնդի ծագալից 1,305,000 անգամ մեծ ե: Արևը բաղկացած ե նույն նյութերից, ինչ վոր յերկրագունդը. պարզված ե, վոր արևի վրա կան յերկաթ, պղինձ և այլ մետաղներ: Բարձր բարեխառնության շնորհիվ այդ բոլոր նյութերը շիկացած են և գտնվում են հեղուկ կամ գաղանման վիճակում:

Արևը յերկրագնդից շատ ե հեռու. նրա հեռավորությունը 149·500·000 կմ. ե:

Արևի վրա նկատվում են արեգակնային բժեք: Նրանք յերեսում են արևի արևելյան կողմում, 12—13 որից հետո մոտենում են արևի արևմտյան կողմին, դրանից հետո նրանք անհայտանում են և 12—13 որից հետո նորից հայտնվում արևի արևելյան կողմում: Այդպիսով բժեքը իրենց լրիվ չըջանը կատարում են մոտավորապես 25 որվա ընթացքում: Դրանից մենք յեղակացնում ենք, վոր արևն եր առանցքի շուրջը պտտվում ե 25 որում:

Արևն իր ձգողական ուժով պահում ե յերկրագունդը և չի թողնում, վոր նա հեռանա գեղի անսահման տարածությունը:

Լուսին: Լուսինը պտտվում ե յերկրագնդի շուրջը ուստի և նրա արբանյակն ե համարվում: Իր շրջանը նա կատարում ե 29½ որվա ընթացքում: Նա յերկրագնդից փոքր և 50 անգամ, բայց բոլոր լուսատուներից մեծ ե յերեսում, վորովհետեւ ալելի մոտ ե յերկրագնդին: Լուսնի հեռավորությունը յերկրագնդից մոտավորապես 380·000 կմ. ե: Ողի և ջրի բացակայության շնորհիվ լուսինը բոլորուվին անկենդան ե:

Լուսինի մակերեսույթը տելեսկոպով լավ ե յերեսում, նրա վրա նկատվում են մեծ անհարթություններ, վորոնք հասարակ աչքով նայելիս մութ բժեքի ձևով են յերեսում: Բայց իսկապես դրանք բարձր սարել են, վորոնք լուսավորվելով արելից, իրենց ստվերը դցում են հարթությունների վրա. լուսինը խափար մարմին ե, այսինքն սեփական լույս չունի. արևի ճառագայթներն ընկնում են լուսնի վրա և կրկին անդրադառնում. և մեղ թվում ե, թե լուսինը լույս ե արձակում:

Մոլորակները: Մոլորակներն ել յերկրագնդի նման գնդաձեւ և խափար մարմիններ են: Նրանք պտտվում են արևի շուրջը և նրանից են ստանում իրենց լույսը:

Էնդամենն 9 մոլորակ կա. դրանք հետեւալներն են—Մերկուր, Վեներա, Երկիր, Մարս, Յուլիսեր, Սատուրն, Ուրան, Նեպտուն և Պլուտոն:

Մոլորակների առունեները	Հեռավորության մակարդակը յեր- շյունը արև- կրագնդի ծա- րց միջըն կի- զալի հետ հա- լումներով մեծատած	Վորքաս ժա- մանակում ե- պտառում ա- բեր շուրջը	Տրամադրելը կիւսմետրով
Մերկուր	58	0,08	88 որ
Վեներա	108	0,9	225 >,
Երկր	150	1,0	1ասրի
Մարս	228	0,15	3 >,
Յուպիտեր	780	1312	12 >,
Սատուրն	1426	734	29,5 >,
Ուրան	2868	65	84 >,
Նեպտոն	4494	60	165 >,
Գլուտոն	5908	—	248 >,

Յերկրից բացի, կյանք կարող ե գոյություն ունենալ միմիայն Մարսի վրա, քանի վոր նրա վրա չուր և ող կա:

Արեւ, մոլորակները, լուսինը և մոլորակների արբանյակները միասին վերցրած մի համակարգություն են կազմում, վոր կոչ վում և արեգակնային համակարգություն: Համակարգության կենտրոնում գտնվում ե արեգակը, մոլորակներն իրենց արբանյակներով շարժվում են արեւի շուրջը:

Աստղեր: Բացի արեւից, մոլորակներից և լուսից, յնրինքի վրա յուրաքանչյուր կիսագնդում մոտավորապես 6000-ական աստղ է յերեսում: Աստղերն ել արեւի նման շիկացած մարմիններ են և նրա նման սեփական լույս են արձակում. այսպիսով արեւը նույն պես աստղ է:

Աստղերը մեղնից չափազանց հեռու յեն գտնվում: Ամենամոտիկ աստղի լույսը հասնում է մեղ $4\frac{1}{2}$ առարում (իսկ լույսը մեկ վայրկյանում անցնում է 300.000 կմ.):

Այդ պատճառով հսկայական մեծություն ունեցող աստղերը մեղ յերեսում են փայլուն մանրիկ կետերի նման, բայց իսկապես հան աստղեր, վորոնք արեւից 100 անգամ մեծ են:

Ի՞նչ ե ասում աստվածաշնչը տիյեզերքի մասին: Կրոնի հաղածանքները գիտական տվյալների դեմ: Աստվածաշունչն ասում է, վոր լուսատուներն՝ արեւը, լուսինը և աստղերը ամբացված են «յերկնից հաստատության», այսինքն հաստատուն յերկնակամարքին. նա ասում է, վոր ամբողջ տիյեզերքի կենտրոնը յերկրին ե.

վոր յերկիրը անշարժ է, իսկ արեւը, լուսինը և աստղերը պտտվում են նրա շուրջը: Յեզ միայն XVII դարում լեհացի գիտնական կոպերնիկոսը հերքեց այդ ուսմունքը:

Կոպերնիկոսի ուսմունքը յեկեղեցին «Հակակրոնական» ուսացը ինքը յերկիրն ե պտտվում իր առանցքի շուրջը (որական շարժում) և յերկրորդ՝ յերկիրն իր առանցքի շուրջը պտտվելով, միաժամանակ պտտվում ե և արեւի շուրջը (տարեկան շարժում): Նա ապացուցեց, վոր յերկիրը վոչ թե տիյեզերքի կենտրոնն ե, այլ արեգակնային համակարգության մոլորակներից մեկն ե միայն: Կոպերնիկոսի այդ ճիշտ ուսմունքը՝ տիյեզերքի կառուցվածքի մասին, կրոնի պաշտպանների կողմից կատաղի դիմադրության հանդիպեց:


Կոպերնիկոսի ուսմունքը յեկեղեցին «Հակակրոնական» ուսմունք հայտարարեց: Հետագայում Զորդանո Բրունոն և Գալիլեյը, վորոնք պաշտպանում եյին կոպերնիկոսի ճիշտ տեսակետը յերկրի շարժման մասին, անաստվածներ հայտարարվեցին (XVI—XVII դ. դ.):

1600 թվին Զորդանո Բրունոյին Հռոմում այրեցին խարույկի վրա: Դատարանում Բրունոն ջախջախեց մեղադրողների առաջադրած բոլոր փաստերը: Լուեզվ իր մահվան դատավճիռը, նա հայտարարեց յեղիսկոպոսին—«Դուք այդ դատավճիռն ավելի մեծ ահօն եք հայտարարում, քան թե յես լսում եմ»:

Ժամանակի մեծագույն գիտնական Գալիլեյը, յեկեղեցական գատարանի առաջ մահվան պատճի սովորնալիքի տակ՝ ստիպված յեղավ իր ուսմունքնից հրաժարվել:

Պարզ է, թե տիրող զասակարգերը ինչո՛ւ եյին այդքան վախենում աստվածանչի ուսմունքի հերքումից: Նրանք գիտեյին, վոր այդ ուսմունքը հերքելուց հետո շատ հեշտ կլինի հերքել թե՛ աստծու և թե՛ կրոնի գոյությունը: Իսկ կրոնի գոյությունը շատ անհրաժեշտ ե տիրողների համար, քանի վոր կրոնը պահանջում է մարդկանցից անդադար հնագանդիւ իրենց թագավորներին, կալվածատերներին և կապիտալիստներին:

101/91
427




II. ՀԱՏԱԿԱԳԻԾ ՅԵՎ ՔԱՐՏԵԶ

Աշխարհագրության մեջ ուսումնասիրվող բոլոր երկու լիներն անց են կացնում քարտեղի վրա: Քարտեղը վորեև մեծ տարածության (որինակ, շրջանի, մարզի, մի ամբողջ յերկրի և այլն) գծադրությունն եւ: Քարտեղների վրա միշտ աստիճանացանց եւ լինում, այսինքն նրանց վրա գծիած են լինում միջորեյականներ և զուգահեռականներ: Փոքր տարածությունների, որինակ վորեև հողամասի, տնտեսության կամ քաղաքի գծադրությունը կոչվում է հատակադիմ կամ պլան: Պլանն առանց աստիճանացանցի յեւ գծադրվում:

1. ԿՈՂՄԱՑՈՒՅՑ

Վորեև տարածություն պլանի վրա արտահայտելու համար, սկսոք եւ իմանալ ուղղությունների ճիշտ վորոշումը: Ուղղությունները կամ կողմերը վորոշում են կողմնացույցով (կոմպաս): Կողմնացույցի սլաքի մի ծայրը միշտ դեպի հյուսիս եւ լինում: Կան և կատարելագործված կողմնացույցներ (նկ. 9), վորոնցով կարելի յեւ ամենայն ճշությամբ վորոշել ցանկացած ուղղությունը:



Նկ. 9. Կատարելագործված կողմնացույց

Այդ կողմնացույցի հատակին գծված եւ լինում նրա թվացույցը, վոր բաժանվում եւ 360 մասի (աստիճանի):

Սլաքի ձեւը նման եւ լինում նկարում ցույց տվածին: Խուսիլ ապակուց եւ կարող եւ պատվել: ապակու տրամադի մեջտեղով անցնում եւ մի գիծ (ցուցիչ), վորի ծայրը վերջանում եւ կետով: Մաղնիսական և սլաքի սուր ծայրը, ապակու վրայի գիծը և կետը խչպես և թվացույցի տառերը՝ Ը. Խ. Բ. Յ. ծածկվում են լուսարձակ նյութով, վորպեսզի կողմնացույցից կարելի լինի ողտվել նաև զիշերները:

Ծարժական խուսի տրամադի ծայրերին կան կտրվածք և նշանառության հատիկ, ինչպես հրացանի ծայրին եւ լինում դրանց միջոցով կոմպասն ուղղվում եւ դեպի մի վորեև կետ:


Յենթադրենք, թե Ա. կետից (վորակեղ մենք ենք գտնվում) հարկավոր եւ անցնել 104,7 բարձրությունը (նկ. 10): Կողմնացույցը հարմարեցնում ենք այնպես վոր սլաքի հյուսիսային ծայրը կանգնի ուղիղ Ը տառի վրա: Հետո կողմնացույցը դդուշությամբ բարձրացնում և նշան ենք բռնում այնպես, վոր սլաքը չհեռանա Ը տառից, ապա սկսում ենք պտտել ապակե խուսին այնքան, մինչև վոր նրա վրայի ճեղքվածքը, հատիկը և 104,7 բարձրությունը մի գծի վրա յերևան:

Նայենով կողմնացույցին, տեսնում ենք, վոր ապակու վրայի ցուցագծի կետը կանգած եւ 30-ի դիմաց (թվերը նշանակված են թվացույցի վրա): այդ նշանակում եւ, վոր դեպի 104,7 բարձրությունն անցնող գիծը հյուսիսից հարավ անցնող գծի հետ 30° անկյուն եւ կաղմում (անկյան մեծությունը հաշվում ենք ժամացույցի սլաքի ինթացքի ուղղությամբ): ստացված անկյունը կոչվում եւ ապիմուտ: (նկ. 10):

Մեր ցանկացած բարձրության աղիմուտը վորոշելիս, մենք նկատեցինք, վոր դեպի այդ բարձրությունը տանող գծի վրա գտնվում են հողմնաղաց և թվեր: Հիմա մենք կարող ենք դեպի հողմնաղաց դնալ ցանկացած ճանապարհով և կողմնացույցը մեղայլես սկսութ:

Ջրաղացին հասնելով մենք տեսնում ենք, վոր ջրաղացի և

¹⁾ Եերկրաչափությունից հայտնի յեւ, վոր ամեն մի շրջանագիծ բաժանվում է 360 հավասար մասի կամ աստիճանի:



Նկ. 10. զիւ

104.7 բարձրության միջև տարածման և անտառ, վորի միջով առանց կողմնացուցիչ չի կարելի անցնել:

Զշտուածի մոտ նույն վայրընում ենք կողմնացուցը և պահում ս նողես, վոր C շառար և սլաքի ծայրը համատեղվեն. ցուցիչը դժում ենք 30 մ.ի վրա, կտրվածքի և նշանառության հատիկի ուղղության հայում, թե ինչ ծառ և գտնվում դիտողության գծի վրա և գնում ենք դեպի այդ ծառը և այն:

2. ՄԱՍՆԱՅԻ


Օհ տարածությունները չի կարելի իրենց բնական մեծությամբ զծաւըն թղթի վրա: Այդ պտտճառով վորեն վայրի պլանը կամ քարտեզը թղթի վրա զծվում է փոքրացրած ձևով:

Յենթաղրենք, թե մենք ուղղում ենք զծել մի շենքի հատակագիծ՝ նրա իրական չափերը փոքրացնելով 100 անդամ: Յեթե նրա յերկարությունը և լայնությունը 10-ական մետր ե, ապա 100 անդամ փոքրացնելով այդ չափերը, պլանի վրա շենքը մենք կպատկերացնենք 10 սանտիմետր յերկարությամբ և նույնքան ել լայնությամբ. այլ խոսքով՝ շենքի յուրաքանչյուր կողմի յերկարությունը պլանի վրա հավասար կլինի իրական յերկարության $1/100$ մասին:

Ուրիշ որինակ: Յենթաղրենք, թե մենք վորոշել ենք մեր պլանի վրա տարածությունները փոքրացնել 500 անդամ: Չափում ենք Հանտպարհը և տեսնում, վոր նրա յերկարությունը 100 մետր է: Ի՞նչ յերկարություն պիտի ունենա նա մեր պլանի վրա: Պարզ է՝ 1000 մետրը հավասար է 100,000 սանտիմետրի. յեթե 100,000-ը փոքրացնենք 5000 անդամ, կստանանք 20. Հետևաբար պլանի վրա ճանապարհի յերկարությունը հավասար կլինի 20 մ., իսկ մասշտաբը (այսինքն փոքրացումը) կլինի $1/5000$.

Մեր ստացած կոտորակները $1/100$, $1/5000$ կոչվում են թվային մասշտաբ: Ուրեմն թվային մասշտաբը մի կոտորակ ե, վորի համարիչը լինում է 1, իսկ հայտաբարը ցույց է տալիս թե հատակագիծի վրա յերկարության չափերը քանի անդամ են փոքրացված: Բացի դրանից, յուրաքանչյուր քարտեղի և պլանի ներքեւ մասում մասշտաբը պատկերացված է լինում նաև զծի ձևով.

Դծային մասշտաբը ցույց է տալիս՝ թե քարտեզի կամ պլանի վրա գծադրված ամեն մի սանտիմետրն իրականության մեջ քանի մետրի կամ կիլոմետրի յեւ հավասար։ 11-րդ նկարի վրա իրրև մասշտաբը վերցրված է 1 սմ. = 100 մ., այսինքն գծադրված՝ յուրաքանչյուր սանտիմետրը իրականության մեջ հավասար է 100 մետրի։ Դրա համապատասխան թվական մասշտաբը հավասար կլինի $\frac{1}{10'000}$ ։



Նկ. 11. Մասշտաբ. 1 մ հավասար է 100 մ.

Դծային մասշտաբը պատկերացվում է այսպես (նկ. 11) —
ա) քաշում ենք մի ուղիղ գիծ, վորի վրա գծիկներով նշանակում ենք սանտիմետրեր (4 կամ 5 սանտիմետր)։

բ) ձախից առաջին սանտիմետրի վերջում նշանակում ենք 0.

գ) գերոյից ձախ, գծի սկզբում դրվում է այն թիվը, վոր ցույց է տալիս թե գծադրված յուրաքանչյուր սանտիմետրը քանի կիլոմետրի կամ քանի մետրի յեւ հավասար։

դ) գերոյից ձախ գտնված սանտիմետրը բաժանում ենք 10 մասի՝ ավելի մանր չափերի համար։

ե) գերոյից աջ, թվերով նշանակում ենք իրական չափերը՝ 100, 200, 300, 400 մետր և այլն։


Այն սանտիմետրը, վորով մասշտաբների գծերը բաժանմունքների յեն վերածված, կոչվում է մասշտաբի հիմք։

Վերցնենք մի մասշտաբ, վորտեղ 1 սմ. = 500 մ.։ Ի՞նչ թվային մասշտաբ կունենա նա։

Պլանի վրա յեղած ամեն մի սանտիմետրն իրականում հավասար է 500 մետրի կամ 50.000 սանտիմետրի։ Կնշանակի այդ մասշտաբով գծված առարկաների չափերը մենք պետք են փոքրացնենք 50.000 անգամ։ Հետևապես թվային մասշտաբը կարտահայտվի $\frac{1}{50'000}$ կոտորակով։

Մասշտաբի հիմքը վորքան ավելի շատ մետրեր կամ կիլոմետրեր ե պարունակում (կամ վորքան մեծ ե թվական մասշտաբի հայտարարը), այնքան ավելի վորքը չափերով են պատկերացվում,

իրական մեծությունները թղթի վրա։ և ընդհակառակը վորքան մասշտաբի հիմքն ամենի քիչ մետրեր կամ կիլոմետրեր ե պարաւ-



Նկ. 12. Մասշտաբ, վերի 1 մ հավասար է 500 մ.

նակում կը մեջ (կամ վորքան վորքը և թվական մասշտաբի հայտարարը), այնքան ավելի մեծ չափերով են պատկերացվում իրական չափերը քարտեղի կամ պլանի վրա։

3. ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ ՅԵՎ ՊԼԱՆՆԵՐ


Տեղագրական պայմանների ուսումնասկրությունը շատ կարող է. բաղմաթիվ գեպքերում առանց տեղագրական պայմանների ուսումնասիրության հնարավոր չեւ վորևէ դործ սկսել տված տեղում։

Տեղերն ուսումնասիրվում են տեղագրական քարտեզներով կամ աերոպլաններից հանած տեղերի լուսանկարներով։

Տեղագրական քարտեզների և պլանների վրա մանրամասնորեն և ճշտությամբ նշանակված են լինում մեծ տարածություն բանող բոլոր առարկաները։ Փոքր տեղ բռնող առարկաներից նշանակվում են այնպիսինները, վորոնք հեռովից առանձնապես աչքի յեն ընկնում, այդպիսի առարկաները (առանձին ծառեր, ջրաղացներ, թփեր և այլն) մեղ ողնում են հեշտությամբ պատկերացնել մեր տեղը, այսինքն քարտեզին նայելով, հասկանալ թե մենք վորտեղ


Ենք դանվում և թե չըջապատռում գտնվող մյուս կետերը, իրերը և
այլն մեր վերաբերմամբ ինչպես են դասավորված :

Տեղադրական քարտեզները կազմվում են գլխավորապես ռադարական նպատակների համար։ Իրազմական տեղադրական քարտեզներ կազմելիս մեծ ուշադրություն են դարձնում գլխավորապես




Նկ. 13. Մասշտարային պայմանական
թշնթեր.

այն կեետրի նշանակման վրա, վորոնք կարող են ոգնել կամ խանգարել զորամասներին՝ նրանց շարժողությունների, կռվի, դիտողությունների ժամանակ, ինչպես որինակ՝ բլուրներ, ձորեր, փոսեր, ճանապարհներ, անտառներ, թփեր, գետեր, ճահիճներ.



Քարտեղները և պլանները կարդալու համար անհրաժեշտ ե
յուրացնել այդ նշանները :



Նկ. 15. Պայմանական թշնամություններ չըային տարածություններ թշնամություն համար.


Մեծ տարբածություն բռնող՝ տեղական առարկաները տեղա-
դրական քարտեղների վրա մասշտարով են նշանակում։ Քարտեղի
կամ պլանի վրա նշանակում են այդ առարկայի բանած տեղի ճիշտ
ձևը, խել այդ տարբածության ներսը լցնում առարկայի, որինակ
անտառի, մարզագետնի, ճահճի—պայմանական նշանով։ Այդպի-
սի պայմանական նշանները կոչվում են ուրիշագծային պայմանա-
կան նշաններ (նկ. 13). Պա ցույց ե տալիս, վոր տեղական առար-
կայի բոնած տեղի ձևն ու մեծությունը մասշտարով են վերցրված
և համապատասխանում են առարկայի մեծությանը։

Տեղադրական քարտեզների վրա նշանակվում են և այնպիսի առարկաներ, վորոնք մասշտաբով դժվար ե գծագրել, բայց վորոնց նշանակումն անհրաժեշտ է:

Որինակ՝ չի կարելի $\frac{1}{10,000}$ մասշտաբով գծել այն ջրաղացը, վորի լայնությունն ու յերկարությունը հավասար են 5-ական մետրի, քանի վոր քարտեզի վրա նրա լայնությունը և յերկարությունը հավասար կլինելին 5-ական միլիմետրի. այդպիսի մեծություն ունեցող քառակուսին չի հաջողվում պարզ գծագրել քարտեղի վրա: Մինչդեռ այդ ջրաղացը կարեոր և նշանակել, վորով հետեւ նա շատ հարմար ե ըրչապատը դիտելու համար:

Այդպիսի կարեոր մանր առարկաներ շատ են պատճենում. ընդունված ե այդպիսի առարկաները նշանակել այնպիսի նշաններով, վորոնք իրենց արտաքին դիրքով հիշեցնում են այդ նույն առարկաները:

Զրերը և նրանց վրայի կառուցվածքները նշանակվում են 15-րդ նկարում ցույց տված ձևով, իսկ ճանապարհներն այնպես, ինչպես ցույց ե տալիս 16-րդ նկարը.




Կ. 16 Պայմանական նշաններ՝ նախապարհներ նշանակելու համար:

4. ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒՄՆԵՐ ԱԶԲԱԿԱՓՈՎ.

Քայլերի մասշտաբը: Աչքաշափով հատակագծեր, քարտեզներ գծագրելու համար անհրաժեշտ է ունենալ տեղաչափի, կողման-

ցույց, մատիտ, նշանառության քանոն, ռետին, սովորական քորցներ և նշանաձողեր: Տարածությունները չափում են քայլերով կամ վորոշում են աչքաշափով: Բայց բոլորի քայլերը միենույն մեծությունը չունեն. քայլերով չափելիս անհրաժեշտ է իմանալ իր մեկ քայլի մեծությունը և կարողանալ ոգտվել քայլերի մասշտարից: Դրա համար մենք այսպես ենք վարվում. յերկողաչափով չափում ենք 50 մետր տարածություն և նշաններ դնում մի քանի անդամ (վոչ պակաս յերկու անդամից) այդ տարածությունը չափում ենք քայլերով, հաշվելով յուրաքանչյուր դույզ քայլը մեկ քայլ (հաշվում ենք յուրաքանչյուր ծախ քայլը, չհաշվելով այդը): Յենթադրենք, թե մեկ անդամ հաշվեցէնք ու դուրս յեկավ 39 դույզ քայլ, մյուս անդամ 41 դույզ. Կնշանակի միջին հաշվում այդ տարածությունը պետք ե հաշվել 40 դույզ քայլ:

Յենթադրենք, թե մեր գծագրման մասշտաբի յուրաքանչյուր սանտիմետրը հավասար է 200 մետրի: Մեր չափած 50 մետր տարածությունը դուրս յեկավ 40 դույզ քայլ. 200 մետրը 50-ից մեծ ե 4 անդամ. ուրեմն 200 մետրը հավասար կլինի 160 դույզ քայլի: Կնշանակի մեր մասշտաբի ամեն մի սանտիմետրը, հավասար կլինի 160 դույզ քայլի: Բայց ալելի հարմար կլինի 160-ի փոխարեն կլոր թիվ վերցնել, որինակ 200: իհարկե, այժմ կիրիվի մասշտաբի հիմքը: 160 դույզ քայլը հավասար է մասշտաբի 1 սանտիմետրին. նոր հիմքը մեծ կլինի 1 սանտիմետրից այնքան անդամ, վորքան անդամ 200-ը մեծ ե 160-ից, այսինքն 200:160=1.25 անդամ: Պարզ է, վոր մեր մասշտաբի հիմքը հավասար կլինի 1.25 ոմ. (տես նկ. 17):



Նկ. 17 Քայլերի մասշտաբ (200 դույզ քայլ հավասար է 1.25 ոմ)

Պլանշետ: Աչքաշափով ընդորինակելիս գործ են ածում կամ թղթապանակ (սալարաթղթից), կամ բարակ տախտակ, վորոնց վրա ամրացնում են գծագրելու թուղթը: Տախտակի մի անկյունում անշարժ կերպով ամրացվում է կողմնացույցը. ցածրում նշանակում են քայլերի մասշտաբը. այդպիսի ձևով սարքած տախտակը կոչվում է պլանշետ:

Աչքաչափով ընդորինակման մեկ որինակ: Յենթաղբենք, թե հարկավոր և ճանապարհի մի մասի և նրա չուրջը գտնվող առարկաների պլանը գծել (նկ. 19): Ճանապարհի վրա մի հարթ տեղ միաժամցից 300 քայլ հեռավորությամբ յերկու կետ ենք նշում—Ա. և Բ: Վորպեսզի չսխալվենք, այդ հեռավորությունը 2—3 անդամ չափում ենք: Պլանչետի ներքեւի ծախ անկյունում նշանակում ենք Ա. կետը: Կանդնելով Ա. կետում, պլանչետը հարմարեցնում ենք այնպես, վոր սլաքի հյուսիսային ծայրը ուղղված լինի մեր ապագա պլանի հյուսիսային կողմը (վորը թղթի վրա նշանակում ենք ոլաքով): Դրանից հետո Ա. կետում մի քորոց ենք տնկում և նշանառության քանոնը դնում կիս նրա մոտ (կարելի յե վերցնել և սովորական քանոն, վորի մեջտեղը նախապես քորոցներ են տնկած): ապա դդուշությամբ աշխատելով, վոր կողմնացույցի ոլաքի հյուսիսային ծայրը չհեռանա կետից, պլանչետը պահում ենք մեր աչքի բարձրության վրա և քանոնը չհեռացնելով քորոցից՝ պտտում այնքան մինչև վոր նրա մյուս ծայրը կուղղվի:




Նկ. 18 Նշանառության համար.

գեղի Բ կետը (նկ. 18): Զախ ձեռքով բանելով քանոնը, վորպեսզի նա չշարժվի տեղից, պլանչետը նորից զգուշությամբ իջեցնում ենք և քորոցից գեղի Բ կետը դիմ քաշում, այսինքն Ա. և Բ կետերը միացնում իրար հետ. առաջ Ա. կետից մասշտաբով հաշվելով 300 քայլ, նշանակում ենք Բ կետի տեղը գծի վրա: Նույն յեղանակով պլանչետի վրա նշանակում ենք ծառի, տան և բակի անկյունների գետափին յեղած թիւերի և այլ առարկաների ուղղությունը (բայց գծերի վրա կետերի հեռավորությունը դեռ ևս չենք նշանակում, քանի վոր այդ հեռավորությունը մեղ հայտնի չե):

Դրանից հետո մենք տեղափոխվում ենք Բ կետը: Այսուղ այլևս կարիք չկա կողմնացույցի ողնության դիմել: Պլանչետի դիրք տալու համար, բարկան և Բ կետում մի քորոց ամրացնել

և պլանչետն այնպես պահել, վոր նա Ա. կետի քորոցը ընդունի ճանապարհի վրա նշանակած Ա. կետի ուղղությունը: Յեթե Ա. և Բ կետերի տեղում աչքի ընկնող առարկաներ չկան (որ քար, սյուներ և այլն), ապա այդ կետերում պետք են նշանաձողեր տնկել (2—3 մետր): Գտնում ենք կաղնու ուղղությունը և այդ ուղղությունը ցույց տվող գ կետը նշանակում պլանչետի վրա: Ա. և Բ կետերից քաշած նշանագծերի հատման կետը վորոշում են կաղնու դիրքը պլանչետի վրա:



Նկ. 19. Աչքաչափով ընդորինակում.

Այդպիսով, գծերի հատման յեղանակով մենք վորոշում ենք մնայած առարկաների տեղը մեր պլանչետի վրա:

Յեթե յերկու գեղպում ել ուղղությունները ճիշտ են վորոշված և ճիշտ ել նշանակված պլանչետի վրա, ապա քայլերով ստուդիով առարկաների հեռավորությունը, մենք կտեսնենք, վոր պլանչետի վրա նրանց տեղերը ըստ մասշտաբի միանգամայն ճիշտ են նշանակված:

5. ՔԱՐՏԵԶԻ ԱՍՏԻՃԱՆՆԱՅԻՆՑԻ

Տեղի աշխարհագրական լայնության վրաշումը: Հասարակածի և բևեռների միջև յեղած տարածությունը հավասար և ըստ

ջադի ¼-ին կամ 90°: Յուրաքանչյուր աստիճանից հետո կարելի յե հասարակածին դուզահեռ չըջադիծ անցկացնել (դուզահեռական):

Հարմարության համար դլորումի և քարտեղի վրա զուդահեռականներն անց են կացլում վոչ թե բոլոր, այլ յուրաքանչյուր 10°-ից, կամ 15°-ից, կամ 30°-ից հետո և այլն: Զուզահեռականների հեռավորությունը հաշվում են հասարակածից: Հասարակածի դիմաց դրվում ե 0°, իսկ յուրաքանչյուր զուդահեռականի դիմաց՝ նրա հեռավորության աստիճանը հասարակածից: Հեռավորության աստիճանները նշանակվում են քարտեղի աջ և ձախ կողմերում:

Տեղի հեռավորությունը հասարակածից կոչվում է տեղի աշխարհագրական լայնություն: Լայնությունը նշանակվում է աստիճաններով: Լայնությունը լինում է հյուսիսային կամ հարավային, նայած թե տրված կետը հասարակածից դեպի հյուսիս և դանդում, թե դեպի հարավ: Հյուսիսային լայնությունը նշանակում են «Հ. լ.», իսկ հարավայինը՝ «Հ. ր. լ.» տառերով: Որինակ «կ» կետի աշխարհագրական լայնությունը կնշանակենք այսպես՝ 60° հ. լ. (նկ. 20):

Նկարի վրա (նկ. 20) վարոշեցեք Ա, Բ, Գ, Դ կետերի աշխարհագրական լայնությունը:

Տեղի աշխարհագրական յերկայնության վարոշումը: Զուզահեռականների միջոցով կարող ենք վորոշել, թե տվյալ կետը հասարակածից ինչ հեռավորության վրա յե գտնվում, բայց չենք կարող վորոշել, թե այդ կետը զուզահեռականի վոր կետում և դանդում: Դրա համար հարկավոր ե քաշել այնպիսի գծեր, վորոնք բանական են անցնում: Այդպիսի գծերը կոչվում են միջորեականներ: Միջորեական և զուզահեռական գծերի հատման կետով վորոշում ե տվյալ վայրի տեղը յերկրագնդի վրա:

Միջորեականներից մեկը ընդունված ե վորպես զլխավոր: Ներկայումս վորպես միջորեական բնդունդած ե Գրինիչի միջորեականը, վորն անցնում ե Լոնդոնի Գրինիչ արվարձանի վրայով: Միջորեականների հեռավորությունը հայտնած են գյուղակոր: Տիզորեականից դեպի արևելք և դեպի արևմուտք: Տիզորեականից:

բությունը դլխավոր միջորեականից՝ կոչվում է Տեղի աշխարհագրական յերկայնություն:

Յերկայնությունը կոչվում է արևելյան կամ արևմտյան, նայած թե տվյալ կետը (կամ տվյալ միջորեականը) գլխավոր միջորեականից արևելք ե գանձում, թե արևմուտք: Արեւյան յերկայնությունը նշանակում ենք «ա. յ.րկ.», իսկ արևմտյանը՝ «ար. յ.րկ.» տառերով: Որինակ՝ կ կետի աշխարհագրական յերկայնությունը 20° ալ. յ.րկ.: (21-րդ նկարի վրա վորոշեցենք Ա, Բ, Գ, Դ, Ե, Ֆ, Դ, Ե կետերի աշխարհագրական յերկայնությունը:

Հասարակածը, զուզահեռականները և միջորեականները միասին կազմում են աստիճանացանց:

Աստիճանացանցը կարող է գործադրվել իրրե մասշտաբ՝ տարածությունները մոտավորապես հաշվելու համար: Լայնության աստիճաններն ամեն տեղ միենույն մեծությունն ունին (111 կմ). յերկայնության աստիճանները վորքան մոտ են բևեռներին, այնքան փոքր են:


Տեղական և գոտային ժամանակ: Յուրաքանչյուր տվյալ վայրկայնում արեւը լուսավորում է յերկրագնդի մի կետը միայն: Յերբ մեզ մոտ ցերեկվա ժամի 12-ն ե, յերկրագնդի հակադիր կողմում, մեզնից մեկ կիսաշրջան (կամ 180°) հեռավորության վրա, գիշերվա ժամի 12-ը կինի: Ուրեմն 180° հեռավորության վրա 12 ժամի տարրերություն կա. 10° հեռավորության վրա տարրերությունը կինի 4 րոպէ: Գիտենալով այդ մենք հետությամբ կարող ենք դանել ցանկացած տեղի ժամանակը: Վերցնենք, որինակ՝ Լենինգրադը և Յերևանը: Լենինգրադը գտնվում է արևելյան 30-րդ,

1) Յերկայնության 10-ի մեծությունը հասարակածից զանտղան հեռավորության վրա:


Հեռավորություն հասարակածից	Յերկայնության 10-ի մեծությունը կիլո- աստիճաններով	Հեռավորությունը հասարակածից աստիճաններով	Յերկայնության 10-ի մեծությունը կիլոմետրով
0	111	60	56
15	108	75	59
30	96	80	50
45	64	90	0

Յերեանը արևելյան մոտ 45°-րդ միջորեցականի վրա, նրանց միջև յեղած տարածությունը հավասար է 15°-ի. Լենինգրադի և Յերեանի ժամանակների տարբերությունը հավասար կլինի 4 րոպե $\times 15 = 60$ րոպե կամ մոտ 1 ժամ, ավելի ճիշտ՝ 58 րոպե։ Քարտեզի վրա տեսնում ենք, վոր Յերեանը Լենինգրադից արևելք և գտնվում։ Կնշանակի Յերեանի ժամանակը առաջ կլինի, այսինքն 1 ժամով ամենի կլինի Լենինգրադի ժամանակից։

Լենինգրադում ժամը 12-ն է։ Ժամի քանի՞ սր կլինի Նոր Որդեանում (Հյուսիսային Ամերիկա)։ Լենինգրադը գտնվում է արևելյան 30-րդ, իսկ Նոր Որդեանը արևմտյան 90-րդ միջորեցականի վրա։ Նրանց միջև յեղած տարածությունը ուրեմն հավասար է ինի 120°. 4 րոպե $\times 120 = 480$ րոպե։ Կամ 8 ժամ։ Նոր Որդեանը և Լենինգրադից արևմուտք և գտնվում, կնշանակի Նոր Որդեանում ժամանակը 8 ժամով յև կլինի (այսինքն պահաս կլինի) Լենինգրադի ժամանակից։




Նկ. 20 Զաւրախուականների սենտամ



Նկ. 21. Միջորդական սրիմանի

Արեգակի ընթացքով հաշվում են տեղական ժամանակը։ Բայց նաև իր և յերկաթուղիների յերթեւկության ժամերը վորոշելու համար տեղական ժամանակը մեծ անհարժարություններ և ստեղծում, քանի վոր տարբեր կայարանների և նախահանգիստանների տեղական ժամանակը տարբեր ել լինում։ Այդ գժվարություններից ազատվելու համար միջազգային համաձայնությունը ամբողջ յերկրադունդը միջորեցականներով բաժանված է 24 զոտու, վորոնցից յուրաքանչյուրը հավասար է 15°-ի։ Յուրաքանչյուր զոտու առաջնորդվում են այլ զոտու միջն միջորեցականի ժամանակով։

Այն զոտին, վորաեղ զոտնվում է Գրինիչի միջորեցականը, համարվում է 0 (զերո) զոտի։ Նրանից արևելք զտնվող հետեւյալ դատին—առաջին զոտի, հետեւյալը—յերկրորդ և այլն։ Զերո զոտու ամբողջ տարածության վրա առաջնորդվում են Գրինիչի ժամանակով։ Յուրաքանչյուրհետեւյալ զոտում ժամանակը մեկ ժամով ամեն էլ և նախորդ զոտուց։



Նկ. 22. Դաշտային ժամանակի քարտեզը

Ժամային դոտիների սիստեմով հաշվվող ժամանակը կոչվում է միջազգային դոտային ժամանակ։ Խորհրդային Միությունը բանում ե այդպիսի 11 զոտի (առա զոտային ժամանակի քարտեզ)։

Ի՞նչպես են վարոշում տեղի աշխարհագրական լայնությունը և յերկայնությունը։ Այժմ տեսնենք թե ինչպես են վարոշում աշխարհագրական լայնությունը և յերկայնությունը վոչ թե քարտեզի վրա, այլ իրականության մեջ—ցանկացած տեղում։ Հաճախ այդ չափաղանց անհարժեշտ ել լինում։ Որինակ՝ նավը փոթորկի յե հանդիպել և կորցրել ե իր ճանապարհը անհարժեշտ ե վորոշել, թե նավը ովկիանոսի մեջ ինչ տեղ ե գտնվում, ուրիշ խոսքով առած՝ նա աշխարհագրական վոր լայնության և յերկայնության վրա յե գտնվում։

Կամ ուրիշ սրբինակ. ճանապարհորդը ցանկանում է քարտեղի վրա նշանակել քիչ հետաղոտած մի վայր: Նա պետք է քարտեղի վրա անցկացնի լճերը, գետերի ուղղությունները, լեռնաշղթաները: Դրա համար նա պետք է իմանա այդ կետերի աշխարհագրական լայնությունը և յերկարությունը:

«Եղի աշխարհագրական լայնությունը մենք կարող ենք վորոշել բնեուային աստղի բարձրությամբ: Հյուսիսային բնեուում ընեացյին աստղը միշտ կանգնած է լինում մարդու դլխավերելու դեմքում: Հետևապես Հյուսիսային բնեուում նա հորիզոնի վրա կերևա 90° բարձրության վրա:»

Հասարակածի վրայից նա յերեւում է ուղիղ հորիզոնի վրա: 60-րդ զուգահեռականից նա հորիզոնի վրա յերեւում է 60° բարձր:

Հյուսիսային բնեուի աշխարհագրական լայնությունը կլինի—Հս. լ. 90°, Հյուսիսային 60-րդ զուգահեռականինը—Հս. լ. 60°, իսկ հասարակածինը—0°:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր յուրաքանչյուր վայրի աշխարհագրական լայնությունը հավասար է այն անկյան մեծության, ինչ անկյունով բնեուային աստղը մեզ յերեւում է հորիզոնի վրա:

Հետեաբար, Հյուսիսային կիսագնդում յուրաքանչյուր տեղի աշխարհագրական լայնությունը կարելի յէ վորոշել բնեուային աստղի բարձրությամբ:

Բնեուային աստղի բարձրությունը մենք կարող ենք վորոշել ուղղորդ ունեցող անկյունաչափով: Դրա համար մենք անկյունաչափը գնում ենք բնեուային աստղի ուղղությամբ և ապա նայում ուղղորդին. ուղղորդի շեղում 90°-ից ցույց է տալիս աստղի բարձրությունը (ինչպես այդ յերեւում է նկարի վրա). յեթե բնեուային աստղը յերեւում է 34° անկյունով, ապա տեղի աշխարհագրական լայնությունը կլինի Հս. լ. 34°.¹⁾

Բնեուային աստղը Մոսկվայում յերեւում է 56° անկյունով, Յերևանում 40°, Լինինդրադում—66°: Քարտեղի վրա դաշտք այդ քաղաքների աշխարհագրական լայնությունը:


¹⁾ Տեղի ազիտիքական լայնությունը կարելի յէ վորոշել նաև արեակի կամ սանկցած աստղի բարձրությամբ, ոդավելով հատակ աղյուսակից

Աշխարհագրական յերկայնությունը վորոշում էն ժամանակը. ների տարրերությամբ:

Դրա համար անհրաժեշտ է սւնենալ այսպիսի ճիշտ ժամացույց (քրոնոմետր), վորի ժամերը համապատասխան լինեն կամ 0 միջորեյականի, կամ այն քաղաքի ժամանակին, վորտեղից ճանապարհորդը դուրս է յեկել:

Յերբ նա ցանկանում է վորոշել վորեւ տեղի յերկայնությունը, նա իր ժամացույցի (քրոնոմետրի) ցուցմունքը համեմատում է տեղական ժամացույցի ցուցմունքի հետ: Յեթե ճանապարհորդի ժամացույցը 3 ժամով առաջ է տեղական ժամանակից, նշանակում է, նա իր դուրս յեկած տեղից, կամ այն միջորեյականից, վորի ժամանակով աշխատում է նրա ժամացույցը, 45° դեպի արևմուտք և անցել (վորովհետև յերկարագուն իր առանցքի շուրջը մեկ ժամում շրջվում է 15°):

ՅԵՊԻ ԲԵՎԵՇ
ԱՍԴՀ.



Կա. 23. Բարձրության վորոշումն անկյունաչափ:

Յեթե նրա ժամացույցը աշխատելիս լիներ 0 միջորեյականի ժամանակով, նա պիտի յեղակացներ, վոր գտնվում է Ամ. յեր. 45° վրա:

Ենթադրենք, թե մենք ուզում ենք վորոշել մեր տեղի աշխար-

Հաղբական յերկայնությունը . ուաղիոյով տեղեկանում ենք , վոր Անդրադադում առավատայան ժամի 15-6 ե . նույն ժամին մեղ մոտ թող լինի ցերեկվա ժամի 11 . դրանից յեզրակացնում ենք , վոր մենք ՀՀ ՀՆՊՀ ՀՀ 15^o դեպի արևելք ենք գտնվում : Լենինդրադը Բասմաւմ ե ԱԾ . յեր . 30^o վրա . պարզ ե , վոր մենք գտնվում ենք ԱԾ . յեր . 15^o-ի վրա :

III. ԼԻԹՈՍՖԵՐԱ

1. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Յերկրագնդի մակերեսույթը ծածկված ե ամուր քարե կեղավ , վորը կոչվում է լիթոսֆերա : Միջին հաշվով լիթոսֆերայի հաստությունը 100 կիլոմետր ե :

Լիթոսֆերայի տակ գտնվում ե զանդված , վորը կոչվում ե Մազմա : Յենթադրվում ե , վոր մազմայի շերտի հաստությունը 1000 կիլոմետրից ավելի յե :

Մազմայի տակ գտնվում ե յերկրի միջուկը :

Միջուկի տեսակարար կը ու ծանրությունը և յերկրագնդի մազնիսական հատկությունները յենթադրել են տալիս , վոր միջուկը բաղկացած ե յերկաթից , նիկելից և այլ մետազներից : Միջուկի մեջ յեղած մետազները մասամբ խառնվում են մազմայի հետ , իսկ մազման իր հերթին անցնելով կեղեկի ճեղքվածքով՝ տարածվում ե նրա մեջ . այսուեղ նա դանդաղորեն սառչում ե , առաջացնելով «յերակներ» և արտադրելով դանաղան մետազներ ու հանքեր : Վորքան շատ են մազմային «յերակներ» , այնքան ել շատ են հանքեր . հանածոների ամենահարուստ պաշարները լիթոսֆերայի ստորին շերտերում են գտնվում : Յերկրագնդի մակերեսույթի մեծագույն մասը ջրով ե ծածկված : Ցամաքն ավելի քիչ տարածություն ե բոնում և բաժանված ե մասերի , վորոնք շրջապատված են սվիբանուներով և ծովերով . ցամաքի մասերը դանաղան մեծություն ունեն : Մեծ ցամաքները կոչվում են աշխարհամասեր , իսկ մանրերը — կղզիներ :

Գետերը , լճերը , ճահիճները , ստորերկրյա ջրերը և սաղադաշտերը կազմում են ջրային խիտ ցանց :

Այդպիսով ովկիանոսները , ծովերը և ցամաքների վրա տա-

րածված ջրային ցանցը յերկրագնդի լիթոսֆերան ծածկում են համարյա մի անընդհատ ջրային կեղևով կամ հիդրոսֆերայով :

Յերկրագնդը շրջապատող առաջին շերտը—ողի շերտն ե , վոր կոչվում է մթնոլորտ (ատմոսֆերա) : Մթնոլորտի հաստությունը 500 կիլոմետրի յե հասնում :

2. ՅԱՄԱՔԻ ՅԵՎ ԶՐԻ ԲՈՆԱՇ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ

Ցամաքն ու ջուրը յերկրագնդի վրա հավասարապես չեն բաշխված :

Զրի մակերեսույթը մոտ յերկու և կես անգամ մեծ ե ցամաքի մակերեսույթից : Յերկրագնդի մակերեսույթը հավասար է 510 միլ . քառ . կմ . , ցամաքի մակերեսույթը հավասար է 149 միլ . քառ . կմ . , ըրի մակերեսույթը հավասար է 361 միլ . քառ . կմ . :

Ցամաքը բաղկացած ե 6 աշխարհամասերից՝ Ասիա , Ամերիկա , Աֆրիկա , Անտարկտիդա , Յելլոպան և Ավստրալիա :

Ասիա ի	մակերեսույթը	հավասար	և	442	միլ.	կառ.	կմ.
Ամերիկայի	»	»	»	42,8	»	»	»
Աֆրիկայի	»	»	»	30	»	»	»
Անտրակտիդայի	»	»	»	14	»	»	»
Յելլոպանի	»	»	»	10	»	»	»
Ավստրալիայի (իր շրջապատող							
կղզիների հետ միասին	»	»	»	7,6	»	»	»

Ցամաքները շրջապատող ջրային հոկայական տարածությունը բաժանվում է յերեք ովկիանոսի . Մեծ կամ խաղաղ , Ետլանույան և Հնդկական : Մեծ ովկիանոսն այլպես ե կոչվում իր մեծության պատճառով , իսկ Խաղաղ անունը նա ստացել ե այն պատճառով , վոր Մազմելլանի եքսպեդիցիան առաջին շուրջներկրյա ճանապարհ—Հորդության ընթացքում պատահարար վոչ մի ալեկոծության չի հանդիպել :

Մեծ ովկիանոսի տարածությունը հավասար է 180 միլ . քառ . կմ . : Ալանտյան ովկիանոսի տարածությունը հավասար է 105 միլ . քառ . կմ . : Հնդկական ովկիանոսի տարածությունը հավասար է 75 միլ քառ . կմ . :

ՅԵՐԿՐԻ ԿԵՂԵՎԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ինչպես մենք արդեն գիտենք, յերկրի կեղեւ միջին հաշվով 100 կմ. հաստություն ունի: Ամենախոր անցքերը 2—2,5 կիլոմետրեց չեն անցնում:

Կարելի յեր յենթաղել, վոր 2,5 կմ. խորությունից ցած յերկրի կեղեւի կազմությունը չի կարող մեզ հայտնի լինել: Բայց իրու այդպես չե: Մարդիկ միջոցներ են գտել լիթոսֆերայի կազմությունն ուսումնասիրել մեծ խորությունների մեջ:

Վերցնենք մի որինակ (նկ. 24): Յենթաղրենք թե մեր առակա մի տարածություն, վորտեղ լեռներն ուժեղ քայլայման են յենթարկված: Պատկերին նայելով տեսնում ենք, վոր կրաքարի չերտերը հարթավայրում 4—5 կմ. խորության վրա յեն դանվում: Իսկ գաղաթի մոտ միենանույն չերտերը յերկրի յերեսն են դուրս դալիս: Դոլոմետի չերտերը, վոր հարթավայրում 6—7 կմ. խորության մեջ են գտնվում՝ սարերում դուրս են գալիս յերկրի մակերևույթը: Վորքան հին են լեռները և վորքան ավելի քայլայմած, լիթոսփերայի ստորին չերտերն այնքան ավելի մոտ են լինում յերկրի մակերեսույթին: Այդ յերեռույթը մեղ հնարավորությունն են տալիս, հին քայլայմած լեռների շրջանում 1—2 կմ. խորության անցքեր փորելով՝ պատկերացում կազմել տասնյակ կիլոմետր խորության մեջ գտնվող չերտերի կազմության մասին: Մարդիկ շատ լավ են ուսումնասիրել լեռները՝ ոգտակար հանածոներ վորոնելու նպատակով: Այդ ուսումնասիրությունների շոր հիգ մենք բաժական պարզ պատկերացում ունենք յերկրի կեղեւ մակարդության մասին:


Փուլսը լեռնային տեսակների կուտակումը ջրամբարների համարականությունը:

Կավը, մանր և խոշոր ավազը շատ հեշտությամբ են վորովում ջրի հոսանքով և տարվում դեպի ցած:

Արագահոռ գետերը տեղափոխում են վոչ միայն ավազ ու խճաքար, այլև քարեր: Եթեր գետի հոսանքը դանդաղում է, փուլս տեսակների ավելի մեծ կտորները տակն են նստում: Տեսակների ավելի մանր կտորները, խոշոր և մանր ավաղը, տիղմը, նստածքներ առաջացնում են կամ ավելի ցած հոսանքներում, վորտեղ գետի լուսացքն ավելի դանդաղ ել լինում կամ ջրամբարներում, ու

թոսանքը բոլորովին դադարում է: Ավազը, կավը և նույնիսկ ամենամանր տիղմը ջրամբարների հատակին նստում են կանոնավոր և մեծ մասամբ հորիզոնական շերտերով:

Նստվածքային տեսակները: Հարթություններում լիթոսփերայի յերեսը սովորաբար բաղկացած է լինում փուլսը տեսակներից՝ կավից, ավազից: Այդ տեսակները տարածված են մեծ մասամբ հաստ կամ բարակ շերտերով: Դրանք ջրից են նստել: Ցերեմն նըանք ողից են նստում, որինակ, անապատներում, վորտեղ մանք թյունն ուսումնասիրել մեծ խորությունների մեջ:



Նկ. 24. Յերկրային շերտերի կտրվածք հայբայզող լեռների շրջանում:

ավազը և փոշին այդպիսի շերտեր են կազմում: Ջրի կամ ողի նստվածքներից առաջացած տեսակները կոչվում են նստվածքային տեսակներ:


Ժամանակի ընթացքում կավի, ավազի և ուրիշ փուլսը տեսակների հին շերտերը ծածկվում են նստվածքային տեսակների նոր շերտերով: Վերին շերտերն իրենց ծանրությամբ ճնշում են դործ դնում և պնդացնում: Այդ պնդացած շերտերը խաւոնվելով վերից ծծվող ջրերի մեջ յեղած աղերի հետ՝ քարանում են և առաջանում լեռնային պինդ նստվածքային տեսակներ (քարեր): Այսպէս՝ կավից առաջանում են կավել թերթաքարեր, ավազից—ավազքարեր, ճալաքարերից—կոնդլոմերատներ (կուտակաքարեր), ծովային խեցիների կուտակումից—կրաքարեր, իսկ բույսերի մնացորդներից—քարածուխ և այլն:

Ավազքարերի և մանավանդ կավի թերթաքարերի մեջ հաճախ պատահում են տերենների, խեցիների, մանր ձկների և այլ ծովային կենդանիների մնացորդներ և հետքեր: Բոլոր այդ մնացորդները և հետքերը մի նոր առաջանույց են այն բանի, վոր ավա-

զաքարերի և թերթաքարերի շերտերն առաջացել են հուավոր անցյալում, ջրամբարների հատակում կուտակվող նստվածքներից:

Զանդվածային տեսակները: Մենք առաջինք, վոր հարթություններում յերկրի մակերեռույթը սովորաբար բաղկացած ե լինում փուլիր տեսակներից: Լեռներն ընդհակառակը, համարյաբոլոր գեղքարում բաղկացած են լինում քարե պինդ տեսակներից: Լեռների քարե տեսակները լինում են, և՛ շերտավոր, և՛ վոչ շերտավոր: Վոչ շերտավոր տեսակները սովորաբար կոչվում են զանդվածային տեսակներ:

Զանդվածային տեսակները առաջանում են հրահեղուկ զանդվածներից: Յեթե հրահեղուկ զանդվածը արագությամբ ե սառչում, առաջանում ե վոչ բյուրեղացած զանդվածային տեսակ (լավավա). իսկ յեթե նրա սառելը տեղի յե ունենում զանդաղորեն, լիթոսոֆերայի խորքերում՝ սաացվում են բյուրեղացած զանդվածային տեսակներ (դրանէտ): Բյուրեղներն առաջանում են շատ զանդաղ և շատ բարձր ճնշման տակ սառչելու դեմքում: Վորքան զանդաղ դանդաղ և սառչում, բյուրեղներն այնքան խոչոր են լինում (խոշորահատիկ դրանիտներ): Յեթե սառումը տեղի յե



Ապ. 25. Տերեվների հետեւ կալե քրքաքարերի վրա.

ունենում յերկրի կեղևի ճեղքվածքներում՝ նրա վերին շերտերում ստացվում են մանրաբյուրեղ տեսակներ, իսկ ստորին շերտերում՝ մեծաբյուրեղ տեսակներ:

Դանդաղ սառչելու դեմքում հանքերը շատ լավ են բաժանվում

զանդվածի մյուս նյութերից, իսկ արագ սառչելու դեպքում հանքեր չեն գոյանում: Դա հասկանալի յե զարձնում այն, թե ինչո՞ւ միթոսֆերայի ստորին շերտերն ավելի հարուստ են հանքերով:

4. ՅԵՐԿՐԱԳՆԻՒԻ ՆԵՐՔԻՆ ՈՒԺԵԲԸ

Յերկրի բարեխառնությունը: Յերկրի մակերեռույթի ջերմության աղբյուրը արեղակն ե: Արեգակի ջերմությունը չի կարող խոր թափանցել յերկրի մեջ: Դիտողությունները ցույց են տալիս վոր 20—30 մետր խորության մեջ բարեխառնությունը տարվա ըուլոր յեղանակներին մնում ե անփոփոխ: Բայց յեթե մենք 30 մետրից ավելի խոր անցնենք, կնկատենք, վոր յերկրի բարեխառնությունը աստիճանաբար բարձրանում ե: Հանքահորեր, տոներներ և անցքեր փորելիս յուրաքանչյուր 33 մետրի վրա բարեխառնությունը բարձրանում ե 1^o-ով: Դրանկան յենելով կարելի յե հաշվել զանդան խորությունների ջերմության աստիճանը: Այդպես, յեթե 30 մետր խորության մեջ ջերմությունը 5^o-է, 500 մետրի վրա կլինի 19—20^o, 1000 մետրի վրա—40^o և այլն: Դիտողությունները հաստատում են մեր ասածը:

Չուտովոյի նշանավոր հանքահորը, վոր Գերմանիայում փորված ամենախոր անցքերից մեկն ե, 2440 մ. խորություն ունի. Այդ անցքում 2220 մ. խորության մեջ ջերմությունը 5^o-է, 500 մետրի վրա կլինի 19—20^o, 1000 մետրի վրա—40^o և այլն: Դիտողությունները հաստատում են մեր ասածը:

Ի հարկե, բոլոր դիտողությունները վերաբերում են լիթոսֆերային վերին շերտերին միայն: Հարց ե ծաղում՝ հիմք ունեն^oք յենթաղբելու, վոր ջերմության աստիճանը դրանից հետո ևս շարունակում ե բարձրանալ: Այս, ունենք: Այդ մասին վկայում են յերկրի խորքերից բխող տաք աղբյուրները և հալիված քարեր վիժող հրաբուխների դոյությունը (հալված լսվայի բարեխառնությունը համար ե 1300—1500^o):

Ջերմության աստիճանն այդ հալված շերտից հետո ևս շարունակում ե բարձրանալ թե վոչ՝ մեղ հայտնի չե:


Յերկրագնի կեղևի և մազման: Մենք արդեն զիտենք, վոր յերկրի կեղևին ավելի թեթև ե, քան թե հրահեղուկ մագման: Նա մազմայի յերեսին լողում ե այնպես, ինչպես սառույցը ջրի յերե-

սին, վորի 6/7 մասն ընկղմված ե լինում ջրի մեջ և միայն 1/7 մասն ե դանվում ջրից բարձր :


Մոտավորապես նույն ոլատկերն ունի և յերկրի կեղեքը : Վորքան կեղեքը բարակ է, նա այնքան քիչ և դուրս դալիս մազմայի յերեսը և, ընդհակառակը, վորքան նա հաստ և այնքան ալելի շատ ե բարձրանում մազմայի յերեսը :

Այստեղից մենք կարող ենք յեղբակացնել, վոր լեռների և բարձրավանդակների զրջանում յերկրի կեղեքը շատ հաստ է, իսկ ովկիանուների և ծովերի շրջանում շատ բարակ (նկ. 27) :

Ցամաքի դարավոր տատանումները : Լեռների քայլայումից



Նկ. 26. Սառայքը լողում և ջրի յերեսին.



Նկ. 27. Մագմայի վրա լողում և յերկրի կեղեքը.

առաջացած նյութերը՝ կալը, ավաղը, քարերը և այլն, ջրերի հոսանքի հետ տարվում են դեպի ցածր տեղեր :

Քայլայման և տեղակոխման այդ պրոցեսը տեղի յե ունենում անընդհատ : Դրա շնորհիվ, հաղարավոր դարերի ընթացքում, լեռներն իջնում, ցածրանում են և նրանց ծանրությունը պակասում է : Թեթևանալով, լեռնային այդ տարածությունները դանդաղորեն վեր են բարձրանում մազմայի միջից :

Բոլորովին այլ բան ե կատարվում յերկրի ցածր տեղերում : Այդ տեղերում, կալի, ավաղի և այլ տեսակների կուտակումից ավելանում ե նրանց ծանրությունը և դրա հետևանքով նրանք սկսում են դանդաղորեն սուզվել մազմայի մեջ :

Արենինյան թերակղում, Նեսավոր քաղաքի մոտ մի հին այլերակ տաճար կա . այդ տաճարը շինված ե յեղել ծովի ափին ավելի քան 2000 տարի առաջ : Հետադայում ծովափն ոկտել ե աստիճանաբար իջնել . 1200 տարվա ընթացքում նո իջել եր 12 մետր և առաջ ծածկվել եր ջրով, դրանից հետո ծովափը նորից ոկտել

և վեր բարձրանալ և մինչեւ որս նա բարձրացել ե 6 մետր : Տաճարի ստորին մասը ներկայում դեռևս ջրի տակ ե գտնվում :

Թե վորքան դանդաղ են կատարվում կեղեքի արդարիսի տատանումները՝ կարելի յե յեղբակացնել հետեւյալ որինակից : Ֆիննական Ծոցի ծովափնյա գրանիտե ժայռերի վրա ավելի քան 200 տարի առաջ փորվածքներ—նշաններ են արվել . նշանակում ե յուրաքանչյուր 100 տարվա ընթացքում ավել բարձրացել ե մեկ մետր միայն :

Թե ինչ հսկայական փոփոխությունների յե յենթարկվել յերկրի մակերեսույթն անցյալում, այդ յերեսում ե նստվածքային այն հսկա տարածություններից (կալճի, կրաքարի և այլն), վորոնք ծովային ծագում ունեն և ուրեմն մի ժամանակ գտնվելիս են յեղել ծովերի հատակում, իսկ ներկայում բռնում են ցամաքի մակերեսույթի 2/3 մասից ավելին :

Հրաբխականություն : Հրաբխային կոչվում են այն լեռները, վորոնք շիկացած դադեր, քարեր և հրահեղուկ դանդակներ—լավա են արտավիժում :

Հրաբխի ժայթքման ժամանակ նյութերը դուրս են դալիս լեռն մեջ աստածացած անցքի միջով, վորի բերանը կոչվում ե խառնարան (կրատեր) :

Հրաբխային լավայի թանձրությունը զանազան ե լինում : Յեթե շատ թանձր ե, ասլա հեշտությամբ պնդանում ե խառնարանի մեջ և փակում այն : Խառնարանի մոտ հավաքվող զաղերը սարսակելի ուժով պայթեցնում են այդ սառած լավան և մանր փոշի դարձնում նրան (հրաբխային մոխիր) :

Պայթյունների հետեանքով դուրս են նետվում նաև լավայի մեծ կտորներ (հրաբխային ոռումքեր) :

Յեթե լավան հեղուկ դրության մեջ ե, նա դուրս ե թափվում առանց պայթյունների և արագությամբ ցած հոսում լեռան լանջերով : Թե՛ ժայթքման ձեզ և թե՛ հրաբխի արտաքին տեսքը լավային վիճակից ե կախված : Յեթե հրաբռւսը պայթեցնում ե սառած լավան և քար ու մոխիր են ժայթքում, այդ դեպքում հրաբխի դարձնությունը վերեխց աղմած ավաղաթմբերի մեջ ե ստանում . յեթե հրաբռւսը հեղուկ լավա յե արտավիժում՝ նրա լանջերը ծածկվում են լավայի հեղեղներով . այս դեպքում լանջերն ավելի քիչ թեքու-

թյուն են ունենաւմ, իսկ գաղաքը հեռվից ավելի տափակ է յերբում:

Փայթքման ժամանակ հրաբուխը սարսափելի տեսաբան և ներկայացնում: Խառնարանի վերեց չիկացած դաղերից, դորոշեներից և հրաբիսային մոխրի ամսերից մի վիթխարի սյուն է գոյանում, մոխրի հետ միասին դուրս են նետվում զանազան մեծության քարեր, գեանի տակից լսվում է վորոտ ու դղրդոց: Հաճախ հրաբիս ամպեր են կուտակվում. սկսվում է վարար ուժեղ անձրեւ մոխրը խառնվելով անձրեւ հետ թափլում և գետին, վորպես առաջ ցեխ: Դեպքեր են յեղել, յերբ ամրող քաղաքներ ծածկվել են մոխրով, իսկ վերեկց լավայով: Իրեն որինակ կարելի յէ հիշել Պոմպեա, Հերքուրանում և Ստարիա քաղաքները, վորոնք 2000 տարի առաջ մոխրի և լավայի տակ են ծածկվել: Ներկայումս նրանց ավերակները պեղումներով բացված են լավայի տակից. նրանք Իտալիայում են դանակում—Նեապոլի մոտ (Ալենինյան թերակղղումը): 1902 թվին Ամերիկայում հրաբիսային վիթումներից վոչընչացակ Սան-Գեյնը քաղաքը, վոր 40 հաղարից ավել բնակելուն են:

Մեզ մոտ շատ հրաբուխներ կան կամչատկայում (30-ից ավել). նրանցից ամենամեծը Կլյուչևսկայա-սովկա հրաբուխն է 4816 մ. բարձրությամբ. սա աշխարհիս ամենաբարձր հրաբուխներից մեկն է:

Հրաբիսից արտավիժմած լավան շատ դանդաղ և սառչում: Տեղեր կան, վոր հաղարտիքը տարիներ առաջ արտավիժմած լավայի մակերեւութը արդեն սառել, ամրացել և, բայց նրա ճեղքերից գոլորշու և յեռացող ջրերի սուներ են ժայթքում (գեղեր), կամ տաք աղբյուրներ են բխում: Այդպիսի աղբյուրներ շատ կան կամչատկայում:

Բացի գործող հրաբուխներից կան և շատ հանդած հրաբուխներ¹⁾: Այդպիսի հրաբուխներ կան թե կովկասում, մանավանդ Հայաստանում և թե Անդրբայկալյան յերկրում: Որինակ՝ Արագածը հանդած հրաբուխ է:


Լեռնակազմություն: Տեղ-տեղ յերկրի կեղեւը յենթարկվում

1) Հանդած համարվուծ են այն հրաբուխները, վարոնք վաղուց շեն դորոշում հաւաքանի, են գեղքեր, յերբ հանդած համարվող հրաբուխները նույնից սկսել են գործել:

և չափաղանց խոշոր վորփոխությունների. կեղեւի շերտերը ծռմրութում, ծալքեր են առաջանում և, վերից վար նեղվածքներով, բաժանվում են մասերի, վորոնք տեղաշարժման յենթարկվելով յերկրի մակերեւութիւնի վրա խոշոր անհարթություններ են առաջացնում:

Լեռներն առաջանում են նման տեղաշարժերից:

Լեռնոտ տեղերում, քարե տեսակների շերտերն այլ կերպ ևն դասավորված, քան հարթություններում: Լեռներում նրանք մեծ մասամբ զանազան ձևի ու մեծության ծալքեր են կազմում (նկ.)



Նկ. 28. Մալիբը.

28). տեղ-տեղ չերտերը խոր ճեղքվածքներով մասերի յին բաժանված, իսկ մասերն այդ ճեղքվածքների զծով չարժված են իրենց նախկին դիրքերից գեղի վեր կամ դեղի վար: Ճեղքվածքների զծով դեպի ցած կատարված տեղաշարժերն ընդունված են անլանել իջվածք (նկ. 29):

Այն լեռները, վորոնց մեջ դեպի հարակչում են ծալքերը, կոչվում են ծալքավոր: Ծալքավոր են՝ Կովկասյան, Ալպյան, Հիմալյան, Կորդիլերյան և այլ լեռներ:

Այն լեռները, վորտեղ իջվածքներն են գերակշռում, կոչվում են իջվածքային լեռներ: Այդպիսիներից են՝ Անդրբայկալյան Ժի-


դուկի և այլ լեռները։ Ամենից հաճախ իջվածքային և ծալքավոր ձները լեռներում պատահում են միաժամանակ։

Յերբեմն յերկրի կեղեկի մեջ յեղած ճեղքածքները չափաղանց խորն են լինում և հասնում են մաղմայի շերտին։ Հաղթած տեսակները այդպիսի ճեղքածքներով կարող են վերև բարձրանալ և յերկրի յերեսը դուրս դալ։ Հրաբուխներն առաջանում են նման վիժումներից։

Հրաբուխանությունը և յերկրի կեղեկի նեղվածքները։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, վոր Հրաբուխները լինում են այնտեղ, վորտեղ յերկրի կեղեկի մեջ խոր ճեղքեր կան։ Վոչ մի տեղ այնքան շատ ճեղքածքներ չկան, վորքան Մեծ կամ Խաղաղ ովկիանոսի տիերին։ Դրանք Մեծովկիանոսյան հրաբույին ողակն են կազմում։ Հրաբուխների մեծ մասն այնտեղ են գտնվում։ Յերկրագնդի վրա հաշվում են ընդամենը 400 հրաբուխ, դրանցից 300-ը Մեծ ովկիանոսի շուրջն են գտնվում և ընկած են Ասիական, Ամերիկյան աշխարհամասերի ափերին և նրանց կղզիների վրա (Կամչատկայում, Ֆիլիպյան և Զոնդյան կղզիներում և այլն), Այդ հրաբուխներց շատերը, ծովի տակից բարձրանալով, գոյացրել են կղզիներ։ Ալեռության, Կորալյան և Խաղաղ ովկիանոսի մյուս կղզիների մեծ մասն այդպիսի կղզիներ են։ Միջերկրական, Կարակարյան և այլ ծովերի ափերին ու նրանց կղզիների վրա ևս բավական մեծ թվով հրաբուխներ կան ցըլած։

Յերկրագնդի կեղեկի ճնշումից նրա տակ գտնված մագման կեղեկի ճեղքածքներով սկսում են բարձրանալ։ Բարձրացող մագման իր բարձր ջերմությամբ հալեցնում են ճեղքածքների պատերը։ Պատերի հալելուց առաջանում են մեծ քանակությամբ ջրային գոլորշիներ և գագեր։ Գագերը դուրս գալու տեղ չունենալով, մասսար ծծվում, միանալու են մաղմայի հետ, մասսամբ ել կուտակվում են ճեղքածքների վերին մասերում։ Մեծ քանակությամբ կուտակվելով, նրանք իրենց համար ճանապարհ են բացում և սկսում դուրս ժայթքել։ Հենց վոր գաղերի համար ճանապարհ և բացվում, գաղերով հաղեցած մագման անմիջապես սկսում են «յառալ» և արագությամբ դուրս հոսել. բայց հենց վոր մաղմայի մեջ յեղած գաղերը զատվում են նրանից, մագման զաղարում և յեռալ և զաղարում ենան ժայթքումը։

Հրաբույային լեռներ և հրաբխային ծածկոցներ։ Հրաբուխների ժայթքած նյութերը կուտակվելով՝ առաջացնում են լեռներ։ Մարանք լինում են և առանձին-առանձին, և խմբերով։ Կամչատկայի հրաբխային լեռները խմբերով են գասավորված։



Դկ 29 Իջվածք

Հեռավոր ժամանակներում լավայի ժայթքումները տեղի յեն ունեցել շատ մեծ չափերով։ Հայաստանում հսկայական տարածություններ ծածկված են լավային ծածկոցով։ Միջին Սիրիում լավային ծածկոցով բռնված տարածությունը 300 հազ. քառ. կիոմետրի յէ հասնում։


Յերկրաշարժ։ Կան յերկրներ, վորտեղ գետինը ժամանակ առ ժամանակ ցնցվում կամ տատանվում ե։ Գետնի այդ շարժումները կոչվում են սեյսմիկ յերկույթ կամ յերկրաշարժ։

Ուժեղ յերկրաշարժերից քանդվում են տներ, լեռներում փլում են ժայռեր, գետինը ճաքճքում կամ պատովում ե։ Այդպիսի յերկրաշարժները հսկայական վնասներ են պատճառում։ 1923 թվին Յալոնիայում մի քանի ըոսեյի ընթացքում մի շարք քաղաքներ կործանվեցին և մոտավորապես 200.000 մարդ զոհվեց։ 1908 թվին Իտալիայում կործանվեցին Մեսոսինա, Ռեջիո և ուրիշ քաղաքներ։ 1928 թ. շատ ուժեղ յերկրաշարժ յեղալ կամչատկայում. այդտեղ մարդկային զոհեր շատ քիչ յեղան, վորովհետեւ բնակչությունը շատ քիչ է, բայց քանդվեցին ձկնարդյունաբերական ձեռնարկության բոլոր շենքերը և պահածոների դորձարանը։ Յերկրաշարժը հաճախ մեծ աղերածություններ և գործում հայատանում. բոլորիս հիշողության մեջ գեռ շատ թարմ են լենինականի և Զանգեզուրի յերկրաշարժները։

Թույլ յերկրաշաբթներ չատ հաճախ են լինում: Յաղոնիայով մի տարվա ընթացքում 600-ից ավելի թույլ յերկրաշաբթ ե լինում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, վոր յերկրաշաբթների հարգածները առաջանում են յերկրի խորքերում 50—75 կմ խորության մեջ: Այն տեղը, վորտեղից հարգածն ե առաջանում, կոչվում ե յերկրաշաբթի կենտրոն կամ յերկրաշաբթի բուն: Յերկրի յերեսի այն տեղը, վոր դանվում է հենց յերկրաշաբթի կենտրոնի վրա կոչվում ե եպիկենտրոն: Եպիկենտրոնի շրջանը յերկրաշաբթի ավերածության ամենաուժեղ շրջանն ե:

Սեյսմիկ յերեսույթների պատճառները: Յերկրաշաբթներն առաջանում են դանաղան սպառնառերից: Բավականին զգալի ցնցումներ կարող են առաջանալ յեռների, այրերի, բարձրադիր ափերի կամ հանքահորերի փրկումից. նման դեպքերում կարող են նույնիսկ ավերումներ առաջանալ. բայց այդ ցնցումների շրջանը



Նկ. 30. Տեղի տեսքը յերկրաշաբթից ենտո

մեծ չի կարող լինել: Յերկրաշաբթն ավելի ուժեղ ե լինում հրաբուածությունների ժամանակ: Բայց ամենաուժեղ յերկրաշաբթներն առաջանում են լեռնակղմության և մասնավոր յերկրի խորքերում ճեղքածքներ առաջանալու ժամանակ:

Վյդպիսի յերկրաշաբթները տարածվում են հարյուրամյոր կիլոմետրեր և առաջացնում չատ մեծ ավերածություններ: Յերկրաշաբթներն առաջանում են համարյա բացառապես այն տեղերում, վորտեղ շարունակվում ե լեռնակաղմության ընթացքը:

5. ՅԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՒԺԵՐԸ.

Արտաքին ուժերի եներգիայի աղբյուրները: Արտաքին ուժերի եներգիայի գլխավոր աղբյուրն արեգակի տափությունն է: Յերկրի մակերեսույթն իր տաքությունն ստանում ե արեգակից: Արեգակի տաքության չորհիվ առաջանում են քամիներ, գոլորշիանում են ջուրը, առաջանում են անձրևներ, վորոնցից գոյանում են հեղեղներ, առվակներ, գետեր: Արեգակի տաքության չորհիվ զարգանում են որդանիզմները:

Յերկրին արեգակից հսկայական քանակությամբ տաքությունն ե ստանում: Մասույթ գործիքների միջոցով պարզվում է, վոր արեգակը ճառագայթների ուղղահայց ընկնելու դեպքում, մի ըուղեյում կարող ե յերկրի 1 քառ. սանտ. մակարդակի վրա 1 գ. ջուրը տաքացնել մինչև $2\frac{1}{4}$: Յեթե հավաքելու լինելինք արեգակից յերկրին հաղորդվող ամբողջ տաքությունը, նրանով հնարավոր կիներ բանեցնել $365 \cdot 000 \cdot 000 \cdot 000 \cdot 000$ ձիու ուժ ունեցող մեքենա:

Անցյալ դարու 90-ական թվականներին, Մոոկլայում պրոֆեսոր Յերասուկին խոչըր կիզիչ ապակու միջոցով արեգակի ճառագայթները մի կետում կենտրոնացնելով, պարզեց, վոր ջերմության աստիճանն այդ կետում 3500° -ից պակաս չեր. այդ կետում դրված մետաղները և միներալներն իսկույն հալվում եյին:

1923 թվին ամերիկացի գիտնական Երեկոսոնը հայելիներից և ապակիներից մի «արեգակնային վառարան» շինեց, վորի մեջ ստացվեց մոտ 5000° բարեխառնություն:

Արեգակի ճառագայթները կամ, ինչպես ասում են, «դեղին ածուխը», կարելի յե գործադրել զանազան նողատակների համար: 1860 թվին կառուցվեց արկի ուժով աշխատող առաջին շարժիքը: Արկի եներգիայով աշխատող շարժիքները գործադրվում են գրեթե խալորապես արևադարձային և մերձ արևադարձային յերկրներում: Անապատային յերկրներում դոյություն ունեն այնպիսի

դործիքներ, վորոնցով ջուրն անուշահամ և դարձնվում: Մեղ մոտ, Խորհրդային Միության մեջ, արևի եներգիան ոգտագործվում և գլխավորապես միջն-աստիական հանրապետություններում: Սամարդանդում և այլ տեղերում շինված են արեգակի ուժով աշխատող խոհանոցներ և բաղնիքներ:

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունն, արևի եներգիան մեզ մոտ համարյա թե չեր ուսումնառիրվում:

Մեղ մոտ արեգակի եներգիայի պլանային ուսումնասիրությունը և ոգտագործումը սկսվել է միմիայն Հոկտեմբերյան հետափոխությունից հետո:

Արտաքին ուժերի եներգիայի աղբյուր են հանդիսանում, արեգակից բացի, նաև լուսնի ձղողական ուժը և յերկրի շարժումներ առանցքի չուրջը:

Լուսինը ծովերի ջուրը դեպի իրեն է ճգում. դրանից առաջանում են մակընթացություններ ու տեղատվություններ: Ծովի ջուրը մերթ ընդ մերթ կամ դեպի ափն և հոսում կամ յետ և քաշվում ափից: Առաջին դեպքում մակընթացություն է առաջանում, յերկրորդ դեպքում՝ տեղատվություն: Մակընթացությունը տեսում է 6 ժամ (6 ժամ 12½ րոպե) նույն չափ ել տեսում և տեղատվությունը: Մեծ մակընթացություններ մեզ մոտ տեղի յեն ունենում Հյուսիսային Բևեռային ծովում Մուրմանի ծովափերին:


Մակընթացության ժամանակ բարձր ափերի մոտ ծովի քայլական աշխատանքն ուժեղանում է. ցածր ափերում ծովը վոչ թե քայլայում, այլ ընդհակառակը, նա մեծ քանակությամբ տիղմ և մանր ու խոշոր ավազ է կուտակում ափերին:

Երկրագնդի իր առանցքի չուրջը պատվելուց, ծովային հոսանքները և ողի հոսանքները շեղվում են իրենց սկզբնական ուղղությունից: Այս ևս պետք է համարել արտաքին ուժերի աղբյուրներից մեկը:

Ինչպես մենք տեսանք, յերկրի ներքին ուժերն, իրենց աշխատանքով, նրա մակերևույթի վրա անհարթություններ են առաջանում: Այլ աղղեցություն ունեն արտաքին գործոնները. նրանք, ընդհակառակը, դվագորապես հարթում, հավասարեցում են յերկրի մակերևույթը:

Հողմահարություն: Արտաքին գործոնների աղղեցությունից լեռնային տեսակները հողմահարության են յենթարկվում: Հող-

մահարություն ասելով մենք հասկանում ենք այն աշխատանքը, վոր կատարում են ջուրը, քամիները, ողի բարեխառնության առանումները և բուսական ու կենդանական որդանիզմները յերկրի վրա: Հողմահարության աղղեցության տակ քայլայման են յենթարկվում նույնիսկ ամենակարծր քարերը: Այդպես, որինակ՝ շնչքերի քարե սյուների վրա հողմահարությունից ճեղքեր են առաջանում, վոչնչանում են գերեզմանաքարերի վրա փորագրած տառերը և այլն: Նույն ճեղքի հողմահարության են յենթարկվում նաև ժայռերն ու լեռները:



Նկ. 31. Հողմահարությունից առաջացած սյուներ

Հողմահարությունը կարելի յէ բաժանել 3 կարգի. ա) մեխանիկական (յերբ տեսակները քայլայլում, փրկվում են, բայց նրանց քիմիական բաղադրությունը չի փոխվում, բ) քիմիական (յերբ քայլայման ընթացքում նրանց քիմիական բաղադրությունը փոխվում է) և գ) որդանական (յերբ քայլայումը կատարվում է կենդանական և բուսական կյանքի գործունեյության աղղեցությամբ):

Մեխանիկական հողմահարություն: Տերեկը լեռնային տեսակները, արեգակի ճառագայթներից տաքանալով, լայնանում են, իսկ գիշերը ցրտից սառելով, սղմվում: Լայնանալու և սղմվելու

այդ մշտական պրոցեսից լեռնային տեսակները ճաքճքում են և ջուրն անցնում և այդ ճեղքերի մեջ։ Ջմեռը ճեղքերում յեղած ջուրը սառչում է և վորովհետեւ սառչելուց նա լայնանում է, ուստի և սկսում է ճնշում գործ դնել ճեղքերի պատերի վրա, լայնացնել ճեղքածքները և քայլքայել լեռնային տեսակները։ Զրի քայլքայով ազդեցությունը հակայական է. նա մտնում է ամենափոքր անցքերն անդամ և իր մշտական աշխատանքով քայլքայում ամեն ինչ, վը բում ու մանրացնում ամենախոշոր ժայռերն անդամ։

Քիմիական հոգիահարությունների կատարվում է կրաքարը, գիպսը, աղաքարը և նրանց նման տեսակները ջրում լուծվում են, յեթե ջուրն իր մեջ ամենափոքր քանակությամբ անդամ ածխաթթու յեպարումակամ. իսկ ճեղքվածքներով յերկրի խորն անցնող ջուրը միշտ ել ածխաթթու ունի իր մեջ։ Զուրը իր հետ տանում և տեսակների լուծված մասերը. դրա հետևանքով յերկրի յերեսին և նրա խորքերում բաղմաթիվ անցքեր և ճեղքեր են գոյանում, վորոնք ժամանակի ընթացքում մեծանալով, հակայական այրեր, փոսեր և դատարկություններ են առաջանալու:

Որգանիկների դերը: Բույսերի արմատները մտնելով լեռնային տեսակների ճեղքվածքների մեջ և այդտեղ աճելով, իրենց աճման ուժով լայնացնում, մեծացնում են այդ ճեղքերը։ Առանձնապիս խոչը քայլքայումներ են առաջացնում մեծ ծառերի արմատները, վորոնք յերեմն ամրող ժայռեր են պոկում իրենց տեղերից։

Բացի այդ, բույսերի արմատների արտադրած թթուները նույնպես լուծում և քայլքայում են լեռնային տեսակները։

Մամունների և քարաքոսների փոռող մասերը, բակտերիաների ազդեցությամբ կազմալուծվելով առաջացնում են հումուս, վորը խառնվելով կալի և ավաղի հետ, հող և առաջացնում։

Կենդանիները նույնակես քայլքայում են լեռնային տեսակները՝ վոմանք ժայռերում անցքեր բանալով (մոլլյուսկները), վոմանք լեռնային տեսակների մեջ բներ փորելով, վոմանք ել տեսակների մանրիկ կտորներն իրենց մարսողական գործարաններից անց կացնելով (որինակ՝ անձրևավորդերը)։

Քամիների կատարած աշխատանքը։ Քայլքայման գործում չատ մեծ և ուժեղ քամու դերը։ Քամու ազդեցությունը թույլ

այնտեղ, վորաեղ լեռնային տեսակները մերկացված չեն և ծածկված են բուսականությամբ։ Բայց չատ մեծ և քամու կատարած աշխատանքն այն տեղերում, վորաեղ բուսականությունն աղքատ է (մերկ տափաստաններում և անապատներում)։ Որինակ՝ մեղմությամ մեծ և քամիների կատարած աշխատանքը։ Միջին Ասիայում նրանք, կավի և ավաղի մանր մասնիկներն ողը բարձրացնելով, տանում են իրենց հետ և զարկելով ժայռերին՝ քերում մաշում են այդ ժայռերը և նրանց մեջ փոսեր առաջացնում։

Թի ինչ ուժով են դարձվում ավաղի հատիկները ժայռերին և պատահած խոչընդուներին, այդ յերեսում և նրանից, վոր ավաղի հոսանքի զեմ դրած ապակին մի փոթորկի ընթացքում կորցնում եր հզկվածությունն ու փայլը։ Անապատներով անցնող անդրկառպյան յերկաթուղու հեռաղործական սյուները 5 տարին մեկ անդամ փոխվում են նորերով, քանի վոր այդ ժամանակի ընթացքում դարձվող ավաղից այնքան են մաշվում, վոր իրենց ծանրությունից կոտրվում են։

Շարժմող ավաղը հանդիպելով վորեւ արգելքի—քարի կամ թիւ—սկսում և հավաքիլ նրա չուրջը և կուտակվելով՝ ավազարմեր (բարիւանաներ) գոյացնել։


Ավազաթմբերը համառ են 100—200 մ. բարձրության։ Նրանք աղեղնածն բռուցների տեսք են ունենալու:

Ուժեղ քամու ժամանակ այդ ավաղաթմբերը կարծես կենդանանում են. գաղաթից վեր բարձրացող ավաղը նմանում է ծիփ, կարծես զաղաթը սկսում է միաւ, բլրի մակերեւույթն սկսում է շարժվել և ապա ամրոց ավաղաթմումը դանդաղորեն տարվում է քամու ուղղությամբ։ Քամին կալի մասնիկների դեղին փոշին քցում և տանում անապատի սահմաններից հետու դանդող խոտածածկ ընդարձակ տափաստաններ. այդտեղ փոշին նստառ է, նոտի արմատներն և ցողունները թաղվում են փոշու մեջ. Ժամանակի ընթացքում բռուցները փթում և հողի մէջ նրանց տեղերում բարակ անցքեր են մնում։ Այս ձևով աստիճանաբար կարմիւռն է լուս կոչված տեսակը։ Կան տեղեր, վորաեղ լյոսով չերտի հաստությունը 200 մետրի յե հասնում (որինակ չյուսիսային ջինաստանում)։¹⁾

1) Լյոսոն առաջացել ենակ հին ռազմականերից ուշնող ջրերի ըերած ուղիք։ Այդ ռազմակաները մի ժամանակ բռնած են յեղել Յեղուտայի, զուտիսային Ամերիկայի և Ասիայի հյուսիսային մասերը։

Միջին Ասիայում, Հյուսիս-արևելյան քամիների ժամանակի մանր փոշին որերով կանդնած եւ լինում ողի մեջ. նա լցվում եւ մարդկանց քիթը, բերանը, կեղտոտում եւ աչքերը, թափանցում եւ քնակարանները, նստում եւ տանիքների, պատերի վրա և ամեն տեղ:

Ավազուտներ պատահում են նաև ծովերի, գետերի և լճերի ափերին: Այդ տեղերում ևս ավազներից հաճախ ավազաթմբեր են գոյանում. ինչպես անապատների ավազաթմբերը, սրանք ել քամուց են առաջանում: Սրանք 20—100 մետր բարձրությամբ շարժուն բլուրներ են. քամիների ժամանակ նրանք անընդհատ շարժվում, տեղափոխվում են և հաճախ մեծ վնասներ են պատճառում: Պյուղեր և գաշտեր ծածկելով իրենց տակ:




Նկ. 32. Ավազաքմբեր

Սեստրոբեցկ քաղաքը, վոր գտնվում է Լենինգրադից վոչ հեռու, Ֆիննական ծոցի ափին, շրջապատված եւ ավազուտներով: Այդտեղ, ավազաթմբերը յերբեմն դեպի քաղաք շարժվելով, ավազով ծածկում են նրա փողոցները, բանջարանոցները, տները. պատահել են նաև, վոր գետի հոմք լցվել եւ ավազով և գետը փոխել եր ընթացքը:

Մարդկային հասարակության պայքարը շարժվող ավազների և ավազաքմբերի դեմ: Ներկայումս մարդկային հասարակությունը շարժվող ավազների դեմ միջոցներ եւ ձեռք առնում: Ավազների շարժումը կանոննեցնելու համար նրանց վրա բուսականություն են աճեցնում: Միքանի բույսեր ավազում հողերում շատ լավ են առ

ձում: Ավազուտ հողերն ամրացնելու համար ավելի հարմար են տնկել ուռիներ և նոճիներ. նրանք իրենց արմատներով ամրացնում են ավազուտ հողերը: Սեստրոբեցկի շրջակայքի ավազաթմբերը դրանով են ամրացված: Խորհրդային Միության մեջ ավազուտներն աստիճանաբար կուլտուրական ուղիների յեն վերածվում: Ուստի կոչվում են անապատների այն տեղերը, վորտեղ աղբյուրներ են բղխում, բուսականություն կա և վորտեղ, ուրեմն, կարելի յեցուղանտեսությամբ պարագնել:

Մեղ մոտ վոռոզման միջոցով այդպիսի ուղիներ են ստեղծվում Միջին Ասիայի անապատներում: Վոռոզման համար գետերից դեպի վոռոզելի դաշտը մեծ ջրանցքներ են փորում և ապա ջրանցքից բազմաթիվ մանր առուներ անց կացնում դանազան ուղղությամբ. ջուրն առուներն անցնեն ով տարածվում եւ դաշտում և ջրում առուների արանքներում ընկած հողամասերը: Այդ դաշտերը




Նկ. 33. Ավազաքմբերի շարժումը

շատ բարձր բերքատվություն են ունենում: Այն տեղերում, ուր շատ բարձր բերքատվություն են ունենում: Այդ տեղերում, վոռոզական, ողտագործվում են ստորերկրյա ջրերը: Վոռոզական տեղերում մեծ մասամբ մշակվում են արժեքավոր տեխնիքական բույսեր (գլխավորապես բամբակ) և այդիներ են անկում: Մեղ մոտ ավազուտ անապատներով յերկաթուղիներ են անցկացված: Անդրկասպյան յերկաթուղին, Մերվից մինչև Զարջոյ, անցնում են փիրուն ավազաթմբերի անընդհատ ծովի միջից: Գետք երգեմ ավազաթմբերի անընդհատ ծովի միջից: Վետք երգեմ պայմանագրերի ավազաթմբերի շարժման դժվարություններ հաղթահարել այդ ավազաթմբերի շարժման դժվարությունները համար, մինչև վոր հնարավոր յեղակ մարդկային համար և յերկարամյա աշխատանքի շնորհիվ յերկաթուղու ուղղությամբ բուսականություն աճեցնել և յերկաթուղին ապահովել ավազաթմբերից:

Հոսող ջրերի աշխատանիքը: Անձրևներից առաջացած հեղեղոները քչում, տանում են իրենց հետ ավազի և կավի մանր մասնիկներ: Ավազն ու կավը հեղեղների հետ լցվում են դետերի մեջ, քչում են ցած և նստում հովիտներում:

Առաջակները, հեղեղներն անցնելով լիոնային փափուկ տեսակների կամ փարած դաշտերի միջով, խոր ձորակներ են առաջացնում նրանց մեջ: Գարնան հալոցքի և անձրևների ժամանակ, ձորակների գառիվայր սփերից թափվող ջրերի սրբնթաց հոսանքները քշում, տանում են իրենց հետ հատակի կավը, ավազը, ճալաքարերը. Նրանք քանդում են ձորերի հատակը, սփերը, վորի հետե-



Նկ. 34. Զորակ


վանքով ձորերն աստիճանաբար լայնանում, խորանում են և հոսանքի հակառակ ուղղությամբ յերկարում. Ժամանակի ընթացքում գոյանում են խոր կիրճեր և հովիտներ, վորոնք լիոներն ու բարձրությունները կտրատում և առանձին զանդվածների յեն բաժանում: Հոզմահարության և վողովումների աշխատանքի շնորհի այդ զանդվածները հետաքայում կարտղ են բոլորովին քայլային, հարթակել և «համարյա հարթության» փոխվել: Որինակ՝ այդպիսի հարթությունն է կալակատանի բարձրության արևմտյան մասը:

Լեռնագագարների ձյանը: Սար բարձրանալիս ողի բարեխառնությունը հետզհետե իշնում ե, վորքան բարձրանում ենք, այն քան ցրտում ե: Այդ պատճառով բարձր տեղերում ավելի հաճախ ձյուն և գալիս քան անձրև: Այն գիծը, վորից բարձր մշտապես ձյուն ե լինում, կոչվում ե՝ մշտական ձյան սահման: Մշտական ձյան սահմանը զանազան տեղերում զանազան բարձրության վրա յի լինում: Նրա բարձրությունը կախված է ողի ջերմության առատիանից և խոնավությունից: Վորքան ավելի բարձր լինի տվյալ յերկը ջերմության աստիճանը և վորքան ավելի քիչ լինի նրա խոնավությունը, այնքան ավելի բարձր կլինի մշտական ձյան սահմանը: Բնեռուային յերկըներում մշտական ձյան սահմանը 500 մետրից բարձր չի լինում, իսկ արեալաբային յերկըներում 4000—6000 մետրի յի հասնում: Այդ գծից բարձր յեկած ձյան միայն մեծան և հալչում. մնացած ձյունը այնքան ե կուտակվում, վայ նրա մի մասը փլվում և ցած ե գլորվում: Զյան մնացած մասը սառչում է և գոյացնում և սառցագաշեր, վորոնք սկսում են սարերի լանջերով գետի նման ցած հոսել:

Զյան հյուսեր: Ցած թափվող ձյան զանդվածները կոչվում են ձյան հյուսեր: Զյան հյուսերն առաջանում են մեծ մասամբ դարնանը, հալոցքին: Մեկ մոտ ձյան հյուսերը թափվում է նրա մասինիրական խճուղու վրա: Այդ ճանապարհն անցնում է լուֆթանց մինչև Որջոնիկիձեռ քաղաքը: Այն տեղերում, ուր ձյան հյուսերն ավելի հաճախ են պատահում, կառուցված են ծածկույթեր: Այս տեղերում ձյան հյուսերը թափվում են վոչ թե խճուղու, այլ ծածկուղու տանիքների վրա և նրանց վրայից սահում, թափվում են անդունդները:

Սառցագաշերը և նրանց աշխատանիքը: Լեռնազողերում մեծ քանակությամբ ձյուն և հավաքվում. կուտակված ձյան զանդվածները սեփական ծանրությունից դանդաղորեն սահելով իշնում են ավելի ցածը տեղեր: Վերին յերսերի ճնշումից խորքերում են ավելի ցածը տեղեր: Վերին յերսերի ճնշումից նորից սառցյունը սկսում է հալչել. հալված կաթիլները ցրտից նորից սառցյունը սկսում էն և ձյունը հատիկավոր և զառնում: Հատիկավոր ձյունը կոչվում է փիրն: Ավելի ցածը տեղերում—լեռնահովիտներում, կոչվում է փիրն: Ավելի ցածը տեղերում և լեռնահովիտներում կուտակված ձյան մեծ զանդվածների ճնշման տակ, ձյան սահմանական հատիկները միանում և սառուցը են դառնում: Լեռնահովիտներում առաջացած սառուցից մեծ տարածությունները

կոչվում են սառցադաշտ կամ գլիցիեր։ Սառցադաշտերը միքանի կիլոմետր յերկարություն են ունենում, իսկ նրանց սառուցի հաստությունը հասնում է 100—500 մետրի, յերբեմն ել ավելի։ Սառցադաշտերի սառուցի իր ծանրությունից սողում ե դեպի ցած, վորտեղ և հալվում ե։ Սառուցն իր հետ տանում ե լեռներից թափվող կավը, ավազը, խճը և խոշոր քարերը։ Գայքայման այն նյութերը, վոր չարժվում են սառուցի հետ միասին, կոչվում են մորենիներ։ Սառուցի հոսանքի արագությունը միատեսակ չե հոսանքի բոլոր մասերում։ Սառցադաշտի միջին դին ավելի արագ ե հոսում, քան նրա ավերը։ Տարբեր սառցադաշտերում հոսանքի արագությունը նույնպես տարբեր ե լինում։ տեղ-տեղ մեկ տարբաւ




Նկ. 35. Սառցադաշտեր

Նա հասնում է 100 մետրի, իսկ այլ տեղերում՝ 500 մետրի։ Գրենելանդիայի սառցադաշտերի արագությունը մեկ որում հասնում է 20—30 մետրի։

Սառցադաշտերը հարքում և հղկում են լեռնային տեսակները։ Սառցադաշտերն իրենց անցած հանտարգին քանդում և հարթում են յերկրի մակերևույթը։ Նրանք մզում տանում են իրենց հետ պոկած քարերի ու կրայինական արշալախումբը։ Նրան հաջողվեց, բացի ինիչեկից, հայտնաբերել նաև մի շարք այլ անհայտ սառցադաշտեր։

Են ժայռերի յերեսը։ Այդպիսի քերպածքներ մենք տեսնում ենք խոշոր նալաքարերի վրա։ Հաճախ ժայռերը, շարժվող սառուցաների չնորհիվ հղկվելով, ուռուցիլ ձեւ են ստանում։ Նմանողությամբ՝ նրանց «իոյի հակատ» են անվանում։ Դրանց վրա պարզ յերևում ե սառուցի կատարած աշխատանքը։



Նկ. 36. Գերված նալաքարեր

Կովկասի, Տյան-Շանի և Պամիրի սառցադաշտերը։ Խորհրդային Միության մեջ շատ սառցադաշտեր կան Կովկասում, Տյան-Շանի վրա և Պամիրում։ Միայն Կովկասում յեղածների թիվը 250-ից ավելի յէ։ Դրանցից գլխավորները գտնվում են կենտրոնական Կովկասում—Ելբրուսի և Կաղբեկի միջև լնկած լեռների վրա։ Այստեղ սառցադաշտերն իջնում են մինչև 2500մ. բարձրության (ծովի մակերևույթից)։ Խոշորներից մի քանիսն ավելի ցած են եջնում։ որինակ՝ Բեղնոնդի սառցադաշտը (17 կմ. յերկարությամբ), վոր Կովկասում ամենախոշորն ե, իջնում ե մինչև 1993 մետր բարձրության։

Խոշոր սառցադաշտեր շատ կան Տյան-Շան լեռներում և Պամիրում։ Տյան-Շան լեռների կենտրոնական մասում յեղած ինիչեկ սառցադաշտի չափումները ցույց տվին, վոր նա ամենամեծն ե Միության մեջ (յերկարությունը 85 կմ.)։ Առաջին անգամ այստեղ վուք գրեց ուկրայինական արշալախումբը։ Նրան հաջողվեց, բացի ինիչեկից, հայտնաբերել նաև մի շարք այլ անհայտ սառցադաշտեր։

1928 թվին խորհրդային-գերմանական լեռնային արշավախումբն ուսումնակարգ Պամիրի բարձրավանդակի արևմտյան կողմն լնկած սառցադաշտային շրջանը։ Պարզվեց, վոր այստեղի սառցադաշտերը հսկայական մեծություն ունեն։ Դրանցից ամենամեծը Յեղչենկոյի սառցադաշտն ե. դրա յերկարությունն ըստ արշավախմբի տվյալների 75 կիլոմետրից ավելի յէ, իսկ նրան

հեռնդ տվող ձյունարանի յերկարությունը 25 կիլոմետրից ավելի
յէ . մեղքնիոյի սառցաղաշտը միացած ե միքանի ուրիշ սառցա-
ղաշտերի հետ :

Անտարկտիդան, Գրենլանդիան և թիեռային այլ մեծ կղզիները
ծածկող սառույցը : Բնեռային յերկներում սառցաղաշտերը հըս-
կայական չափերի յն հասնում . այդ սառցաղաշտերը կոչվում են
ցամաքանակային սառույցներ :



Նկ. 37. Խոյի նակատ

Առանձնատես մեծ չափերի յն հասնում սառցաղաշտերը
գրենլանդիայում և Սնուարկահղայում : Բացի սրանցից, այդպիսի
սառույցով ծածկված են նաև բնեռային կղզիներից շատերը, ինչ-
պես, որինակ, նոր Յերկրի Հյուսիսային կղզին, Շպիցբերգենի
կղզիներից մի քանիսը, Ֆրանց-Յովիսեվիի և Հյուսիսային Յերկրի
կղզիները և Հյուսիս-Ամերիկյան բնեռային Արշակելադի միքանի
կղզիները :

Սառույցով ծածկված տարածությունը Գրենլանդիայում

1.500.000 քառ. կիլոմետր է . այդ սառույցի հաստությունը տեղ-
տեղ հասնում է 2½ կիլոմետրի :

Ցածր ափերի մոտ այդ սառցաղաշտերի յեղերը ծովն են
մտնում . բայց քանի վոր սառույցը ջրից թիթէ ե, նա մասերի բա-
ժանվելով, մեծ կտորներով ջրի յերեսն ե բարձրանում : Լողացող
սառույցի այդ սարերը կոչվում են պյոբրզ . այսբերգների բարձ-
րությունը ջրի մակերեսույթից 100—150 մետրի յէ հասնում . ջրի
տակ յեղած մասը 6 անգամ մեծ ե յերեացող մասից : Այսբերգ-
ները շատ լատանդավոր են նաև նրի համար :

Հիմ սառցաղաշտերը : Ներկա գարաշը անին նախորդող ժամա-
նակաշրջանում, Խորհրդային Միության միջին և Հյուսիսային
յերկրագական մասերը ծածկված են յեղել սառցաղաշտով : Այդ
սառցաղաշտը յերկու լայն ճյուղավորություններով ձգված ե յե-
ղել դեպի հարավ, Դնեսլրի ուղղությամբ մինչև Դնեսլր-Դետրովսկ
և Դոնի ուղղությամբ մինչև Ռևստ-Մեդվեդիցա : Սառցաղաշտը
միքանի անդամ տարածվել ե դեպի հարավ և յետ ե քաշվել, մեծ
փոփոխություններ առաջացնելով իր շարժման ժամանակ :

Միության Յեվրոպական մասի Հյուսիս-արևմտյան շրջանն
այդ սառցաղաշտի ամերիչ ազգեցության: Ե յնթարկելու: Այստեղ
սառույցն իր հետ տարվող քարերով հարթել ե յերկրի մակերեսույ-
թը, հղկել ու կլորացրել ե ժայռերը և նրանց կտորները, իր հետ
թը, հղկել ու կլորացրել ե ժայռերը և յերածել ու ցրել իր անցած նա-
պաջ մղելով, ճալաքարերի յի վերածել ու ցրել իր անցած նա-
պաջարհին : Սառցաղաշտի այդ քայլքայող աշխատանքով ե բացա-
տրվում միքանի լմերի փոսերի ծագումը, վորոնք ձգված են մեծ
տրրվում միքանի լմերի փոսերի ծագումը, վորոնք ձգված են մեծ
մասամբ սառցաղաշտի ընթացքի ուղղությամբ, այսինքն Հյուսիս-
արևմուտքից դեպի հարավ-արևելք : Այսպիսի լճեր հատուկ են
սառցաղաշտային լանդշաֆտի համար (Մուրմանսկի շրջան, Կա-
րելյան հանրապետություն) : Նույն սառցաղաշտն իր բռնած տա-
րածության այլ մասերում մորենային լանդշաֆտ ե ստեղծել . ո-
րինակ՝ Մոսկվայի մարդի լանդշաֆտ : Այստեղ մորենները ճալա-
քարային կամի և ավաղի նստվածքներ են կուտակել իրենց ճանա-
պարհին : Մոսկվայի մարդի յերկարածիկ բլուրներն ու մանր բլու-
րաշարքերը այդ մորեններից են կազմվել :

6. ՅԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԶԱՆԱԶԱՆ ԶԵՎԵՐԸ

Հարքությունները: Յամաքի այն մասերը, վորոնք մեր տէրին հարթ են յերեսում, կոչվում են հարքություն:

Հարթությունները լինում են տափարակ, թիք և ալիքանման:

Սակայ և պատահում, վոր տափարակ հարթությունները կտապարյալ հորիզոնական մակերեսույթ ունենան. մեծ մասամբ նրանք թեքվածք են ունենում դեպի մեկ կամ մյուս կողմը և կոչվում են քեք հարթություններ, կամ տեղատեղ ծածկված են լինում մանր բլուրներով և կոչվում են բլրոտ կամ ալիքանման հարթություններ:

Տեղի բարձրությունը միշտ հաշվում են ովկիանոսի մակերես վույթից (սովորաբար ասում ենք՝ ծովի մակերեսույթից): Յեթի հարթության բարձրությունը ծովի մակերեսույթից 200 մետրից ավելի չե, հարթությունը կոչվում է ցածր հարթություն կամ դաշտավայր, իսկ յեթե 200 մետրից ավելի յե, կոչվում է տափարակ բարձրություն կամ բարձրավանդակ (սարահարթ):


Յամաքի գոգավորությունների մեջ կան այնպիսիները, վորոնց հատակը ծովի մակերեսույթից ցածր է. դրանք կոչվում են դեպրեսիա: Խորհրդային Միության մեջ ամենախոշոր դեպրեսիան կասպիական ցածրությունն է:

Դաշտավայրերի ծագումը: Դաշտավայրերը գոյացել են զանազան ձևով: Հաճախ գետերի բերած տիղմը, ավազը և ճալաքարերը կուտակվելով ծովածոցերում, ցամաքեցնում են այդ ծովածոցերը և նրանց տեղը գոյացնում դաշտավայրեր: Որինակ՝ արևմտյան վրաստանում Բիոնի դաշտավայրն առաջացել է Բիոն գետի բերած մեջքից: Կան դաշտավայրեր, վորոնք առաջացել են անհետացած ծովերի տեղերում, նրանց հատակի բարձրանալու հետեւ վանքով: Մերձկասովյան և Արալ-կասպյան դաշտավայրերի տեղն, որինակ, առաջներում ծով է յեղել: Եեռնային հարթությունները գոյանում են լեռնահովիտներում, հեղեղների և գետերի բերած մեջքի կուտակումից:

Հոսող ջրերի առաջացրած փոփոխությունները հարքություններում: Հարթությունների մակերեսույթի փոփոխություններն առաջանում են դլխավորապես հոսող ջրերի կատարած աշխատանքով: Վորքան ավելի թեք և լինում տեղի մակերեսույթը և վորքան

ավելի փխրում են լեռնային տեսակները, այնքան ավելի, մեծ են վնաս ջրերի առաջացրած փոփոխությունները.

Մեզ արդեն հայտնի յե, վոր հոսող ջրերը ձորակներ և ձորեր են առաջացնում: Սկզբում ձորակներն առաջանում են հովտի գույքայր տեղերում: Զառիվայրից թափվող ջուրը, իր ուժեղ հոսանքով, աստիճանաբար քանդում ե զառիվայրը և ձորակները հետը յերկարում ե հոսանքի հակառակ ուղղությամբ: Ջրերի առաջացրած ձորակները և ձորերը մեծ վնասներ են պատճառում. հրանք փչացնում են ճանապարհները, դաշտերը և ընդարձակվելով, ավերում են մշակելի հողերի մեծ տարածություններ: Խոր ձորերը մերկացնում են լեռնային տեսակների շերտերը և պատշելով են բացում ստորերկրյա ջրերի համար, վորոնք հոսում են գեղագիտական դաշտերի այդ ձորերը: Դրա չնորդիվ ընկնում ե ըրջակա դաշտերի գեղագատվությունը, քանի վոր ստորերկրյա ջրերի պակասելու հետևանքով պակասում ե նաև դաշտերի խոնավությունը:



Նկ. 38. Կովկասյան լեռնաշղթան

Չորակների ընդարձակման դեմ մղվում է պայքար: Դրա համար ձորակի հատակն ու լանջերը ծածկում են ճախերավ, վորոնք ամրացվում են գետնին՝ ցցերին կապած գերաններով. գերանները ցցերին կապում են ուռու ճյուղերով: Այդպիսի ճանապարհով անցնելով ջրի հեղեղները կորցնում են իրենց թափը և տիղմ ու ավազը և թողնում հատակին: Խստած տիղմը արագությամբ ծածկվում է ավելի խոտով և մացաներով ու այդպիսով հունն ազտավում է վորքան մեջքից: Հոսանքի ուժը թուլացնելու նորատակով յերբեմն ձորակի յերկարությունը կտառացվում են ամբողջ շարք պատվարներ, վո-

բոնք միաժամանակ պահում են հոսանքի բերած քարը, տիղմը, տվաղը : Ամրացված ձորակներում յերբեմն անտառներ են տնկում :

Ավելի մեծ են գետերի առաջացրած վողողումները (օրան մասին կուզորնք «Հիդրոսֆերա» բաժնում) : Հազարավոր տարի ների ընթացքում գետերն իրենց անցած ճանապարհին լայն հովիտներ են ստեղծում . իրենց ճանապարհին ընկած բարձրությունները, նրանք աստիճանաբար քայլայում, ավերում և բլուրների յև վերածում, վորոնք հետագա վողողումներից վոչչանալով կրկի հարթություն և ստացվում :

Լեռներ և բարձրություններ : Եւրկրագնդի մակերեսույթի բարձրացած և ուռուցիկ մասերը կազմում են լեռներ, լեռնաշղթաներ և բլուրներ :

Յերկիրը լեռնոտ և կոչվում այն դեպքում, յեթե այդտեղ խոր բարձրություններ շատ կան : Առանձնացած խոշոր բարձրությունները կոչվում են լեռնագագարներ :

Լեռան ամենաբարձր մասը կոչվում ե գագար, ամենացածր մասը՝ ստորատ, միջին մասը լանջ : Ըստ բարձրության լեռները լինում են ցածր, յեթե նրանք 500 մետրից բարձր չեն, միջին՝ 500–2000 մետր և բարձր՝ 2000 մետրից ավելի : Ամենաբարձր լեռներեւստն (Ասիայում—Հիմալայան լեռներում) ե, վոր 8840 մ բարձրություն ունի ծովի մակերեսույթից :

Մի գծի վրա յեղած լեռների շարքը կոչվում ե լեռնաշղթան, որինակ՝ կովկասյան լեռնաշղթան :

Այդտեղ իրենց բարձրությամբ աչքի յե՛ ընկնում միքանի գագաթներ՝ Ելբրուսը (5630 մ.), Դիխտառը (5197 մ.), Շխարը (5181 մ.), Կազբեկը (5040 մ.) և ուրիշները :

Լեռների մեջ ընկած յերկար ցածրությունը կոչվում ե լեռնահովտություն : Եւթե լեռնահովտների լանջերը զառիթափ են կամ համարյա ուղղահայաց, նրանք կոչվում են կիրճ : Որինակ՝ Դարյալի կիրճը Կովկասում : Եւթե հովիտները ձգվում են լեռնաշղթաների վուգահեռ, կոչվում են յերկայնական, իսկ յեթե նրանք լեռնաշղթան լայնությամբ են կարում, կոչվում են ընդլայնական կուցնդիշական :

Լեռնաշղթայի վերին գիծը կոչվում ե սեռ, սեռան ամենացածր մասերը՝ լեռնահովտը : Ռազմավերական ճանապարհն անցնում է Կովկասյան լեռնաշղթայի վրայից Խաչի կոչված լեռնանցքով :

Փոքր բարձրությունները, յեթե նրանց գաղաթը չըջապատի տարածությունից 200 մետրից բարձր չե, կոչվում են բլուրներ :

Լեռան բարձրությունը, հաշված նրա ստորոտից, կոչվում ե հարաբերական բարձրություն : Հարաբերական բարձրությամբ կարելի յե համեմատել միայն տեղի լեռների, բլուրների բարձրությունները : Հարաբերական բարձրությամբ չի կարելի միմյանց հետ համեմատել զանազան տեղերում լեռած բարձրությունն ե ստացվում :



Նկ. 39. Ելբրուս լեռը


Թյուների շափը, քանի վոր հենց նրանց ստորոտների բարձրությունը կարող ե տարբեր լինել : Տարբեր տեղերի բարձրությունները միմյանց հետ համարելու համար վերցնում են նրանց բարձրությունը՝ ծովի մակերեսույթից, կամ ինչպես ասում են, նրանց բացարձակ բարձրությունը :

Ինչպես են ուլյեփը պատկերացնում քարտեզի և պլանի վրա : Եւրկիրի սելյեփը պլանների և քարտերների վրա ոլատկերացվում ե հետևյալ ձևերով —

1) Աստիճանական գալանվարման միջոցով : Պարոցական քարտեղների վրա գաշտավայրերը սովորաբար ներկվում են կանաչ գույնով . ծովի մակերեսույթից ցած տեղերը ներկում են մուգ

կանաչ գույնով : Բարձրությունները ներկում են դեղին գույնով վորքան բարձրությունը ցածր ե , այնքան ել ավելի բաց գույնը են ներկում այն : Լեռները ներկում են մուգ դեղին և դարչնագույնություններով և վորքան բարձր են նրանք , այնքան ել գույնը մուգ լինում :

2) Գծիկների միջոցով : Լեռների լանջերը գծիկներով այսպէս են պատկերացվում , ինչպես նրանք կերևային , յեթե նրանց վրա վերևից նայելու լինելինք . յեթե լանջերի թեքությունը մեծ (այսինքն յեթե նրանք աստիճանաբար են իջնում) այս դեպքուն նրանք պատկերացվում են բարակ գծիկներով , սեպածեւ լանջերի նշանակվում են ավելի հաստ և խիտ գծիկներով :




Նկ. 40. Կավից շինած բլրակ

3) Հորիզոնականների միջոցով . ռելեֆի պատկերացման համար հորիզոնականներն ավելի հաճախ գործադրվում են ռազմական քարտեզներում :

Հորիզոնականների մասին պարզ պատկերացում կազմելու համար , յենթադրենք , թե կամքի փափուկ ցեխից մի փոքրիկ բլրունենք շինած . այդ բլրակը դնենք թղթի վրա (նկ. 40) : Քանին կամ ձողիկով չափում ենք նրա բարձրությունը . յենթադրենք նրա բարձրությունը 25 սանտիմետր է : Թելով կամ բարակ յերկաթիւ լարով բլրակը 10 սմ . բարձրության վրա (հաշված ստորոտից) և բիզոնական ուղղությամբ կտրենք : Այդ կտրվածքից 10 սմ . բարձրից նույն ձևով մի կտրվածք առաջացնենք : Այժմ , մեխով

հաստ յերկաթալարով , լերան գագաթից մինչև հիմքը յերկու աեղանցք շինենք (նկ. 41) , (Ա. տառը) . հետո վերևի կտորը վերցնենք և դնենք թղթի վրա (թուղթը պիտի դրված լինի տախտակի վրա) . և անցքերի միջով յերկու կտորը յերկաթալար ամրացնենք տախտակի մեջ (նկ. 41) : Այդ կտորի հիմքի շուրջը մատիտով դիմքան շենք և կտորը վերցնենք թղթի վրայից . նրա տեղը դնենք յերկու բորդ և ասլա յերբորդ կտորը և նույն ձևով վարվենք (նկ. 42) : Այժմ թղթի վրա մենք կունենանք միմյանց մեջ դժված յերեք կտորների շրջապիծը : Ահա սրանք են մեր բլրակը պատկերացնող հորիզոնականները (նկ. 44) : Քանի վոր կալե բլրակի ձախ լանջն աստիճանաբար և իջնում , ապա և այդ կողմէի հորիզոնականների հեռավորությունը միմյանցից ավելի մեծ կլինի , քան աջ կողմում , ուր լանջն ավելի զարիկայր է : Եել այսպես , վորքան հորիզոնականներն իրարից մոտ լինեն , այնքան լանջն ավելի զարիկայր կլինի , և ընդհակառակը , վորքան հեռու-հեռու՝ այնքան ավելի կլինի նրա թեքությունը :




Նկ. 41. Կավից բլրակի վերիմ մասը

Յուրաքանչյուր հորիզոնականի բոլոր կետերը միևնույն բարձրության վրա յեն գտնվում (որինակ , բ , բ կետերը , կ , կ կետերը . նկ. 42 և 43) : Անունն ինքը ցույց ե տալիս , վոր հորիզոնականները դանվում են հորիզոնին զուգահեռական հարթությունների մեջ և հորիզոնականները ցույց են տալիս նաև լեռան բարձրությունը Մեր բլրակի բարձրությունը վորոշում ենք այսպես : Ինչպես գիտեած է այսպէս առաջացնենք : Այսպէս առաջացնենք :

ունենք մեր կտրած չերտերի հաստությունը կամ հատման բարձրությունը հավասար ե 10 սանտիմետրի. կնշանակի յերկու հորիզոնական միջի բարձրությունն ել հավասար ե 10 սմ. : Բայց մենք

Դիտենք նկարները և չմոռանանք, թե ինչպէս են նշանակված լուսաշղթան, գողերը, կաթուայաձև հովիտները, լեռնաշղթայի սեռը (նկ. 44, 45 և 46) :


Բլուբը կամ լեռնադադարթը քարտեզի վրա նշանակվում ե շըր-չաղձի ձև ունեցող հորիզոնականներով, վորոնց վրա դրսի կողմէց



Նկ. 42. Կավի բլրակի միջին մասը

ունենք յերկու կտրվածք կամ յերեք կտոր. Հետեւսպես բլրակի բարձրությունը պետք ե 20 սմ-ից ավել լինի (գաղաթը կարող 10 սմ-ից ել պակաս լինել) :


Բաղմա-տեղագրական քարտեզներում հատվածների բարձրությունը սովորաբար հավասար ե լինում 1, 2, 3 կամ 5 մետրի:



Նկ. 43. Կավի բլրակի հորիզոնականները օրանց վրա նշանակած լեռնագծիկներով

Մեծ մասամբ գործ են ածվում հորիզոնականները ուաղմական քարտեզներում :

Ուկեֆի ընդորինակումը կատարվում ե հատուկ գործիքներով:




Նկ. 44. Կավի բլրակի հորիզոնականները

կորեկ գծիկներ (լեռնագծիկներ) են դրվում. այդ գծիկները ցույց են տալիս, վոր տվյալ տարածությունը հորիզոնականից վեցի գծիկների աղատ ծայրն ե իջնում: Բլրի հորիզոնականներից յերեսում ե, վոր նա իջնում ե ամենափոքը (այսինքն վերևի) հորի-զնականից գեղի մեջ հորիզոնականը (նկ. 44): Հորիզոնականնե-րով զծված կաթսայաձև հովտի պատկերացումը, առաջին հա-

յացքից, լեռան կամ բլրի նման և յերկում: Սակայն դժվար չեն կատել, վոր թեքության ուղղությունը ցույց տվող գծիկները (լեռնագծիկներն) այդտեղ ուղղված են հորիզոնականներից դեպի ներս, այսինքն վերին ամենամեծ հորիզոնականներից դեպի ներքի ամենափոքր հորիզոնականը (նկ. 44):

Բոլոր ռազմա-տեղագրական քարտեզների վրա թվերով ցույց են տրվում տեղերի բացարձակ բարձրությունը: Այդ թվերի ոգնու-




Նկ. 45. Գարսայառ հավիտ

թյամբ շատ հեշտ է իմանալ ցանկացած հորիզոնականի, հետեւ պես և ցանկացած կետի բարձրությունը:


Բարձրության թվերը չպետք են շփոթել այն թվերի հետ, վորոնք ցույց են տալիս բնակատեղերի, տների թիվը: Այդպես, քարտեղի վրա «դյուլ» բառի տակ (նկ. 48) գրված ե «134». դա նշու-

նակում ե, վոր գյուղում 134 «տոռն» կա: Յենթաղբենք քարտեազում հատման բարձրությունը (նկ. 47) հավասար է 2 մետրի: պարզ ե, վոր այդ գեպքում հորիզոնականների բարձրությունները կարող են արտահայտվել միայն զույգ թվերով—0, 2, 4, 6, 8 մետր և այլն: Յեթե այդպիսի քարտեզի վրա բարձրության չափը ցույց տվող թիվը կոտորակ է կամ կենա թիվ, ապա պարզ ե, վոր



Նկ. 46. Հովիտ և քամբ

նա հորիզոնականին չի վերաբերում, այլ նրանից բարձր կամ ցածր գանձող վորեւե կետի (նման կետերը քարտեղի վրա նշանակվում են «ողակներով»): Որինակ՝ քարտեղի (նկ. 47) հարավ-արևմտյան անկյունում նշանակված ե «09»: Այդ թիվը նշանակված ե դադաթի վրա (ուշադրություն դարձրեք լեռնագծիկների վրա), պարզ ե, վոր այդ կետից սկսած, տեղի մակերեսույթն իջնում է. դարձ ե և




Նկ. 47. Սի գյուղի շրջանի քարտեզը



Նկ. 48. Գյուղի շրջանի օկարքը

այն, վոր այդ կետին ամենամոտ գտնվող հորիզոնականի բարձրությունը 99-ից պակաս և լինելու և լինելու յի զույգ թիվ։ Այժմ թիվը կլինի 98-ը։ Ուրեմն այդ հորիզոնականը գտնվում է ծովի մակերեսույթից 98 մ. բարձրության վրա։

Վերցնենք մի ուրիշ կետ գյուղից արևմուտք, ուր նշանակված



Նկ. 49. Քարտեզ (մասշտաբ 1 սմ. = 100 մ.)

Ե 83,8 թիվը և վորոշենք այդ թվից դեպի հյուսիս գտնվող հորիզոնականի բարձրությունը։ Մենք դատում ենք այսպես։ փոքր հորիզոնականի մոտ դրված էռունագծերը ցույց ե տալիս, վորտեղի մակերևույթն իջնում ե այդ հորիզոնականից դեպի դյուզը (դետի հոսանքով)։ կնշանակի այդ հորիզոնականի բարձրությունը 83,8-ից ավելի յեւ և քանի վոր ըստ օդայմանի նա զույց թիվ ե լինելու, ուստի մեր վորոնած թիվը կլինի 84։ Հետևապես, հորիզոնականի բարձրությունը կլինի 84 մետր։


50-րդ նկարի քարտեզի վրա ամբողջական հորիզոնականների համան բարձրությունը հավասար ե 5 մետրի, իսկ ամբողջական և զծիկներով ցույց տված հորիզոնականների մեջ—2,5 մետրի։ կնշանակի, հորիզոնականների բարձրությունը ցույց տվող թվերը բազմապատճեկ են լինելու 5-ին հնչակես նախընթաց, այնպես և այս քարտեզում, կոտորակային թվերը վերաբերում են վոչ թե հորիզոնականներին, այլ քարտեզի առանձին կետերին (որինակ քարտեզի հարավ-արևմտյան անկյունի 157,7 թիվը)։

Տեղագրական հարտեզների դիրքակնքումը նրանց ոգտագործման ժամանակ։ Վորպեսզի հնարավոր լինի անծանոթ տեղերում քարտեզից ուղարկել և նրա վրա նշանակուծ տեղերն ու առարկաները դուռել, քարտեզը պետք ե դրված լինի այնպես, վոր նրա հյուսիսային կողմն ուղղված լինի դեպի հորիզոնի հյուսիսային կետը։

Քարտեզի դիրքը կարելի յեւ վորոշել կամ կողմնացույցով կամ շրջապատում յեղած աչքի ընկնող առարկաներով և կետերով։

Դիրքակնքում կազմնացաւյցով։ Քարտեզի ուղղությունը կողմնացույցով վորոշելու համար պետք ե կողմնացույցը դնել քարտեզի շրջանակի վրա (արևելյան կամ արևմտյան կողմը) այնպես, վոր կողմնացույցի Ը կետը լինի քարտեզի հյուսիսային կողմը, իսկ Յ կետը—հարավային։ ապա քարտեզը պետք ե պտտել այնքան, վոր կողմնացույցի սլաքի հյուսիսային ծայրը կանգնի Ը կետի վրա։ Այդ նշանակում ե, վոր քարտեզի դիրք վորոշված ե, այսինքն քարտեզի հյուսիսային կողմն ուղղված ե դեպի հորիզոնի հյուսիսային կետը։ Դիրքորոշած քարտեզով շատ հեշտ ե գտնել քարտեզում նշանակած կետերը, առարկաները։

Քարտեզի դիրքը կարելի յեւ վորոշել տեղում յեղած առարկաների կամ կետերի միջոցով, առանց կողմնացույցի։ Յենթաքրենք թե մենք կանգնած ենք չորս ճանապարհների միացման կե-



Նկ. 50. Մակերևույթի կերպության գեղագիտական դիրքությունը.

տում (նկ. նկ. 48 և 49). յերեսներս դարձնում ենք դեպի դյուղը և քարտեղի վրա դանելով ճանապարհների միացման կետը, քարտեղը շրջում ենք այնքան, մինչև վոր ճանապարհների ուղղությունը քարտեղի վրա և տեղում ճամատեղվեն միմյանց հետ։ Դրանից հետո շատ հեշտ կլինի շրջապատում յեղած կետերը դժնել, քանի վոր նրանք դասավորված կլինեն այնպես, ինչպես նշանակված են քարտեղի վրա։ Յեղ իրոք, քարտեղի վրա ճանապարհների միացման կետից հարավ ընկած 99 բարձրությունը տեղում մենք կարող ենք շատ հեշտությամբ դժնել։ Նա մեր աջ կողմն ե դժնվում։ Մենք, նույնպես առանց գժվարության, կդանենք զրադացք, վոր դյուղի հարավային կողմից անցնող ճանապարհի ձախ կողմն ե դժնվում։

Արտաքին ուժերի ազդեցությունը լեռների վրա։ Ուղի, ջրի և ջերմության ազդեցությունից լեռներն աստիճանաբար քանդվում են, բարձր լեռներն աստիճանաբար ցածրանում և վերջիւերջորդուներ են դառնում։ Վորքան ավելի հին են լեռները, նրանք այնքան ավելի շատ են քայլայված լինում, վորքան ավելի նոր են նրանք՝ այնքան ավելի քիչ են քայլայված լինում։

Հին և նոր լեռներ։ Յերկրագնդի վրա բոլոր լեռները միաժամանակ չեն առաջացել։ Լեռների մի մասը առաջացել ե հնագույն ժամանակներում, որինակ՝ Սկանդինավյան և Ուրալյան լեռները և Դոնեցկի լեռնաշարքը։ Լեռների մյուս մասն առաջացել ե համեմատաբար ավելի մոտ անցյալում, ինչպես որինակ՝ Կովկասյան, Դրիմի, Ալպյան, Պիրենյան, Կարակասյան, Զիմալայան, Անդյան և այլ լեռներ։

Նոր լեռների գագաթները սրածայր են լինում, քանի վոր արտաքին ուժերը դեռևս չեն կարողացել մաշել այդ գագաթները։ Հին լեռների գագաթները, ընդհակառակը, հարթված են լինում և կլորացած։ Միլիոնավոր տարիների ընթացքում հին ժողովներն այսպիսի հսկայական տվյալներն են յենթարկվել, վոր իջել, ցածրացել են, վօմանք բաժանվել են միքանի մասերի, իսկ վոմանք ել համարյա հողին են հավասարվել։

Հին լեռների դոսին Յեղուսպայում անցնում ե Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի և Ուկրայնայի։ Սիէ-ի վրայով մինչև Ուրալ։

Քարտեղի վրա դաեք այդ լեռները։

Լեռներ և ոգտակար հանածոներ։ Յերկրագնդի վրա հանածոների բաշխման մեջ վորոշ որինաշափություն կա։ Առաջին այն վոր ամենակարենոր հանածոները և գլխավորապես յերկայի, հանունիկում են հնագույն բյուրեղացած զանգվածներում և նրանց շրջապատի լեռնաշղթաներում։ Հանգերով հարուստ զանգվածները և լեռները անցնում են՝ ա) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսարևմտյան կողմով (հարուստ յերկաթահանքեր՝ Կանադայի արևելյան կողմը և Նյու-ֆառնուլենդում) և Յեղուսպայի հյուսիսային կողմով (Երկաթի և այլ հանքառեղիներ հյուսիսային Ականդինավիայում և Կոլայի թերակղզում), բ) Հյ.Ա-ն-ի հյուսիսային և հյուսիսարևմտյան մասերով (յերկաթ և ոլոնձ), Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Զեխո-Սլովակիայի հնագույն լեռների դժով, իսպանիայի հյուսիսային մասերով, Կրիվոյ Ռոգով, Կերչի Բերակրպավայր, Ուրալով, Արևմտյան Սիբիրի հարավով, Յենիսեյի և Ի-նա գետի վտակների ուղղությամբ, Մեծ-Ամուրյան շրջանով, Զենդիկաստանի հյուսիսային կողմով, զ) Բրադիլիական բարձրավանդակով (յերկաթ) և Աֆրիկայի հարավային մասով (վոսկի)։

Յերկրորդ՝ նկատված է, վոր հանքեր յեղած վայրերում լինում և նաև քարածուխ։

Մեղ մոտ, Խորհրդային Միության մեջ, քարածինի հանքատեղի կան՝ Դոնբասի ավագանում (Դոնբասս), Ուրալում, Կարազանդայում (Կազանդայան), Արևմտյան Սիբիրի հարավում—Կուրանցայի ավագանում (Կուրանցաս)։ Քարածինի հսկայական պաշարներ կան արևելյան Սիբիրում (Զերեմիովոյի քարածինային առանում—Զերեմբասս), Մեծ-Ամուրյան շրջանում և Սախալինի թերակղզում։

ԽՍՀՄ-ի քարտեղի վրա ցույց տվեք յերկաթի և քարածինի վերը հիշած տեղերը։

Մեր յերկրի բնական հարստությունների գիտական լուրջ ուսումնասիրության ձեռնարկվել ե Խորհրդային իշխանության ուրով։ Խորհրդային իշխանության որով հայտաբերվել են բազմաթիվ հանքեր, վորոնց պաշարները հսկայական են։ Այժմ, համարյա յուրաքանչյուր տարի, նորանոր հանքատեղեր են հայտաբերվում։ 1930 թվին ԽՍՀՄ-ի քարածինի պաշարները հաշվում են մի 557 մլրդ տոնն, այժմյան տվյալներով, նրանք համար են 1100 մլրդ տոննի։

IV. ՀԻԴՐՈՍԹԵՐԱ

Զուրը մարդկային կյանքի անհրաժեշտ սպայմանն է : Այստեղ, ուր չկան գետեր, լճեր և անձրեներ չեն լինում, չի կարող գոյություն ունենալ և վոչ մի կյանք :

Դեռևս հնագույն ժամանակներից սկսած մարդիկ բնակության համար ընտրում ելին գետերի ափերը :

Մեծ քաղաքները, զործարանային արդյունաբերությունը և գյուղատնտեսության զանազան ճյուղերը կարող են զարգանալ այնպիսի տեղերում, վորագոյ մեծ քանակությամբ ջուր կա:

Անապատները նույնիսկ բնակելի յեն դառնում, յերբ ջրհոր ների կամ ջրանցքների միջոցով ջուր ենք ստանում այնտեղ :

Ջրի անկման ռւժն ոգտագործվում է ջրաղացներ, զործարաններ և ելեկտրոկայանների հողոր տուրբիններ աշխատեցնելու համար և այլն :

Մարդն իրեն անհրաժեշտ ջուրն ստանում է գլխավորապես գետերից, լճերից, աղբյուրներից, ջրհորներից և արհեստական ջրամբարներից :

1. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ

Ովկիանոսների, ծովերի, գետերի, լճերի և ճահիճների ջուրն արդի տաքությունից անընդհատ գոլորշխանում է : Ջրային գոլորշիներն ողի մեջ վերև են բարձրանում և, հանդիպելով ողի ավելի ջուրտ շերտերի, ստոշում են ու ամպեր առաջանում . իսկ ամպերից առաջանում են ձյուն ու անձրեւ :

Իսկ ո՞ւր ե զնում վերևից թափված ջուրը.

1. Նա հոսում է զեղի ցածր տեղեր և առվակներ ու դետակներ կազմում .

2. Նրա մի մասը նորից գոլորշխանում և և տարածվում ողի մեջ .

3. Մի մասն ել ծծվում է գետնի մեջ :

Գետնի մեջ ծծված ջրերը հաղեցնելով հողը և յերկրի վերին շերտերը, անցնում են դեպի խորքի շերտերը . խորքի շերտերի ջրերը կոչվում են ստորերկրյա ջրեր :

Մի քանի լեռնային տեսակներ, որինակ՝ ալաղն ու կրաքար՝ թռիչների յեն ջրի համար . ջուրը նրանց միջով հետությամբ

և անցնում : Այլ տեսակներ, ինչպես են կավը, դրանիւր և ավազաբարը, ջրի համար անքափանցելի յեն . ջուրը հանգիստ այսպիսի չերտերի, չի կարողանում նրանց միջով անցնել դեպի խորքերը : Այդ և պատճառը, վոր նրանցից բարձր գտնված շերտերը դրան են լինում :

Ճանապարհ բանալով դեպի յերկրի մակերեսությունը, ստորերկրյա ջուրն առաջանում է աղբյուրներ : Ջուր ստանալու համար կարելի յեն նաև ջրհորներ վորել, այսինքն՝ ստորերկրյա ջրի համար ճանապարհ բաց անել : Կան հաստուկ տեսակի ջրհորներ, վորոնիկ կոչվում են արևելյան ջրհորներ . այդ ջրհորները չատ խոր են լինում և ճանապարհ են բաց անում մեծ ճնշման տակ յեղած ջրերի համար : Ճնշումն առաջանում է նրանից, վոր ջուրը յերկու անթափանցելի և թեք շերտերի մեջ և հավաքված լինում : Թեքվածքը կարող է ուղղված լինել թե՛ մի կողմի և թե՛ յերկու կողմի վրա, ինչպես ցույց և տրված նկարում : Ճնշման տակ՝ ջուրը բարձրանում է յերկրի յերեսը կամ յերբեմն ել շատրվան և առաջանում :

Երտեղյան ջրհորների նշանակությունը չատ մեծ և առանձնապես անջղղի տեղերի համար : Նրանք այդ անջրդի վայրերը կյանքի և կուլտուրական ոջախիներ են դարձնում : Երինակ՝ մեղմություններ են բռնում, ավազուանները բամբակի համար պիտանի դարձնելու նպատակով, մեծ քանակությունը արտեղյան ջրհորներ են փորկում :


Մեծ քանակությամբ արտեղյան ջրհորներ կան կառուցված նաև արդյունաբերական խոշոր քաղաքներում, որինակ՝ Մոսկվայում, Լենինգրադում, Խարկովում և այլ տեղերում :

Յեթե ջուրն անցնում է լուծվող հանքային նյութերի շերտերի միջով, նա զանազան խառնուրդներ և ունենում իր մեջ : Սովորականից ավելի քանակությամբ հանքային նյութեր պարունակող աղբյուրները կոչվում են հանքային աղբյուրներ : Հանքային աղբյուրները մեծ մասամբ յերկաթային, ալկալային և աղման են լինում : Հանքային աղբյուրներից վոմանք բռւծիչ հատկություն ունեն . նրանցով զանազան հիմնադրություններ են բռւծում :

Մեղմ մոտ հանքային աղբյուրներ առանձնապես չատ կովկասում, կիսլովուկում և այլ տեղերում կան ածխաթթվային

(նարդանի) աղբյուրներ, ժելեղնովողակում՝ յերկաթային, Եսուն-տուկում և Բորժոմում՝ աղկալա-աղային, Պյատիգորսկում և Մացեստայում (Սոչի մոտ)՝ ծծմբային։ Հայաստանում հայտնի յի Արզնին։

Հստ ջերմության աստիճանի աղբյուրները լինում են սառը, գուշ և տաք։



Նկ. 51. Արտեզյան ջրերը.

Տաք աղբյուրները գուրս են գալիս այնպիսի տեղերում, վորտեղ հրարիսային յերմայիններ են տեղի ունեցել կամ ներկայումս տեղի յեն ունենում։ Նրանք իրենց ջերմությունը (վորը յերբեմն հասնում է 100° և ավելի) ստանում են յերկրի ներքին ջերմությունից։ Յերկրի խորքերում առաջացած զոլորշինների ուժեղ ճնշումից, տաք ջուրը դետնից դուրս և ժայթքում շատրվանի ձեռքով։ Շատրվանի նման գուրս ցայտող տաք աղբյուրները կոչվում են գեյզեր։ Գեյզերներ կան Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Իյելլուստրոնի սղարկում), Խոլանդիայում, Նոր Զելանդիայում, Յապոնիայում և Կամչաಟկայում։


Սողանիներ։ Յերկրի կեղևի թեք չերտերը, ճեղքը ված բաժանվելով հարեան չերտերից, սկսում են զանդադրեն սողալ անթափանցիկ չերտերի վրայով և իրենց տեղից յելնելով՝ սողանքներ են զոյցնում։ Հաճախ սողանքներն առաջանում են այն ժամանակի, յերբ ստորերկրյա ջուրը յելք չի գտնում։ Սողանքներ կարող են առաջանալ և այն դեպքերում, յերբ թեք չերտերն իջնում են զեպի գետափը և գետի ջուրը վողողելով այդ չերտերը՝ նրանց հիմքը փիխացնում և փափկացնում է։

Տատ վայրեր սողանքներից մեծ վնասներ են ստանում, որին

նաև՝ Ողեսսան, Սև ծովի կովկասյան ավերը, Ղրիմը և մանօք վանդ Վոլգայի ավերի քաղաքները՝ Գորկին, Ալյանովսկը և Սար բատուլը։

Սողանքների դեմ պայքարում են զանազան միջոցներով։ Ունակ՝ ստորերկրյա ջրերին աղատ յելք տալու համար, դեսնի տակ անցքեր, խողովակներ են շինվում կամ ջրանցքներ են փորվում (դրենաժ), սողանքներից առաջացած ձորակներն ամրացվում են և այլն։

Այրեր։ Ստորերկրյա ջրերը վողողում և լուծում են լեռնային



Նկ. 52. Գեյզեր.

տեսակները, առանձնապես կրաքարերը և Հակայական դատարկություններ են առաջացնում դետնի տակ։ Այդ դատարկ տարածությունները կոչվում են ստորերկրյա այրեր։

Ստորերկրյա այրերը զանազան ձևի և մեծության են լինում։ Կան այրեր, վորոնք մի քանի կիլոմետր յերկարություն ունեն և նեղ միջանցքներ։ Կամ լայնարձակ սրահների յեն նմանում։ Առանձնապես հայտնի յի Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների վայրեր մեծ վնասներ են ստանում, որին

Հանդներում գործիող Մամանուի այրը, վորէ մերկարությունն իր ճյուղավորություններով 250 կիլոմետրի յե հասնում. նա բաղդացած և մի քանի հարկանի «դահլիճների» շարքերից. դահլիճներից ամենամեծը 300 մ. բարձրություն ունի: Այրէ միջով մի գետ և հոսում և մի քանի լճեր կան նրա մեջ:

Հաճախ այրերի առաստաղից հոսող ջրի մեջ յեղած կիրը, նստելով առաստաղին, սրածայր ցցվածներ և գոյացնում. այդ ցցվածքները կոչվում են ստալակտիտներ: Նույնպիսի ցցվածքներ առաջանում են և հատակի վրա. սրանք ծայրերով ցցված են լինում զեպի վեր: Յերբեմն վերի և վարի ցցվածքները միանում են միմյանց հետ և սյուներ կաղմում:

Խորհրդային Միության մեջ շատ այրեր կան Ղրիմում, Կովկասում և Ռուսական:

Ծանրությունից այրերի առաստաղները յերեմն փլվում են:

2. ՀՈՍՈՂ ԶՐԵՐ

Առուներ և գետեր: Ստորերկրյա ջուրը, յելք գանելով դեղի յերերի յերեսը, կոյացնում և աղբյուրներ: Աղբյուրների ջուրը կաղմում և առվակներ, առվակները միանում և կաղմում են առուներ, առուները, հանդիպելով լեռնային և անձրեային ջրերին, միանում են և առաջացնում գետակներ ու ապա՝ գետեր: Գետերն սկիզբ են առնում բարձրություններում, թեք տեղերով հոսում ցած և թափվում ծովերը (վոմանք ել լճերը):

Գլխավոր գետն իր բոլոր վտակների հետ միասին կաղմում և մի սկսում, վոր կոչվում է գետային սխատեմ:

Այն ամբողջ տարածությունը, վորտեղից դետն իր բոլոր վտակներով հավաքում և իր ջրերը կոչվում և գետի ավազան: Մի գետի ավազանը մյուսից բաժանող գիծը կոչվում և ջրաժամ կիծ կամ անջրախտ:


Վորտեղից և ստանում գետն իր ջրերը:

Գետերն իրենց ջրերն ստանում են, կամ ինչպես ասում են, գետերը սնվում են ստորերերյա ջրերից, լեռների ճյուններից, անձրսի, ճյունի ջրերից և լճերից:

Գետի ջրի քանակությունը տարիվա տարրեր յեղանակներին տարրեր և լինում: Լինային յերկրներում հալոցքին ճյունի ջրերից շետի ջրի քանակությունն ավելանում է: Այն յերկրներում,

վորտեղ ձմեռը շատ և ճյուն գալիք, որինակ՝ Խորհրդային Միության մեջ, զարնան հալոցքին գետերը շատ են հորդանում, իսկ ամառը, չորսիվ ջրի գոլորշիցման, շատ են ծանծաղում: Այն գետերը, վորոնք միշտ անձրեների ջրով են սնվում կամ վորոնք անցնում են լճերից, վո՞չ շատ հորդանում են և վո՞չ ել շատ ծանծաղում:

Գետերի ջրերի մի մասը գոլորշանում և, մի մասը մարդիկ են ողտագործում վուողման և գործածության համար. իսկ մաս-



Նկ. 53. Զրբառա գրձ.

շատ մասը թափվում և ծովերն (ովկիանոսները) ու լճերը և լրացնում նրանց ջրերի պակասորդը:

Գետի ջրի մակարդակի բարձրությունը կարող և փոփոխվել նայած ջրի յելքի և մուտքի հարաբերության: Յեթե զետն ալելի շուրջ և ստանում, քան ծախսում և, այն դեպքում գետի մասը ջուր և ստանում, այն ծախսում և, ընդհակառակը, յեթի ծախսը դերակարգակը բարձրանում և և, ընդհակառակը, յեթի ծախսը կշռում և մուտքին, ջրի մակարդակն իջնում և:


Գետերի աշխատանիքը: Շատ մեծ և բարձրառեակ և գետերի աշխատանիքը և ստեղծադործող աշխատանիքը, վորով նըսնք անընդհանուր մաս փոփոխման են յենթարկում յերկրի մակերեսությը:

Վորքան ուժեղ և գետի հոսանքը, նա այնքան ավելի արագ և քայլայում իր հատակը և ջրերն հորձանքներն այնքան ավելի շատ են տանում իրենց հետ ալիք, քար կամ ավաղ, նայած ին շատ են տանում իրենց հետ ալիք, քար կամ ավաղ, նայած նրա հատակն ինչ կաղմություն ունի: Գետի քայլայիչ ուժը կախված է նրա հոսանքի արագությունից, հունի թեքության աստիվածից և ջրի քանակությունից: Վորքան ավելի ջրառատ լինի գեանից և ջրի քանակությունից:

տը, այնքան ավելի ուժեղ կլինի նրա հոսանքը. վորքան ավելի բարձրից հոսելիս լինի, այնքան ավելի ուժգնորեն կքանդի նա իր ամիերը: Այդ և պատճառը, վոր լեռնային գետերն ավելի մեծ ավերումներ են կատարում, քան հարթ տեղերի գետերը:

Առանձնապես մեծ ե լեռնային գետերի կատարած աշխատանքը. նրանք, պոկելով ժայռերից քարի կտորներ, գլորում են դեպի ցած, այդ քարերը ջրից հղկվում ու կոկվում են:

Պատահում են տեղեր, ուր գետի հունն ընդհատվում ե և չուրը բարձրից վայր թափվելով, գոյացնում է ջրվեժ:



Նկ. 54. Կիվաչ ջրվեժը.

Մեզ մոտ ջրվեժներ շատ կան: Առանձնապես հայտնի յէ Սունա գետի կիվաչ ջրվեժը:

Յեթե գետի ընթացքի մեջ հանդիպում են քարերի և ժայռերի շարքեր, այդ դեպքում գետը նրանց վրայով հոսում է արագ և աղմուկով ու կաղմում սահանքներ:

Խոշոր սահանքներ կան՝ Սվիր, Վոլգով, Դնեպր և Անդարա գետերի ընթացքում:

Վերին հոսանքում գետն անընդհատ քանդում է իր հատակն

ու արեւը: Միջին մասում, ուր հոսանքը դանդաղում է, գետն առաջ և քշում վերին հոսանքից բերած տիղմն ու ավաղը: Ներքին հոսանքում ջրի ընթացքն ավելի յէ դանդաղում, ավաղն ու տիղմը նստում են և ծանծաղուտներ ու շարժուն ավաղակույցներ առաջացնում դետի մեջ: Այդ ծանծաղուտները դանդաղ և համաշատ կերպով առաջ են շարժվում ջրի հոսանքի ուղղությամբ: Յերբեմն մի խորասուղված նավակ կամ նավ կարող է նոր ծանծաղուտի դոյացման պատճառ դառնալ և այդ ավաղակույցը մեծանալով կարող է դետի մեջ կղզի առաջացնի: Ծանծաղուտները շատ են կանգարում նավարկության: Ծանծաղուտները մաքրվում են հողհան մեքենաներով:

Գետարեւանի մուտ ծանծաղուտների ընթացքը դարձարում է,



Նկ. 55. Դելտա

Նրանք կանդ են առնում և կուտակվելով դետի առաջն առնում. այդ ժամանակ դետը բաժանվում է մի քանի ճյուղերի:

Այդպիսի գետաբերանն իր բոլոր ճյուղավորություններով է կղզիներով կոչվում և դելտա:

Դելտաներ ունեն վոլգա, նես, նեղոս, գանդես, Միսիսիպի և այլ գետերը:

Գետերը մեծ քանակությամբ տիղմ են կուտակում գետաբերանների մուտ յեղած ծովածոցերում. հաճախ այդ ծովածոցերը լցվում և դաշտավայրեր են գոյացնում: Այդպիսի ծագում ունեն լոմբարդիայի, Միջազգետքի, Հնդկաստանի դաշտավայրերը:

Հաշվել են, թե ինչպիսի հսկայական աշխատանք կարող է կատարել Նևան 300 տարվա ընթացքում: Այդ ժամանակի ընթաց-

քում Նեան կարող ե իր բերած տիղմով և ավագով 25 կլլում ենթ տարածություն լցնել և ցամաքեցնել: Աւրեմն, յեթե միջոցներ ձեռք չանվելին դետի բերած լիցքը մաքրելու համար, Լենին դրադը, վոր ներկայումս գտնվում ե ֆիննական ծոցի ափին, 300 տարի հետո ծովակից 25 կլլում ետք կհեռանար:

Դաշտավայրերում զետերն ուղիղ դժով չեն հոսում, այլ գալարումներով: Այդ յերեւոյթը բացատրվում է նրանով, վոր ափերը զանազան տեղերում տարրեր կազմություն և տարրեր ամուրություն ունեն: Յերբ գետի հոսանքը հանդիպում է ամուր ափի գեղարության, նա իր ամրող ուժով անդրադառնում և դեմք հակառակ ափը և յեթե տին այստեղ թույլ տեսակներից ե կազմով ված, նա իր անընդհատ և ուժեղ հորձանքներով քայլայում նրան, մինչև ամուր տեսակների հանդիպելը: Այդ ժամանակ ՀՀ-ի հուսանքն ուղղվում է դեպի հակառակ ափը և շարունակում է ի քայլայիչ աշխատանքն այնտեղ, վորտեղ այդ տեսակներն ավելի թույլ են: Ահա այդ ճեղք են առաջանում դետի ստույտները:



Նկ. 56. Գետի գալարումները.

Պտույտները յերեմն այնքան մոտ են լինում միմյանց, վոր գետի հորդացած ժամանակ նրանց միջև յեղած ցամաքի նեղ շերտերը չեն դիմանում զետի հորձանքին և ափերվում են. նման գետքերում զետեղ ուղղում ե իր հունը, իսկ հին հունի պտույտը լիցքով բաժանվում է նոր հունից և գոյացնում է յերկարածել մի կամ ճակիճ:

Անընդհատ վողողումների շնորհիվ, ժամանակի ընթացքում յերկի մակերեւոյթի վրա առաջանում են՝ գետահովիտներ:

Այն աեղերում, վորտեղ գետի ափերը գարնան վարարումներոց ծածկվում են ջրով, իսկ ամառը նորից աղատվում են ջրից:

առաջանում են վողողիող մարդադեմներ, վորոնք սովորաբար ծածկված են լինում խառարաւոյսերով:

Գետահովիտներում հունի յերկարությամբ գոյացնում են կիսակածքներ:

Այդացնելով իր հունը, գետը կտրում է այլ կիտիածքը և առաջացնում յեղերային տերրաներ. հունի հետագա խորացումները գոյահում են նոր աերբաներ:

Պլանի և քարտեզի վրա գետեր նշանակվում են պայմանական նշաններով:

Պլանների վրա մինչև 5 մետր լայնություն ունեցող գետերը նշանակվում են մեկ հաստ գծով:

5 մետրից ավելի լայնություն ունեցող գետերը նշանակվում են յերկու գծով (նեղ գոտու կամ յերիզի նման): Գետի ուղղությամբ գտնվում է նրա անունը, իսկ հոսանքի ուղղությունը ցույց է տրվում սլաքով:

Քարտեզների վրա գետերը նշանակում են հաստ գծով, վորը դպի գետարերանը հետղետե ավելի յէ հաստանում:

Գետերն իրեն հաղորդակցության նախապարհներ: Գետերն ողողակործում են վորպես ջրային ճանապարհներ, նրանք յերկրի տարրեր շրջանները կապում են իրար հետ: ԽՍՀՄ-ն իր գետային ցանցի մեծությամբ առաջին տեղն է գրավում աշխարհում:

Ծովային հաղորդակցության ճանապարհներից հետո գետային ճանապարհները հաղորդակցության ամենաաժեժան ճանապարհներն են: Գետային արանուլուրան ողողակործում է մեծածավալ բնուներ, ինչպես որինետկ հաշտակտիեներ, նավիթ, անտառանյալք և այլն փոխարեւու համար:

Գետերն իրար հետ միացվում են արհեստական ջրանցքներով. Ջրանցքների միջոցով կարելի յէ գետերից մի ամբողջական ցանց ստեղծել: Ներկայումս արգեն իրացվում է Մոսկվա վերին Վոլգային միացնելու հոկայական ծրագիրը:


Նեա և վողող գետերը, մի շարք ջրանցքների և այլ գետերի միջոցով, արդեն միացված են իրար հետ և մի անընդհատ ջրային ճանապարհ են կազմում: Այդ ճանապարհը կոչվում է Մարինյան սիստեմ: Եւրկորդ հնդամյակի ընթացքում այդ սիստեմը վերակառուցման ե յնթարկելու, վորպեզի նրանով ափելի մեծ քանակությամբ նավեր կարողանան անցնել: Այդ ճանապարհը

նավերն անցնում են կասպից ծովից մինչև Բալթիկ ծովը և հայ կառակ ուղղությամբ։ Այդ գծով տեղափոխում են գլխավորապես նավթ, հացահատիկներ, բամբակ, քարածուխ և մրգեղին։

Մրգության ե կառուցել և այլ ջրային ճանապարհներ (որին նաև՝ կամա—Պեչորա գիծը պետք ե միացվի Վոլգա—Դոնյան ջրանցքին)։

Գետերի եներգիայի ոգտագործումը։ Գետերի եներգիան լայն չափերով ողագործում ե հիդրոկայանների համար։

Խորհրդային Միության հիդրոկայաններից ստացած ելեկտրոներդիան գործադրվում է գործարանների և կոմբինատների հոկայական մեջնաներն աշխատեցնելու և քաղաքներին, կոլտնտեսություններին և խորհրդային տնտեսություններին լույս մատա-



ՀԱ. Վարդակական առաջ առաջընթացը.


Կարարելու համար։ Մեր ամենահզոր հիդրոկայանը Դնեպրի վրա կառուցած լենինի ամայան հիդրոկայանն ե։ Նա կառուցված է դնեպրյան սահանքների վրա։ Պետք ջուրը հավաքվելով սահանքների վերջում կառուցած հոկա պատվանդանի մոտ, ծածկում և սահանքների ժայռերը և հնարավորություն տալիս նավերին աղատանցնելու այլ ժայռերի վրայից։ Այդպիսով Դնեպրի հիդրոկայանը վոչ միայն ելեկտրական եներգիա յետալիս, այլև իր հոկա պատվարների չորրորդիվ նավարկելի յետարձրել դետը։

Դնեպրի հիդրոկայանը (Դնեպրոգեսը) համաշխարհային գիտանու ե։ Նա աշխարհի ամենահզոր հիդրոկայանն ե և ամերությության պարծանքը։ Ավելի ես խոշոր են լինելու Վոլգայի և մանավանդ Սևալարայի վրա կառուցվելիք հիդրոկայանները։ Անգա-

րայի հիդրոկայանների ընդհանուր կարողությունը շատ ավելի մեծ է լինելու, քան թե Դնեպրոգեսինը։

Գետերն իրեն վոռոգման ազրյուներ։ Մեծ ե գետերի դերը նաև անջրդի չոր տեղերի վոռոգման գործում։

Վոլգայի վրա կամիչինի ուստինում մի հիդրոկայան ե կառուցվում, վորը պիտի Վոլգայի ճախտափնյա անջրդի հողերից վոռոգմէ 4,3 մ. հեկտար տարածություն։



Նկ. 58. Մարինյան պիտեմը.

Վոռոգելու յետաւ 2½ մ. հեկտար տարածություն Ուկրայնի այն տափաստաններից, վորոնք յերաշտից պարբերաբար վնասվում են։ Յևելագրվում ե վոռոգել նաև Հյուսիսային Ղրիմի մի մասը. այդ հողերի վոռոգումը հնարավորություն կտա Ղրիմին բնակչության բազմակել բազմակել և կառուցվարեր բույսերի տարածությունը։ Գետերի գերը մեծ են Խորհրդային Հայաստանի չոր տափաստանների։ Գետերի գերը մեծ են Խորհրդային Հայաստանի չոր տափաստանների վոռոգման գործում։ Խորհրդային իշխանու-

թյունը կառուցեց մի շաբթ ջրանցքներ, վորոնք Արարատյան դաշտի ամայի շրջանները գարձրին այրիների ու բամբակի ցանքավայրեր. ներկայումս կառուցվում են մի շաբթ նոր ջրանցքներ՝ որինակ՝ Մեծ Սարդարապետի ջրանցքը, Շերքանցքը:

3. Լճեր

Ջեռվ լված փոսերը կոչվում են լիճ: Յերկրագնդի վրա յեղած լճերի ընդհանուր տարածությունը հավասար է $2\frac{1}{2}$ միլ' քառ. կմ. կամ ամբողջ ցամաքի 2 տոկոսը:

Լճերի ձևերն ու մեծությունը չափազանց տարրեր են լինում: ԽՍՀՄ-ի ամենամեծ լճերն են Կասպից և Արալյան լճերը. ջուրի աղի լինելու և իրենց մեծության պատճառով այդ լճերը ծով են կոչվում: Բայկալ լիճն ամենախոր լիճն ե աշխարհում. նրա խորությունը հասնում է 1741 մ.: Այն լճերը, վորոնց ջուրը յելք ունի լճեց դուրս դալու, կոչվում են հոսուն լճեր: Այդպիսի լճերի կարդին են պատկանում Սևան, Ոնեգա, Լադոգա և Բայկալ լճերը: Այն լճերը, վորոնցից գետեր չեն յելնում, կոչվում են կանգուն լճեր (Կասպից և Արալյան լճերը):

Կանգուն լճերի ջուրը մեծ մասամբ աղի յելինում, բայց կան և բացառություններ, ինչպես որինակ՝ Բայկալն ե: Իր աղիությամբ հայտնի յե առանձնապես Մեռյալ ծովը (Արեմտյան Ասիայում):

Հոսուն լճերի ջուրը, ինչպես և գետերինը, անուշահամ և լինում:

Կան այնպիսի աղի լճեր, վորտեղ աղն ինքնիրեն զատվում և չերտերով նստում հատակին: Այդպիսի լճեր պատահում են այն չոր վայրերում, վորտեղ լճերի ջուրն արագորեն գոլորշիանում է: Միայն Նիեթլուժակի մարզում 700 այդպիսի լիճ կա: Աղի մեծ պաշարներ կան Ելտոն և Բասկունչակ լճերում:

Այդ լճերից սոտացած աղը շատ կարեոր և ազդարենակառության համար, մյուս կողմից՝ ձկան և քիմիական արդյունաբերության համար:


Լիերի ծագումը: Լճերը դոյացել են զանազան ոլատճառներից:

1. Նրանցից վոմանք դոյացել են յերկրի վրա առաջացած իջվածքների չնորհիվ (այդպես են՝ Բայկալ, Մեռյալ ծովը, աֆ-

թիկական Նյասսա, Վիկտորիա և Տանգանայկա մեծ լճերը և ուղիղները):

2. Կան լճեր, վորոնք առաջացել են գետերի պառույտների տեղում:

3. Շատ լճեր են դոյացել հրաբուխների խառնարաններում և հրաբուխների մոտ յեղած գետահովիտներում, վորտեղ լավագի հեղեղները կտրելով գետի առաջը, լին են առաջացրել այդպես և դոյացել Սևանա լիճը:



Նկ. 59. Կամտ—Պեչորա—Վիչեցդա միավորությունը.

4. Զավազանց շատ են սառցադաշտային ծագում ունեցող լճերը:

5. Կան լճեր, վորոնք առաջացել են նախկին ծովածոցերի տեղիներում, ծովածոցերում գոյացած ավաղի հրվանդաններն աստիճանաբար կուտակումներից բարձրանալով, ծովածոցը բաժանել են ծովից և լին դոյացրել:

6. Յերեմն ել ծովից աստիճանաբար ծանծաղելով և մասերի բարձրանալով, լճերի ընդարձակ ցանցեր են առաջացրել իրենց տեղում:

Լիերի փոփոխականությունը: Մանր և վոչ խոշոր լճերի դոյացելունը յերկարատև չի լինում: Զանազան ոլատճառներից այդպիսի լճերն անհայտանում են: Մեծ մասամբ նրանք լցվում են

զետերի բերած կիովածքներով և ցամաքում. անապատներում նրանք լցվում են ավաղով: Լճերից վումանք աստիճանաբար ցամաքում են, յեթե ջրի յելքն ավել և մասքից: Վերջապես կան լճեր, վորոնք աստիճանաբար ծածկվում են յեղեղնուտներով, մամուռով, ջրաբոյերով և ժամանակի ընթացքում վերածվում տորֆային ճահիճների:

ՅԵՐԿՐԱԴՆԻՒԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԼՃԵՐԸ

Յեփրապայի լճերը՝ Անեղա, Լաղողա, Չուղ, Իլմեն, Բելոյի, Բողչնի, Ժընեվի, Ելտոն, Բասկունչակ:

Ասիայի լճերը. Կասպից, Արալյան, Բալխաշ, Բայկալ, Սևանա:

Աֆրիկայի լճերը. Վիկտորիա, Տանգանայկա, Նյասա:

Ամերիկայի լճերը. Վերին, Միջիզան, Հոււրոն, Երի, Անտարքիո:

4. ՈՎԿԻԱՆՈՍԵՐ ՅԵՎ ԾՈՎԵՐ

Ցամաքի ջրերը յերկրի ջրային ծածկուի միայն մի չնչին մասըն են կազմում: Ջրային ծածկոցի մեծ մասը ովկիանոսներն ու ծովերն են:

Ծովեր և նրանց խորությունը: Ովկիանոսի այն մասերը, վորոնք ցամաքի մեջ են մտած, կազմելով առանձին ջրամբարներ, կոչվում են ծովեր: Բոլոր աշխարհամասերը շրջապատկած է իր ծանծաղ ծովերով, վորոնց խորությունը 200 մետրից չի անցնում: Դա կարծես ջրի մեջ խորասուլված ցամաքի շարունակությունն և կազմում: Մոտավորապես 200 մետր խորությունից հետո հատակը չի անդամելոց ցածրանում և և սուր դառիթափ լանջերավ իջնում մինչև 5000 մ. խորություն. այնուհետև աստիճանաբար սկսվում և ավելի խոր ծովի շրջանը:

Ովկիանոսների ամենախոր տեղերը դտնվում են Մեծ կամ Խաղ ովկիանոսում՝ Ֆիլիպպյան կղզիների մոտ (10170 մ.): Առաջան ամենախոր տեղը գտնվել ե Մեծ Անտելյան կղզիների դեպի արևելք (8528 մ.), իսկ Հնդկական ովկիանոսում՝ Յավա կղզուց դեպի հարավ (7000 մ.):

Մարդիկ չատ վաղուց են սկսել զբաղվել ծովերի խորության և նրանց հատակի մակերեսվութիւնումնասէրությամբ:

Չափման գործիքները սկզբներում չատ հասարակ եյին և չելին կարող մեծ արդյունքներ տալ, քանի վոր նրանցով չեր կարելի մեծ խորություններ չափել: Զափումները կատարում եյին պարագանով, վորի ծայրին կապվում եր վորեն ծանրություն: Սովորա բար գործ եյին ածում ծանրոց (խորաշալ), վոր ներքին կողմից պատվում եր ճարպով: Հետագայում չափման գործիքները ավելի կատարելագործելով, սկսեցին պարանի փոխարեն մետրացար գործածել, իսկ խորաչափի փոխարեն մետրադի խողովակ, վորի վրա բարակ լարերով մի գունդ եյին ամրացնում: Հատակին հասնելով խողովակը զարկվում և խրվում եր հատակի մեջ, լցվում հատակում յեղած տիղմով, իսկ գունդը պոկելում եր և մնում հատակում: Այդպիսով, խողովակի միջոցով հատակից աղմի նմուշներ եյին հանում: Այժմյան գործիքներն ավելի ևս կատարելագործված են. նրանցով կարելի յի վոչ միայն մեծ խորություններ չափել այլ նաև հատակից լինային տեսակների նմուշները դուրս բերել: Վերջին ժամանակներս խորությունները չափում են ձայնային խորաչափներով: Խորությունը վորոշվում և ձայնի արագությամբ՝ ջրի մեջ: Զայնային խորաչափը չափ և հեշտացնում խորությունների չափումը, բայց նրանով հատակից տեսակների նմուշները չի կարելի ստանալ:

Ծովի հատակի մակերեսույթը: Մանծաղ ծովերի հատակի մակերեսույթը չափաղանց միապաղաղ ե:

Խոր ծովերի հատակի մակերեսույթը նույնակա անհամեմատ ավելի միապաղաղ ե, քան ցամաքի մակերեսույթը. նա ընդարձակ հարթության պատկեր ունի: Ալիքների, քամիների և գետերի քայլքայող աղղեցությունը ամենեին չի անդրադառնում ծովի հատակի վրա. ընդհակառակը, նրա մակերեսույթը հետզհետեւ ավելի ու ավելի յի հարթվում կարմիր կավի, հովային կենդանիների, բույսների մնացորդների նստվածքներով և ջրի այլ տականքներով:

Ծովային հատակի մերձակինյա տարածությունները ծածկած են լինում զանազան լեռնային տեսակների խոշոր կտորներով, քարերով և խոշոր ավաղով: Վորքան հեռանանք ավելից, այնքան ավելի չանը կինեն հատակի կիովածքները:

Խոր ծռվերի և ովկիանոսների հատակը ծածկված է գլխավորապես մանրադիտական կենդանիների և բույսի մնացորդներից առաջացած տիզմով։ Ամենախոր տեղերում հատակն ամորդջովին ծածկված է լինում կարմիր կալով։ Կարմիր կալով ծածկված տարածությունները շատ մեծ են Խաղաղ ովկիանոսում։ Հնդկական և Ատլանտյան ովկիանոսներում նրանք ավելի փոքր տարածություններ են կարմում, քանի որ սրանց խորությունը ավելի պակաս է։

Ծովի ջրի հատկությունները։ Ծովերի և ովկիանոսների ջրերի մեջ գորոշ քանակությամբ լուծված նյութեր են գտնվում։ Վորոնք ջրին դառնաղի համ են տալիս։ Այդ նյութերի մեծ մասը կերակրի աղից ե բաղկացած։

1000 մաս ջրի մեջ աղը կարմում է 35 մաս, կամ $3\frac{1}{2}$ տոկոս։

Ծովի մակերևույթի ջրի աղիությունը զանազան պատճառներից փոխվում է։ Վորքան գետերից ավելի շատ անուշահամ ջուր և թափվում ծովը, նրա ջրի աղիությունն այնքան ամելի պակաս և մինում։ Որինակ՝ Բալտիկ ծովի ջուրն այնքան ել աղեւ չեւ, վորովհետեւ գետերից և մթնոլորտային տեղումներից նա շատ և անուշահամ ջուր ստանում։ Տաք դոտում, վորտեղ գորորշիացումը մեծ է, ծովի ջուրը ամելի աղի յեւ լինում որինակ՝ կարմիր և Միջերկրական ծովերի ջուրը շատ աղի յեւ¹⁾։

Ծովերում ջրի մակերևույթի (այսինքն յերեսի շերտի) բարեխառնությունը տարբեր տեղերում տարբեր է լինում, այդ բացառը պարզում է նրանով, վոր ծովի ջուրը իր ջերմությունն ստանում է արեգակից, իսկ հայտնի յեւ, վոր արեգակի ճառագայթներն ամեն տեղ միենալոյն ույժը չունին։ Արևադարձային յերկրներում ծովերի և ովկիանոսների ջրի բարեխառնությունը հասնում է $+25^{\circ}$ -ից $+28^{\circ}$ ըստ Ցելսիուսի, իսկ հյուսիսային յերկրներում, տարվա ցուրտ յեղանակներին ջրի բարեխառնությունն իշնում է մինչև -2° և ջուրը սառչում է։ 6000 մետր խորությունից

1) Մի քանի ծովերի աղիությունը տոկոսներով
Սպիտակ ծով $2-2,5\%$
Աղօվի ծով $0,9-1\%$
Բալտիկ ծով $0,3-1,5\%$
Մ և ծով $1,7-2,2\%$
Միջերկրական ծով $3,7-3,9\%$
Կարմիր ծով $3,7-4,1\%$

ցածր բոլոր ովկիանոսներում ջրի բարեխառնությունը հավասար է լինում և մեծ մասմբ տատանվում է -1° և $+1^{\circ}$ մեջև։

Ծովերի տեսակները։ Կղզիներ։ Ծովերը լինում են ներքին և յեղերային։ Ներքին կոչվում են այն ծովերը, վորոնք բռլոր կողմէն ըլցապատված են ցամացներով և ովկիանոսների հետ միացած են նեղուցներով։ Ներքին ծովերը են Սև, Միջերկրական, Աղուի, Բալտիկ, Սպիտակ և այլ ծովեր։ Յեղերային ծովերի դրսի սահմանադիմում ովկիանոսներից բաժանվում են կղզիաշարքերով, այսպէս, վոր սրանց միացման դիմը ովկիանոսների հետ ավելի մեծ է, քան ներքին ծովերինը։ Յեղերային ծովեր են՝ Բերինդյան, Ակոտյան, Յաղոնական, Հյուսիսային Յեղեռային, Գերմանական, Կարայի, և այլ ծովեր։

Ծովը ցամաքից բաժանող սահմանագիծը կոչվում է ծովեգրիա չին չին։

Այն տեղերում վորտեղ ծովելի ալիքները զարկվում են ափերին առաջ և գալիս մեծ քայլքայում, ծովեղոյա դիմը ծովալած ու կարտված և լինում։ իսկ այն տեղերում, վորտեղ ալիքները կիտվածքներ են դոյրացնում ծովեղոյա դիմն ուղիղ և լինում։

Վորքան ափն ավելի շատ և քայլքայում, այնքան ավելի շատ ծոյեր, նեղուցներ, Յերակողիներ և կղզիներ են գոյանում։

Ցամաքի այն մասերը, վորոնք բռլոր կողմերից ըլցապատված են ջրով, կոչվում են կղզի։ Կղզիների խումբը կոչվում է արշիպելագ։


Կղզիները լինում են ցամաքային, հարթխային և կորալլային։

Ցամաքային կղզիները բաժանվել են աշխարհամասից կամ ցամաքի վրա տեղի ունեցած իջվածքների, կամ ծովի ալիքներից։ Քայլքայիլու հետեւնքով։ Վոր այդ կղզիները մի ժամանակ ժիացած են յեղել ցամաքի հետ, այդ ապացուցվում է նրանով, վոր նրանք բաղկացած են նույն լունային տեսակներից, ունեն նույն բուռական և կենդանական աշխարհները, ինչ վոր և նրանց մոտ յեղած ցամաքը։ Բացի դրանից, այդ կղզիներն ու ցամաքները լիցայից բաժանող ջուրը չեւ լինում։ Յեղուպայում ցամաքային կղզիների շարքին են պատկանում Մեծ Բրիտանիան, Իոնանդիկան, Սիցիլիան և ուրիշները, Ասիայում՝ Զանդյան, Ֆելապույան, Յաղոնական և այլ կղզիները։

Հարթխային կղզիներն առաջացել են ծովի հատակում դործող

Հըաբուխների արտակեժած նյութերից : Հըաբխային են՝ Համբարձման և Հեղինեցի կղզիները—Ատլանտյան ովկեանոսում, Հավայան ու Սանդվիչյան կղզիները—Խաղաղ ովկեանոսում :

Կորալլային կղզիները գոյանում են մանր ծովային կենդանիների — կորալլան պոլիպների կենսագործունեցության հետեւանքով : Պոլիպներն առջում են միմիայն տաք ծովերում : Նրանք ապրում են միմյանց կպած, խմբերով՝ գաղութներով : Պոլիպի մեռնելուց հետո մնում են նրա կրաքարային արտաքին կմախքը՝ այդ կմախքներու սերնդէ սերունդ կուտակվելով, ամբողջ կառուցվածք



Նկ. 60. Կորալլային կղզի.

ներ—ժայռեր են գոյացնում, վորոնք աճելով, հասնում են ծով
մակերևույթին։ Հաճախ, ցամաքի կամ կղզիների ափերին զուգա-
հեռ, ընդարձակ ծանծաղուաներ կամ խութեր են ստեղծվում այս
ժայռերից։ Կորալլային ժայռերը, յերբեմն, գոյանում են ստոր-
ջրյա ժայռերի վրա։ յեթե ծովի հատակը բարձրանում է այդ տե-
ղերում, ժայռերը ծովի մակերևույթն են յեշում և կղզիներ ա-
ռաջացնում։

Կորալլային կղզիները յերբեմն կազմու- են ողակներ, վոլո-

մեջ գոյացած ծանհաղ լճակը ովկիանոսէ Հետ միանում և մեկ կոմ
մի քանի նեղուցներով : Կրապային կղզիներ (ատոլներ) շատ կան
Մեծ ովկիանոսում :

Նեղուցները և ծովային ջրայինքները մի ծովը մյուսի հետ կապող ամենակարգ և յերբեմն ել միակ ճանապարհներն են. այդպատճառով նեղուցների նշանակությունը շատ մեծ է: Կապիտալիստական պետությունները դենքի ուժով իրենց ձեռքն են տռնում նեղուցները, բերդեր և ամրություններ են կառուցում նրանց ափերին և այդպիսով իշխում այդ նեղուցների և նրանց լրջապատճերապատերազմի ժամանակ նրանք փակում են նեղուցների մուտքը թշնամի պետությունների նավերի առաջ:

իմպէրիալիստները ծովային բազաներ են կառուցում նաև բաց ծովերում ընկած կղզիների վրա, վորտեղ կառուցվում են նաև նաև նաև հանգստուններ սպատերազմական նախատորմի համար և կենու- նավահանգստուններ սպատերազմական նախատորմի համար և կենու- րոնացվում են քարածխի, ջրի և սննդամթերքների մեջ պաշար- ներ:

Այդպես, անգլիական խմորերիալիստները դրավել են Ամունտյան
ովկեանոսից Միջերկրական ծովը տանող միակ ճանապարհը՝
Զիբրալտարի նեղուցը, Սումելի ջրանցքը և Մալակայի նեղուցը,
Վորություն Մեծ ովկիանոս և տանում։ Այդով վորը Մեծ ովկիանոսից Հնդկական ովկիանոս և տանում։ Այդով սկսած ծովագանձին բարուցում են նաև Անդրիայի մրցակից առ
կապիտալիստական պետություններ՝ Ֆրանսիան, ՀԱՄՆ-ը, Յա-
պոնիան և ուրիշները։

Ծովիերի նշանակությունը : Ծովերն ու ովկեանոսները ժարդու
համար բացառիկ կարեոր նշանակություն ունեն : Բայց ծովային
հաղորդակցության ճանապարհներով ժարդիկ անցյալում չեն կա-
րողացել այնպէս ազատ ու հեշտ ողտովել , ինչդեռ ներկայումս է
չենք ծովային հաղորդակցությունը կատարվում եր առագա-
տանավերով . այդ նավերը անցնում է յին մի ծովախորչից մինչ-
քառակի բոլով . կամ մի կղզուց մյուսը . ճանապարհը վորո-
շում եյին արեալ կամ աստղերով և կամ թուզունների թուիչքի ուղ-
ղությամբ . իսկ հետագա մասեւ կամ կոսմապուլազով :

Ծողիշարժ մեքենայի դյուտիք հետո ծովալին հաղորդակցությունն ակում և զարդանալ արագորեն։

დილაკორს ბილაქები ჩაღირება გვიცხავთ ამამალი და

հապարհների մեջ. դժբա հետ միասին՝ նրանք ամենաելական առաջարկած են:

Ծովային հաղորդակցության արագության, հարմարության և համեմատաբար ավելի պակաս վտանգավորության շնորհիվ, ովկիանոսների մի քանի տեղերն իսկական բանուկ ճանապարհներն են դարձել. նավերն այդ ճանապարհների վրա նույն չափ հաճախ են հանդիպում մինչյանց, վորչափ և կտոքերը՝ մեծ բանուկ ճանապարհներին:

Մեզ մոտ ծովային հաղորդակցության ճանապարհներով տեղափոխում և արտաքին առևտուրի ապրանքների 3% մասը. ծովային սետություններում, այսինքն Անդրկայում և Յաղոնիայում, տեղափոխում և այդ ապրանքների 100 տոկոսը:

Ծովերի կենդանական և բուսական աշխարհը շատ բազմազան և և հանդիսանում են զանազան արդյունաբերությունների առարկա: Զկնարդյունաբերական կենտրոններ են համարվում մեջ մոտ Մուրմանսկը, Հեռավոր Սրեկը և Կասպից ծովը: Մուրմանսկում ձկների գլխավոր արդյունաբերական տեսակներն են ծովառաելսը և սալմոնը, Հեռավոր Սրեկըում՝ սալմոնի սակները՝ տարածանը, թառափը և այլն: Հյուսիսի հարուստ ձկնորսարանները նախահեղափոխական շրջանում շատ թույլ են ողտագործվում: Հնդամյալը հիմնովին վերակառուցեց այդ տեղի ձկնարդյունաբերությունը. ներկայում ձկնորսությունը կատարվում է նոր կատարելագործված միջոցներով և նախկին սագաստանավերը արագությամբ փոխարինվում են նոր աեսակ նավերով և տրաուլներով: Տրաուլներից յուրաքանչյուրը ամբողջ լողացող ձկնարդյունաբերական գործարան են. վորուն ձուկը անմիջապես մշակվման և յենթարկվում հենց տրաուլի վրա: Նախկին յետամնաց ձկնարդյունաբերության փոխարեն սուսեղ ստեղծվում է տեխնիկայի նորագույն միջոցներով զինվորությունը քաղաքական տնտեսության մի նոր ընդարձակ արդյունաբերական ճյուղ:

Բացի ձկնորսությունից, ծովերում պարագում են և վորուն դությամբ: Վորսում են կետ, փոկ, ծովարջ և ծովացուլ: Մոտ վորսում են գլխավորապես փոկ և ծովարջ: Ծովարջը վորս վում է բերինդյան ծովի կղզիների վրա, իսկ փոկը՝ Սպիտակ

վում: Փոկն ապլում և հեռավոր հյուսվասում՝ մշտական սառուցաների շրջանում. լողացող սառուցաներն իրենց հետ փոկերի ամբողջ հոտեր են բերում դեպի Սպիտակ ծովը: Յարական Ռուսաստանում փոկերի վորսը անայնագործական ձեռվ եր տարվում. Վորսի հաջողությունը կախված եր լինում յեղանակից, քամիներից, փոկերի տեղը պատահաբար հայտնաբերելուց և այլն:

Խորհրդավոր իշխանության որով մանր տնայնագործական ձեռնարկությունների վորսարեն կազմակերպվեցին բարձր աելիների այլայով զինված խոչը սոցիալիստական ձեռնարկություններ: Կենդանների վորսն այժմ տարվում և սառցահատների, աերոպլանների և ռադիոյի մասնակցությամբ: Սուխտակ ծովը 1926 թվից քարտեզի վրա քառակուսիներով բաժանված է վորսորդական շրջանների. այդ քառակուսիները համարակալված են: Հետապնդական յերած սերպալանները, հայտնաբերելով վորսի աելիները, ռադիոյով անմիջապես հայտնում են, թե վորսը վոր քառակուսու շրջանում և գտնվում. Նրանք հայտնում են, նաև, թե ինչ ուղղությամբ պիտի գնալ սառուցաների միջից. այդ տեղերին մոտենալու համար:

Վորսած փոկերից հանում են կաշին՝ ճարպի հետ միասին կաշին՝ ճարպի հուղի նրա ամենաարժեքավոր մասն ե, նա գործադրվում է կաշու մշակման, սալոն յեփելու և մարդարին պատրաստելու համար և իրեն մեքենայի յուղ:

Մեզ մոտ թույլ ե տրվում վորսալ միայն յերիտասարդ արուներին: Կապիտալիստական յերկրներում այդ կենդանների պահպանման համար ամեններն հոգ չի տարվում. այդ պատճառով տեղական համար նրանք հիմնովին վոճառքանում են:

Ծովային բույսերը նույնպես ոգտագործվում են զանազան պատահների համար: Մեզ մոտ ծրագրված են նրանց ոգտագործումը կազմակերպել շատ ընդարձակ չափերով: Ներկայումս այդ նպատակով մեծ աշխատանքներ են տարվում Մեծ ովկիանուի ափերին:

Ծովային բույսերից ոգտագործվում են բոսորագույն ծովառեղիք, վորից ժելատին են պատրաստում. Ջրային կաղամբից յոդ և մի քանի մանդանութեր են պատրաստում. Ծովասեղը վործ և ածվում նաև իրեն դաշտերի պարատանյութ և այլն:

Հյուսիսային թերուային ծով: Այս ծովն աչքի յե ընկնում իր

մԵՃՈՒԹՅԱՆՔ: Ծովում մշտապես լողացող սառուցյները, վարո՞նց դից աղատ և միայն նրա արևմտյան ժամը, զգալի չափով էջեցնում են ծովափնյա շրջանների ողի բարեխառնությունը :

Սառուցյները համարյա անհաղթահարելի դժվարություններ են ստեղծում նավարկության համար : Սիրիու և Ամերիկայի հյուսիսային ափերի մոտ տեղ-տեղ նավարկության համար ճանապարհներ են բացվում միայն ամառը, այն ել կարճ ժամանակով :

Մշտական սառուցյներով ծածկված թեսուային տարածությունը միշտ անհաղթահարելի յե մնացել նավորդների համար և այդ պատճառով նա մեծ հետաքրքրություն և առաջացրել դեպի իրեն :

Դեռևս մեղնից 400 տարի առաջ խնդիր և դբված յեղել Ասիայի և Ամերիկայի հյուսիսային ափերի մոտով ճանապարհ գտնել Ատլանտյան ովկիանոսից Մեծ ովկիանոսն անցնելու համար :

Այդ ճանապարհը հայտնաբերեց Նորդ Շիլդը 1878—79 թ.՝ Նա Ատլանտյան ովկիանոսից ևսպազ ովկիանոսն անցավ Ասիայի հյուսիսային ափերի մոտով — հյուսիս-արևելյան ճանապարհով :

Ատլանտյան ովկիանոսից ևսպազ ովկիանոս տանող հյուսիսարևմտյան ճանապարհը հայտնաբերել և Նորվեգիացի Ամունդրունը 1903—5 թվականներին : Այդ ճանապարհն անցնում է Ամերիկայի հյուսիսային ափերի մոտով :

XIX դարում փորձում եյին թեսուին մոտենալ Հյուսիսային թեսուային ծովով :

Առանձնապես նշանավոր են նաև նաև Պիրիի ճանապարհով՝ դությունները, վորոնցից վերջինը 1909 թվին հասավ թեսուին :

Տեսուային ծովն իր ժամանով՝ բարենցի և կարայի ծովերով, ինչպես և մեր Միության ամբողջ հյուսիսն իր ահազին հարստություններով (անտառներ, մետաղի հանքեր, քարածուխ, ձկներ, ծովային վորս)։ ցարական Ռուսաստանի կողմից մնացել եյին անձևնամթելի և չուսումնասիրված :

Վ. Ի. Լենինը շատ լավ դիտեր թե ինչուիսի մեծ նշանակություն կարող ե ունենալ թեսուային հարուստ յերկրների ուսումնասիրությունը մեր յերկրի տնտեսության համար . նրա կարդարությունը կազմակերպվեց խորհրդային առաջին եկապեղիցիան «Պերսեյ» նավով :

Արկադիկական ինստիտուտը, վորն իրեւ Արկտիկան ուսումնասիրող դիտական հիմնարկության միակն և ամբողջ աշխարհում, կազմակերպվել է խորհրդային իշխանության ժամանակ :

1832—33 թվի թեսուային աշխատանքների մեծարույն մասը տարվում է Խորհրդային իշխանության մասնակցությամբ (1932—33 թիվը թեսուային միջազգային տարի յե համարվում) :

1932 թվին Արկտիկայի խորհրդային մասում աշխատում են 39 դիտակայտներ, 1933 թվին կազմակերպվեցին և 27 դիտակայտներ : Այդ հայաները դրադիւմ են յեղանակի, ծովային հոսանքների, ալիքների, փոթոսիկների, մառախուղների և այլ նման հարցերի ուսումնասիրությամբ :

Ծովային եկապեղիցիաներից նշանավորն է 1932 թվին բնիկ Ծմինդրի, զեկալարությամբ կազմակերպված եկապեղիցիան, վո-



Նկ. 61. «Սիրիույակով» սառցահատի անցած ուղին



րըն անցավ իր ճանապարհը «Սիրիույակով» սառուցահատի վրա (քանի վոր սովորական նախերով չեր կարելի սառուցյների միջից քանի վոր սովորական նախերով չեր կարելի սառուցյների միջներ)։ Պատմության մեջ չտեսնված հերսություններ կատարեց այդ եկապեղիցիան, կարողանալով հաղթահարել ճանապարհի դժվարությունները և ամառային կարճ նախկինությամբ:

մանակի ընթացքում Սպիտակ ծովից Մեծ ովկիանոսն անցնել։ Եկաղեղիցիան գիտական տվյալներ և հավաքել սառուցների չարժման, ծովային հոսանքների և այլ հարցերի վերաբերյալ և բարձրթիվ տեղերում խորության չափումներ կատարել։

Խորհրդային իշխանությունն արդեն կանոնավոր հաղորդակցություն և հաստատել Լենինդրադի, Արխանգելսկի, Մուրմանսկի և ՈՒ ու Յենիսեյ գետերի միջև։ Ներկայումս, Հյուսիսային Բևեռային ծովով, ամերիջական կապ և հաստատվում Ատլանտյան և Մեծ ովկիանոսների միջև։ Այս տարի, նավարկությունն սկսվելուն պես, սառցահատի ուղեկցությամբ մի նավախումբ և ուղարկվելու Լենայի գետաբերանը, վորն ապա անցնելու յի դեպքին չեղակալմա և վաղիվոստոկ։

Հեռավոր Հյուսիսի վրայով, բացի ծովային հաղորդակցությունից, կաղմակերպվում են նաև ողային հաղորդակցություն։

Հաղորդակցության այդ նոր ճանապարհները հնարավորություն կտան արարտել Հյուսիսային յերկրի արդեն սկսած ոոցիամբառական վերակառուցումը։

V. Մ Թ Ն Ո Լ Ո Ր Տ

1. ՈՂԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ, ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեղ թվում ե, թե մեր գլխավերեր փովում ե յերկնքի հոկայական կամարը։ Բայց մեզ այդպես թվում ե միայն իրականության մեջ «յերկնք» գոյություն չունի։

Բայց ի՞նչ բան ե մեր աչքին յերեացող յերկինքը։

Յերկրագունդը ըրջապատված ե մոտավորապես 500 կմ. բարձրություն ունեցող ողային շերտով կամ մթնոլորտառվական լորտի այդ շերտն ե, վոր արեգակի ճառապայմաներից կապույտույն ե ստանում և մեզ «յերկնքի» նման ե թվում։

Ողային կեղեց այն կողմ, անող և մութ տարածություն և սկսվում։

Ողի կազմությունը։ Ողը բաղկացած ե գլխավորապես յերկու պազերի խառնուրդից՝ թթվածնից, վորն անհրաժեշտ և շնչառության համար, և աղոտից։

Բացի դրանցից ողը պարունակում ե նաև ածխաթթու գաղաքային գոլորշիներ (վորոնց քանակությունը զանազան տեղերում

տարբեր է լինում), զանազան պինդ նյութերի մասնիկներ կտր վե և մեծ քանակությամբ բակտերիաներ։

10 կմ. բարձրություն ունեցող տարածության մեջ ողի զանգվածները շարունակ շարժվում են վերև ու ներքև և խառնվում միմյանց։ Այդ պատճառով այդ շերտում, վոր կոչվում ե արոպանիքրա, ողի կաղմությունը միշտ միաւեսակ ե։

Դրանից վերևե սկսվում ե ողի չափազանց նոսր շերտը։ Ողի այս շերտը կոչվում ե ստրատոսֆերա։ Ստրատոսֆերայում ողի բարեխառնությունը շատ ցածր է, 50° ցրտությունից ել ցածր։ Ստրատոսֆերայում թթվածնի քանակությունն այնքան քիչ է, վ ողը շնչառության համար անպետք ե։ Ողային հաղորդակցության համար ստրատոսֆերան մեծ առավելություններ ունի։ Աերոպլաններն այլտեղ կարող են թռչել մեծ արագությամբ, քանի վոր նոսր ողի դիմադրությունը շատ թույլ է։

Խորհրդային գիտական Յիուկովսկին փորձեր ե կատարում կառուցել ստրատոսֆերայում թույլու համար հասուկ աերոպլաններն—«ստրատոպլան»։

Ստրատոսֆերան ուսումնասիրելու նպատակով Բելգիայի գիտական Պիկարը յերկու անգամ (1931 և 1932 թ. թ.) բարձրացել է մինչև 16 կմ. բարձրություն։


Առանց մթնոլորտի կյանք չեր կարող դոյսւթյուն ունենալ յերկրագնդի վրա։ Կենսական բոլոր յերեսույթները տեղի յեն ունենում ողի մեջ յեղած թթվածնի չնորհիք։ Բացի այդ, մթնոլորտը չի թողնում, վոր արեգակից ստացած ջերմությունը դրվի տիեզերական տարածության մեջ։ Մթնոլորտից թափվող ջերերից ե գոյացել յերկրագնդի վրա յեղած ամրող ջուրը, վորը գոլորշիանալով կրկին բարձրանում ե ողի մեջ և նոր տեղումներ առաջացնում։

2. ՄԹՆՈՒՐՏԻ ՏԱՐԱՆԱԼԵ

Բարեխառնություն։ Յերկրագնի մակերեսույթի տաքանակը։ Յերկրի մակերեսույթի տաքության տղբյուրն արեգակն է։ Արեգակի ճառապայմաները մթնոլորտից անցնելով նրան շատ քիչ ջերմություն են հաղորդում։ Նրանք տաքացնում են զիսավորապես յերկը բի մակերեսույթը, վորից առա տաքանում ե նրան ըրջապատող ողը։

Արեգակի ճառագայթների թեքությունը հորիզոնի վերաբերյալ փոխվում է վոչ միայն որվա ընթացքում, այլ նաև տարրեր թեքություն և ունենում նաև տարրված տարրեր յեղանակներին և տարրեր աշխարհագրական լայնության վրա: Այդպես, ձմեռը և ամառը արեգակի ճառագայթները տարրեր թեքություն են ունենում: Ամառը նրանք ուղղղ են լինում, իսկ ձմեռը՝ թեք: Հասարակածի վրա նրանք ուղղահայաց են լինում, և քանի մոտենում ենք բևեռներին, այնքան նրանք ավելի թեք են լինում, ինչպես այդ յերեռւմ են նկարներից:

1. Գարուն և աշուն: Գարնան և աշնան կես որին արեգակի ճառագայթները հասարակածի հորիզոնի մակարդակի վրա ընկնում են ուղղահայաց, արեգադարձների հորիզոնի մակարդակի վրա:



Նկ. 62. Արեգակի ճառագայթների թեքությունը հորիզոնի վերաբերյալ՝ Գարնանը և աշնանը


66½° անկյունով¹⁾), իսկ բևեռներում նրանք անցնում են հորիզոնի մակարդակին զուղահեռ, այսինքն հորիզոնից ամենեւ չեն բարձրանում:

2. Ամառ: Ճառագայթները հասարակածի վրա ընկնում են 66½° անկյունով, հյուսիսային արեգադարձի վրա—90°, հարավային արեգադարձի վրա—43°, հյուսիսային բևեռի վրա 23½° անկյունով, իսկ հարավային բևեռում արեգակը հորիզոնի գծից ցած լինում (կես որին գիշեր և լինում):

3. Ձմեռ: Ճառագայթները հասարակածի վրա ընկնում են

66½° անկյունով, հյուսիսային արեգադարձի վրա—43°, հարավային արեգադարձի վրա—90° անկյունով. հյուսիսային բևեռի վրա նրանք հորիզոնի գծից ցած են լինում, իսկ հարավային բևեռի վրա ընկնում են 23½° անկյունով:

Տարբեր տաքանակու համեմատ յերկրի մակերեսությը բաժանվում է հինգ ջերմական գոտիների, վորոնք հետեւյալներն են. մեկ տաք գոտի, վորը տարածվում է յերկու արեգադարձների մեջ, յերկու բարեխառն գոտիներ, վորոնք գտնվում են արեգադարձների և բևեռային շրջանների մեջ և յերկու ցուրտ գոտիներ, վորոնք



Նկ. 63. Ամառ. Արեգակի ճառագայթների ինչպես են ընկնում հորիզոնի մակարդակի վրա

ընկած են բևեռային շրջանների մյուս կողմը՝ դեպի բևեռները:
Բայց դա շատ մոտավոր բաժանում է: Առանձին դեպքերում շեղումներ չատ կան այդ բաժանումից: Որինակ՝ բարեխառն գոտիներում կան այնպիսի տեղեր, վորոնք ավելի տաք են, քան առաջ գոտում տեղեր, կամ, վորոնք ավելի տաք են, քան բարեխառն գոտիներում: Նույնպիսի տարբերություններ կան միևնույն գոտիների տեղերի մեջ:

Շեղումները տեղի յեն ունենում նրանից, վոր՝ 1) ցամաքը և ջուրը տարրեր արագությամբ են տաքանում և ցրտում, 2) վոր տվյալ տեղի ողի բարեխառնությունը կախում ունի տեղի բարձրությունից և 3) ողի զանդանների տեղափոխություններից:

Ցամաքը և ջուրը տաքանակու տեսակետից իրարից տարրերը լուս են նրանով, վոր ցամաքը ավելի շուտ և տաքանում և, քան ջուրը:

¹⁾ Երկրի տռանցքը նրա որբքանի հետ նույն չափի անկյուն և կողմուն

Ապա, մենք գիտենք, վոր ողն իր տաքությունը ստանում է յերկրի մակերեսութից. ներքեւ տաքացած ողը վերև բարձրանալով լայնանում է, իսկ լայնանարու համար վորոշ քանակությամբ տաքություն է ծախսվում. մոտավորապես յուրաքանչյուր 100 մետր բարձրանալիս ողի բարեխառնությունն իջնում է 1°-ով: Այդ է պատճառը, վոր նույնիսկ հասարակածի վրա, 5 կիլոմետրից ավելի բարձր լեռները ծածկված են լինում հավիտենական ձյունով: Ահա թե ինչու ողի բարեխառնությունը կախում ունի բարձրությունից:

Ողի շարժման ժամանակ սառն ողը բնեռներից դեպի հասարակածն է գնում, իսկ տաք ողը հասարակածից դեպի բնեռները:

Բարեխառնության չափամուր: Զերմության աստիճանի փոփոխությունները, վորոնք ավտոմատիկ կերպով նշանակում են չերմության ամեն մի փոփոխություն. կամ գործ են ածում սովորական ջերմաչափեր (Ռեզոյուրի, Ցելսիուսի): Սովորական ջերմաչափերով ողի ջերմության աստիճանը չափում են որական 4 անդամ՝ ժամը 1-ին (դիշերվա), ժամի 7-ին (առավոտյան), ժամի 13-ին (յերեկոյան 1-ին) և ժամի 19-ին (յերեկոյան 7-ին):

Գումարելով այդ տվյալները և առա բաժանելով չորսի՝ ստանում են որվա միջին բարեխառնությունը: Ամսվա միջին բարեխառնությունն ստանալու համար գումարում են ամսվա որերի միջին բարեխառնության թվի վրա: Նույն ձևով ել տանում են տարվա միջին բարեխառնությունը:

Որվա ընթացքում ճառագայթներն ավելի բարձրից են ընկնում կեսորին, բայց ամենաբարձր բարեխառնությունն ստացվում է վոչ թե կեսորին, այլ 2—3 ժամ հետո: Նույն յերեսություններում ե գիշերը, ամենացածր ջերմաստիճանը լինում է վոչ թիվ կեսորին, այլ լուսաբացին:

Մեզ մոտ թեև արեգակի ճառագայթներից ամենաքիչ ջերմություն ստացվում է դեկտեմբերին, բայց ամենացուրտ ամիսը հունվարն է լինում: Ամենատաք ամիսը հունվան է, չնայած վոր արեգակի ճառագայթներն ավելի ուղղահայաց են լինում հունվարին: Այդ բացարձում են նրանով, վոր յերկրի մակերեսությը վոչ միայն ստանում է, այլ ծախսում է ջերմությունը:

Քանի դեռևս տաքության մուտքը գերազանցում է յերեխի, ողի ջերմությունը չարունակում է բարձրանալ (մինչեւ յերեկոյան

4°, 14—15-ը և մինչեւ հուլիսի վերջը), ողի բարեխառնությունը սկսում է իշնել, հենց վոր տաքության յերեք գերազում է մուտքից:


ԲԱՐԵԽԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԸ

Որվա ջերմության առավելագույն և նվազագույն աստիճանների տարբերությունը կոչվում է բարեխառնության որական տատանում կամ որական ամսվիտուդ: Ամենատաք և ամենացուրտ ամսվաների միջին բարեխառնությունների տարբերությունը կոչվում է բարեխառնության տարեկան տատանում կամ բարեխառնության տարեկան ամսվիտուդ: Դեպի բներ, բարեխառնության որական տատանումները թուլանում են: Այսպես որինակ՝ հասարակածի վրա որական ամսվիտուդի միջին չափը (միջին հաշվով) հավասար է 6°, Մուկվայում՝ 5°-ից պակաս ե, իսկ նոր Յերկրում (73° հ. լ. տակ)՝ պակաս է 2,5°-ից:


Ընդհանուր առմամբ ամսվանուդի մեծությունը կախված է վոչ այնքան աշխարհագրական լայնությունից, վորքան յերկրի մակերեսութիւնից կազմությունից: Որական տատանումներն առանձնակետ մեծ են լինում բարձր լեռնադաշտերում, վորսեղ ողի նորության պատճառով յերկրի մակերեսությը ցերեկների ուժեղ կերպով տաքանում ե, իսկ գիշերներն արագորեն ստուգում: Ասկանամբ՝ Տիբեթի և Պամիրի լեռնադաշտերում, որական տատանումը յերեմն 26°-ից բարձր է լինում, իսկ չյուսիսային Ամերիկայի մեծ բարձրավանդակում 40°-ից բարձր:

Տարեկան տատանումներն ընդհակառակը աշխարհագրական լայնության աստիճանի մեծացման հետ մեծանում են: Հասարակածի վրա նրանք աննշան են. այլտեղ ամենացուրտ ամսվա միջին բարեխառնությունը հավասար է 20°-ի, իսկ ամենատաք ամսվանը՝ 22°-ի. տարբերությունը միայն 2° է: Շատ չնշին են բարեխառնության տատանումները ծովի վրա և ծովախնյա այն յերկրներում, վորոնք յենթակա յեն ծովախնյա քամիների աղղեցության:

Յամագի ներքին մասերում, արևադարձների և բներների միջև ըսկած տարածության վրա, ամսովա և ձմեռվա բարեխառնության տարբերությունը 15°-ից բարձր է լինում: Մուկվայում բարեխառնության տարեկան ամսվանուդը հավասար է 30°, իսկ հակառակում՝ 57°:



108



Նիւ. 65. Համայնական խթանի քայլությունը և սնողավայրերը բնակչության տարրին մայուսից մինչև կոչվող կույտական շրջանը

109

Իզորերմները : Վորագեսպի մէնք պարզ պատկերացում ունենանք, թե ինչպես են դասավորված յերկրադնդի վրա հավասար ջերմություն ունեցող վայրերը, մէնք զծերով միացնում ենք իրար այն կետերը, վորոնց տարեկան ամենատաք (մեղ մոտ հուլիսը) և ամենացուրտ (մեղ մոտ հունվարը) ամիսների միջին բարեխառնությունները հավասար են իրար : Ստացված կոր գծերը կոչվում են հավասար զերմուքյան գծեր կամ իզորերմներ :

Յեթե իզոթերմը զուգահեռականի ուղղությամբ ե դնում, այդ նշանակում ե, վոր այդ զուգահեռականի վրա դանված բոլոր վայրերը միևնույն միջին բարեխառնությունն ունեն : Յեթե իզոթերմը թեքվում ե գեղի հյուսիս, նշանակում ե, վոր միևնույն զուգահեռականի վրա պատահում են ավելի բարձր բարեխառնություն ունեցող տեղեր :

Յեթե իզոթերմը զուգահեռականից դեպի հասարակածն և թեքվում, նշանակում ե, վոր թեքման կետից սկսած՝ զուգահեռականի վրայի տեղերը ավելի ցածր ջերմություն ունեն և վոր միատեսակ ջերմություն ունեցող վայրերը հասարակածին ավելի մոտ են դանում :

Նայեցեք հունվարյան իզոթերմների քարտեզին : Յերբ հյուսային կիսադնդում ձմեռ ե, իսկ հարավայինում՝ ամառ, հյուսային կիսագնդում՝ ովկիանոսների հյուսիսային մասերում իզոթերմն ուժեղ կերպով թեքվում ե դեպի բևեռ, իսկ ցամաքի ներքին մասերում նա թեքվում ե դեպի հասարակածը և, ընդհակառակը, հուլիսին (ամառը) ցամաքի ներքին մասերում նա թեքվում ե դեպի բևեռը : Այդ թեքումներն ապացուցում են, վոր ամառները ցամաքն ավելի տաք ե լինում ծովից, իսկ ձմեռները ավելի ցուրտ :

Իզոթերմների քարտեզների վրա ձվածիր գծերով նշանակված են ամենացուրտ և ամենատաք տեղերը : Քարտեզից յերեւում ե, վոր ամենացուրտ տեղը գտնվում է Վերիսոյանսկի մոտերքը—Ասելայի հյուսիսում : այդտեղ միջին բարեխառնությունը հավասար է —48° :

Ցուրտ տարիներին պատահում են որեր, յերբ ջերմությունն իջնում ե մինչև —70° : Ամենատաք տեղերը հունվարին գտնվում են Հարավային ցամաքների ներսը, հարավային արևադարձի մօտ, Հունվարին այդտեղ արեւի ճառագայթներն ուղղահայաց են ընկա-

նում (այդ ժամանակ Ավստրալիայի ներքին մասերում բարեխառնությունը հասնում է 32°), իսկ հուլիսին, ընդհակառակը, ամենաբարձր բարեխառնությունը (32°) լինում ե հյուսիսային արեալարձի շրջանում, Հյուսիսային Ամերիկայում և Ասիայում :

3. ՈՐԻ ՃՆՇՈՒՄԸ ՅԵՎ ՔԱՄԻՆԵՐ

Ուր թեթե ե, բայց չնորհիվ նրա չերտի հաստության, նրա ճնշումը շատ մեծ է : Միայն տրոպոսֆերայի շրջանում ողի շերտի հաստությունը հասնում է 10 կմ .: Աղի ճնշումը 1 քառ. մ. վրա հավասար է 1 կր . կամ 1 քառ. մետրի վրա 10 տոննի : 1 քառ. մետրի վրա 10 տոնն ճնշումը միջին ճնշում ե և կարող ե տատանվել 9-ից մինչև 11 տոնն 1 քառ. մ. վրա :

Աղի ճնշումը կարելի յի չափել սնդիկային բարոմետրով¹⁾ կամ աներությով (ծանրաչափով) :

Յեթե մենք հետեւնք բարոմետրին, կնկատենք, վոր սնդիկի բարձրությունը տարբեր որերում տարբեր է լինում . յերբեմն նա միլիմետրից բարձր է կանգնած լինում, յերբեմն ցածր : Աներութեա մեջ փոփոխությունները ցույց ե տրվում ոլաքով—ոլաքը թեքլում ե աջ կամ ձախ :

Յերբ ուզում ենք նշել ողի ճնշման փոփոխությունները (բարոմետրով չափելու լինենք թե աներությով), ասում ենք՝ բարոմետրը բարձրանում է վեր, բարոմետրն իջնում է (լինում է) :

Բարոմետրի իջնելը կամ բարձրանալն առաջանում է ողի մըշտական շարժումներից, վորոնք տեղի յին ունենում ուղղահայաց

¹⁾ Սնդիկալին բարօմետրն ալպիս են պատրաստում . վերցնում են մի ալպակա յերկար խողովակ և բաց ծայրով դնում են անոթի մեջ, վոր նույնական լուսաված և լինում սնդիկով : Աղի ճնշելով անոթի մեջ յեղած սնդիկի վրա, չի թողնում, վոր խողովակի մեջ և եղած սնդիկը թափվի : Խողովակը ամրացվում է անոթի կպցրած ձողին, վորն անոթի սնդիկի մակերեսությունը սկսած բարձրանալում է միլիմետրերի : Յերեանում սնդիկը կանգնում է միջին հարզով շոշափելով միլիմետր բարձրության վրա :

Աներությով կար ժամացւյցի ձև ունի . Կրա մեջ զրված է տառագահան պատկր ունեցող մի մետրի առափ, վորի միջից ողը հանգած է լինում : Աղի ճնշման փոփոխություններից անշահակառակ պատերը մեկ կամ մերս կողմի են թեքվում . հատուկ մեխանիզմի միջնորդ պատերի զարժութեանը հաղորդվում են ուաքին, վորը թվացույցի վրա ցույց ե տակիս ճնշումը միլիմետրերով :

կամ հորիզոնական ուղղությամբ և բերում են իրենց հետ կամ առ վելի սպն և խիտ ող, կամ ավելի տաք և նոսր ող:

Քամիներ: Ողի շարժումը կոչվում է քամի:

Քամին առաջանում են նրանից, վոր յերկրի մակերևույթի տարեր տեղերում ողի ճնշումը միատեսակ չի լինում. մի տեղ նա լինում են բարձր, իսկ մի այլ տեղ ցածր:

Քամու շարժման որենքները հետևյալներն են. ա) քամին շարժվում են բարձր ճնշում ունեցող շրջաններից, (բ) դեպի ցածր ճնշում ունեցող շրջանները (ց):

բ) Վորքան մեծ լինի ողի ճնշման տարրերությունը (միջորեականի մի աստիճանի կամ մոտավորապես 111 կմ. հեռավորության վրա), քամին այնքան ավելի ուժեղ կլինի (փոքր տարրերությունից առաջանում են թույլ քամի, իսկ շատ մեծ տարրերությունից՝ փոթորիկ):

գ) Յերկրագնդի որական շարժման չնորհիվ քամիները շեղում են իրենց սկզբնական ուղղությունը՝ հյուսիսային կիսագնդում—դեպի ձախ:

Քամին իր անունն ստանում է հորիզոնի այն կողմի անունից, վոր կողմից նա փշում եւ: Հյուսիսային կողմից փշող քամին կուլում են հյուսիսային քամի, հարավից փշող՝ հարավային: Հյուսիսային քամին շեղվելով իր ընթացքից, նախ փոխվում է հյուսիս-արևելյանի և ապա արևելյան քամու, իսկ հարավայինը՝ նախ հարավ-արևմտյան և ապա արևմտյան:

Իզորարներ: Ողի հավասար ճնշում ունեցող տեղերը միացվում են կոր գծերով. այդ գծերը կոչվում են իզորարներ: Իզորարների մոտ գրված թվերը ցույց են տալիս ողի ճնշումը միլիմետրով¹): 760 միլիմետրից փոքր թվերը ցույց են տալիս ցածր ճնշում (ց) ունեցող վայրեր, իսկ 760-ից մեծ թվերը՝ բարձր ճնշում (բ) ունեցող վայրեր:

1) Եեղանակի բյուրոյի հրատարակած նոր քարտեզներում միլիմետրի փոխարեն ճնշումը նշանակված են միլիմետրներով: 1000 միլիմետրը հավասար է 750,2 մմ: Միլիմետրերը միլիմետրների վերածելու համար տված թիվը պետք են բազմապահել 2/4-ով և ընդհանուակր, միլիմետրներ միլիմետրի վերածել լին ուղարկե և բազմապահել 2/4-ով: Ողի միջին ճնշումը հավասար է 70055 լոմ 2013 միլիմետրի:

Քամիները նշանակվում են սլաքներով. սլաքի ուղղությունը դույց և տալիս քամու ուղղությունը:

Հունվարյան իզորարների քարտեզի վրա հյուսիսային կիսակնդումը յերկու տեղ նշանակված ե ց (մեկը Առլանտյան, մյուսը Մեծ ովկիանոսի հյուսիսային մասում) և չորս տեղ բ (Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում և Առլանտյան ու Մեծ ովկիանոսների արևադարձային մասերում): Հարավային կիսագնդում կա յերեք ց (Աֆրիկայում, Ավստրալիայում և Հարավային Ամերիկայում) և յերեք բ (յերեքն ել ովկիանոսներում): Ցի շուրջը յեղած սլաքը ներս և ընդհակառակը, բոլոր տեղերում Բ-ից դեպի շրջապատն են ուղղված: Ցեթե մատի ծայրը սլաքի ուղղությամբ տանենք, կնկատինք, վոր հյուսիսային կիսագնդում Ցի շուրջը սլաքները դնում են ժամացույցի ընթացքին հակառակ, իսկ Բ-ի շուրջը՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ:

Հարավային կիսագնդում հակառակն ե տեղի ունենում: Հունվարյան իզորարների քարտեզի վրա, ովկիանոսներում Ց և Բ կետերի դասավորությունը համարյա նույն ե, այսինքն Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում ցամաքների վրա Բ կետեր չկան, այլ նրանց փոխարեն ունենք նորերը, այն ե Ց կետեր: Թե հունվարյան և Ց հունվարյան քարտեզներում հասարակածը մնում ե իբրև Ց շրջան:

Վորպեսզի ողի տարրեր ճնշման դասավորությունը հասկանալի լինի մեզ համար, անհրաժեշտ ե ծանոթանալ մթնոլորտի ամերի շրջանառության հետ:

Մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը: Ողի ճնշումը հասարակածային գոտում ցածր ե լինում (Ց), իսկ բնեոներում բարձր (Բ): Դրա չնորհիվ ողը հասարակածից շարժվում է դեպի բնեոները և բնեոներից դեպի հասարակածը:

Հասարակածի և Ց-իդ գուգահեռականի մեջ ընկած գոտին: Հասարակածի ողը տաքանալուց բարձրանում ե և վերին շերտերում տարածվելով (մոտավորապես 2 կմ. բարձրության վրա)՝ հոսում է դեպի հյուսիս և դեպի հարավ: Քանի վոր լայնության շրջագծեարը, այսինքն գուգահեռականները, դեպի բնեոները հետզհետե նեղանում են, ողի հոսանքի հունն ել, քանի մոտենում ե բնեոներին, այնքան նեղանում ե: Այդ պատճառով, բնեոներին մոտենա-

լով, ողը ավելի ու ավելի յե կուտակվում վերին շերտերում : Բայց այդ յերկրի պատվելու պատճառով . վերին քամիները—հարավայինը հյուսիսային կիսագնդում և հյուսիսայինը՝ հարավային կիսագնդում—30° լայնության մոտ դառնում են արևելյան քամիներ և դեպի հյուսիս չեն շարժվում : Այդ յերկու պատճառներից են առաջանած ովկիանոսների մերձարեալարձային մասերի բարձր ճնշման ըրջանները (Յ) :

Պասաստներ : Մթնոլորտի վերին շերտերում կուտակված այլ խիտ ողը ցած և իջնում և շարժվում թե՛ դեպի հասարակածը, և թե դեպի բևեռները : Մկղբում դեպի հասարակածը փչող քամիները փչում են հյուսիսային—հյուսիսային կիսագնդում և հաւալից—հարավային կիսագնդում : Հետո նրանք փոխում են իրենց ընթացքը և հյուսիսային քամին փշում ե իրեւ հյուսիս-արևելյան քամի (հյուս. կիսագնդում) և հարավայինն իրեւ հարավ-արևելյան քամի (հար. կիսագնդում) :

Ամբողջ տարին անընդհատ փչող այս քամիները կոչվում են պասաստներ :

Հասարակածի վրա, վորտեղ ողի հոսանքը վերև և բարձրանում, ցածրում մշտական քամիներ գոյություն չունեն : Այդ հասարակածային հողմազուրկ շրջանն ե, վորտեղ առաջաստանավերի համար սովորաբար մեծ դժվարություններ են ստեղծվում : Յերեւեմն շարաթներով ողի մեջ վոչ մի շարժում չի լինում և առաջաստանավերը ստիպված են լինում անշարժ մնալ իրենց տեղերում :

Ողի վերին շերտերով հասարակածից դեպի 30-րդ դուգահեռականները փչող քամիները կոչվում են հակապասատներ կամ անտիպասատներ :

30-րդ և 70-րդ գուգակենականների մեջ ընկած գրտին : Արեւադարձներից դեպի բևեռները փչող քամիները փոխում են իրենց սողությունը . հյուսիսային կիսագնդում հարավային քամին փոխում և հարավ-արևմտյան քամու, իսկ հարավային կիսագնդում հյուսիսային քամին փոխում և հյուսիս-արևմտյան քամու : Հյուսիսային կիսագնդում արևադարձային դժից հյուսիս, միմյանց հաջորդող ցամաքներն և ծովերը տարբեր արագությամբ են առաջանում և ցրտում . այդ պատճառով այսուղի թե ճնշման բարձրությունը և թե քամու ուժը տարբեր տեղերում շատ տարբեր

են լինում և հարավ-արևմտյան քամիները փչում են վոչ թե իրեւ մշտական քամիներ, այլ իրեւ գերազանց քամիներ : Իսկ հարավային կիսագնդում առավել ևս 40-րդ դուգահեռականից հարավ, համարյա համատարած ծով ե . այդ պատճառով այսուղի փչող հյուսիս-արևմտյան քամիներն անհամեմատ ավելի կայուն բնույթ ունեն, քան հարավ-արևմտյան քամիները բնեուային կիսագնդում : 50-րդ դուգահեռականից հարավ սրանք փչում են իրեւ հաստատուն քամիներ :



Բևեռային վայրեր : Ցուրտ ողը բևեռներից հոսում և դեպի հասարակածը, վորտեղ հյուսիս-արևելյան քամիներ (հյուսիսային կիսագնդում) և հարավ-արևելյան քամիներ (հարավ. կիսագնդում) : Մոտավորապես 60-րդ դուգահեռականի վրա բևեռային ուղի այդ ցուրտ զանդվածները հանդիպում են իրենց դեմ փչող տաք զանդվածներին և ստիպում նրանց վերև բարձրանալ : Ահա հանդիպման այդ գծերի վրա յեն գտնվում ովկիանոսներում յեղած ողեր ճնշման ըրջանները :

Ցիկլոններ և անտիցիկլոններ : Քարտեզին նայելով մենք նկատում ենք, վոր ցածր ճնշման վայրերի շուրջը քամիների մէկ սլուց և առաջանում, վորտեղ քամիները շարժվում են կծկվող սպիրալի ուղղությամբ դեպի կենտրոնը :

Բարձր ճնշման վայրերի շուրջը քամիները շարժվում են բացվող սպիրալի ուղղությամբ, այսինքն կենտրոնից դեպի գուրս : Ցածր ճնշման վայրերի շուրջը փչող քամիներն առաջացնում են ցիկլոններ, իսկ բարձր ճնշման ըրջանների շուրջը փչող քամիներն անտիցիկլոններ :

Հյուսիսային կիսագնդի միջին լայնություններում ցիկլոնները տեղափոխվում են մեծ արագությամբ :

Ցիկլոնները ծնունդ են առնում մեծ մասամբ Ատլանտյան ովկիանոսում և այսուղից կամ Յեվրոպայի վրայով են մտնում Խորհրդային Միության յեվրոպական մասն ու անցնում Սիբիր, կամ անցնում են Միջերկրական ու Սև ծովերի վրայով : Անդրկովկասի անտիցիկլոններն ավելի պակաս շարժական են : Անտիցիկլոնի և մասնավոր ցիկլոնի ճանապարհին քամիները շուրշուր փոխվում են : Ցիկլոնի տեղափոխության ժամանակ յերեւմն այդ ճնշումը միանալիք ուժեղ կերպով ընկնում է : Դրանից առաջանում են փոթությամբ կերպով ընկնում է :



բիկներ և մբրիկներ : Անտիցիկլոնի քամիները բոլորն ել ցուրտ քամիներ են . ձմեռը նրանք սառնամանիքներ են բերում :

Հայկական բարձրավանդակի վրա ձմեռներն անտիցիկլոնի գոյանում , կենտրոն ունենալով Դարս քաղաքը : Այստեղից քամիները փչում են զանազան ուղղությամբ՝ դեպի Արարատյան լաշտը , կուր և Ծիռն գետերի գաշտավայրերը և սառեցնում այդ տեղերի ողջը :

Պարբերական քամիներ : Բրիզներ . Ծովափնյա վայրերում մանավանդ տաք յերկրներում , ցամաքը ցերեկներն ալելի յի տաք քանում և գիշերն ալելի յի սառչում , քան ծավը : Դրա չորոշիկ ելույթը ճնշումը ցերեկներն ալելի բարձր և լինում ծովի վրա , իսկ դէշերները՝ ցամաքի վրա : Այդ և պատճառը , վոր ծովափնյա վայրերում քամին ցերեկները փչում ե ծովից , իսկ դէշերները՝ ցամաքիները . բրիզները փչում են նաև Սևանա լճի ափերին :

Լեռնահովտային քամիներ : Մեղ մոտ , Անդրկովկասում բնուրոշ են այսպես կոչված լեռնահովտային քամիները : Յերեկը նրանի փչում են հովտից դեպի լեռները (հովտային քամի) , իսկ դէշերը լեռներից դեպի ցած (լեռնային քամի) :

Մուտներ : Իզորարների քարտեզից մենք տեսնում ենք , վոր ձմեռներն ողի ճնշումը շատ բարձր և լինում Ասիայի կենտրոնական մասում , իսկ ամառները շատ ցածր և լինում նրա հարավային մասերում (Հնդկաստան , Հնդկաչին , Չինաստան , Կորեա , Յապոնիա) . այդ պատճառով ամառները քամին փչում ե ծովից , բերելով իր հետ մեծ քանակությամբ խոնավություն , իսկ ձմեռները փչում ե ցամաքից և չոր և լինում : Այդ կիսամյա պարբերական քամիները կոչվում են մուտներ : Խորհրդային Միության մասն քամիներ փչում են Հեռավոր Արևելյան Յերկրում , Անդրկովկասում , թե կասպից և թե Սև ծովի ափերին : Ամառը հունիսից սուսասոս) նբանք փչում են ծովից , իսկ ձմեռը (հոկտեմբեր—սուրեկ) ցամաքից դեպի ծովը : Ամառային մուսսոնները խոնավություն են բերում Անդրկովկասի արևմտյան մասերի համար :

Քամու ուժի ոգտագործումը : Քամու ուժը շատ վաղուց եւ վոր ոգտագործվում են իրեւ շարժիչ ուժ : Ակզբաներում քամու ուժը մարդիկ ողտագործել են հողմաղացների համար , հացահատիկալու նպատակով : Ներկայումս հողմաղացներն ողտագործվում

են նաև դյուզատնտեսական այլ նորանուակների համար , որինակնուր բարձրացնելու համար : Քամին ողտագործվում են նաև ելեկտրակայաններ աշխատեցնելու համար : Նկատի ունենալով , վոր քամին փչում ե ընդմիջումներով , ելեկտրակայանի անընդհատ աշխատանքն ապահովելու համար , քամի յեղած ժամանակի համապահանքն ապահովելով (ակկումուլատոր) ելեկտրաներգիայի պաշարներ են հավաքում :

Քամու ուժը չափում են անեմոմետրով*) (Հողմաչափով) : Խորհրդային Միության յելլուպական մասում ամենաբարձր լինթաց քամիները ծովափնյա շրջանների քամիներ են :

Քամու միջին արագությունը մեկ վայրեկյանում Մուկվայում հալասար և 4,3 մ . , իսկ Նովորոսսիյուկում՝ 9 մետրի :

Քամիներ և հոսանքներ : Մշտական քամիներն իրենց ընթացքի ուղղությամբ մղում տանում են ծովի ջրերը և առաջացնում ծովայինին հոսանքներ : Այդ հոսանքները լայն տարածություններ են բռնում :

Ծովային հոսանքները լինում են տաք և ցուրտ : Տաք հոսանքները ծնունդ են առնում տաք դոտում , հասարակածի մոտ և հոսում են արևելքից արևեմուտք : Այդ հոսանքներն առաջանում են պասսատներից : Հասնելով աշխարհամասերին , հասարակածային հոսանքը բաժանվում է յերկու մասի , վորոնցից մեկը հոսում է դեպի հյուսիս , մյուսը՝ հարավ . հետագայում յերկու հոսանքներն եւ թեքվում են դեպի արևելք : Այդպիսով Առլանտյան և Մեծ ուկիանոսների հյուսիսային և հարավային մասերում գոյանում յերկու շրջանաձև փակ հոսանքներ :

Հարավ-արևեմայան գերակշռող քամիները , վորոնք փչում են Հս . լ . 30° և 60° մեջ , հյուսիսային շրջանաձև հոսանքի մի մասը թեքվում են դեպի հյուսիս-արևելք և յերկու տաք հոսանքներ գոյացնում , վորոնցից մեկը Գոլֆշտրում է Յելլուպայի ափերի մոտ

*) Այդ գործիքը բաղկացած է ուղղանայց առանցքի վրա ամրացված , յերկու ձողիկներից , ձողիկների ծայրերին ամրացված են կիսագնդաձև և հապակում անցքեր ունեցող անթներու քամու ուժից գործիքը պատվում է և շարժման մեջ գնում նաև առանցքը Առանցքի շարժումը հաղորդվում է հաշվին և առանցքի մեկ վայրկանում կատարած պառայաների թվով վորոշում է քամու ուժը :

և մյուսը՝ Կուրք-Սիվոն, Յասկոնական կղզիների Հյուսիս-արևել-
յան կողմը: Հյուսիս-արևելյան քամիները, բևեռային ծովերից
սրանց հակառակ ուղղությամբ, բերում են ջրարտ հոսանքներ: մեկը Լարրադորի հոսանքն է, վոր վողողում է Հյուսիսային Ամե-
րիկայի հյուսիս-արևելյան ափերը, իսկ մյուսը Ոյա-Սիվոն ե-
Յապոնական կղզիների մոտ: Հարավային կիսագնդի շրջանաձև
հոսանքի հարավային մասն անցնելով Անտարկտիդայի ցուրտ
ջրերով, ցրտում են և շարունակում իր ճանապարհն, արդեն իրը
ցուրտ հոսանք, դեպի հարավային կիսագնդի աշխարհամասերի
արևմտյան ափերը: Ինչպես Առլանտյան և Մեծ ովկիանոսների
հարավային մասերում, այսպես ել Հնդկական ովկիանոսի հարա-
վային մասերում գոյություն ունին այդպիսի շրջանաձև հոսանք-
ներ: Հնդկական ովկիանոսի հյուսիսային մասում, ուր մուսոն-
ները փչում են կիսամյա պարբերականությամբ, ծովային հո-
սանքներն ևս նրանց հետ միասին փոխում են իրենց ուղղությունը:

Մովային հոսանքները շատ են ազդում կլիմայի վրա: Տաք
հոսանքի տաքությունից նրա շրջապատի ողը տաքանում է, իսկ
ցուրտ հոսանքից՝ ցրտում: Հոսանքների տաքությունը կամ ցըր-
տությունը տարածվում ե ցամաքների վրա, հոսանքների վրայից
անցնող քամիների միջոցով:

4. ՄԹՆՈՒՈՐՏԱՑԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ

Ի՞նչպես են առաջանում տեղումները: Յամաքի և ծովի ջրերն
անընդհատ գոլորշիանալով վերև են բարձրանում և տարածվում:
ողի մեջ: Ողի մեջ յեղած գոլորշիների քանակությունը շատ մեծ է:

Տարբեր ջերմություն ունեցող ողը տարբեր քանակությամբ
գոլորշիներ և պարունակում իր մեջ: Տաք ողը գոլորշիներ ավելի
յէ պարունակվում, քան սառը ողը:

Սակայն ջերմության յուրաքանչյուր աստիճան ունի իր խո-
նակության սահմանը, վորից զենը, յեթե ողի մեջ դուրսինե-
րի քանակությունն ավելանա, գոլորշիներն այլևս զաղային դրու-
թյան մեջ չեն կարող մնալ, այլ կբաժանվեն ողից: Այդ և պատ-
ճառը, յերբ ողի ջերմության աստիճանը ողականում է, նո-
մեջ յեղած խոնակությունը բաժանվում և նրանից:

Ողի ջերմության աստիճանը պակասում է, այսինքն ողը
ցրտում է՝ վերև բարձրանալիս: և ընդհակառակը, տաքանում և
ցած իջնելիս: Ողի ցրտելը կարող է անդի ունենալ նաև ողի հորի-
զոնական շարժման ժամանակ, յերբ ողի ավելի տաք զանդված-
ները տեղափոխվում են ավելի սառ մակերևույթ ունեցող վայրեր:

Վերև բարձրացող ողը ցրտելուց նրա մեջ յեղած գոլորշիները
բաժանվում են ողից և գոյացնում բշտիկներ, վորոնք կուտակվում
են ողի վերին շերտերում: Նույնպիսի կուտակումներ կարող են
առաջանալ ավելի ցածր շերտերում, յեթե ողի տաք զանդվածները
ցրտանում են ներքեռում: Ողի վերին շերտում յեղած բշտիկների
կուտակումները կոչվում են ամպ, իսկ ներքեւի շերտում յեղած-
ները՝ մառախուղ: Ամպի խտացումից գոյանում են անձրեային
ամպեր, վորոնցից առաջանում են անձրեր և ձյունը: Անձրեր և
ձյունը կոչվում են մթնոլորտային տեղումներ (վորովհետեւ նրանք
մթնոլորտից են տեղում): Ցողը¹⁾, յեղյամը²⁾ և կարկուտը նույն-
պես մթնոլորտային տեղումներ են:

Մթնոլորտային տեղումների քանակությունը միշտ չափվում
է ողերեւութարանական կայաններում: Յուրաքանչյուր անգամ
չափվում է ամանի մեջ հավաքված ջրի շերտի բարձրությունը.
յեթե ձյուն կամ կարկուտ և զալիս, հալեցնում են և ապա չա-
փում:

Տեղումների քանակը չափում են անձրեախով:

Մավի ազդեցությունը: Ամպերն ամենից շատ տաք ծովերի
վրա յեն գոյանում: Այդ և պատճառը, վոր հարավ-արևմտյան
քամիները, վորոնք տաք ծովերից են փչում, մեծ քանակությամբ
խոնակություն են բերում: Աշխարհամասերից փչող քամիներն
հնդհակառակը, չոր են լինում:

Առակամա անապատը, վոր գտնվում է Հարավային Ամերի-
կայում՝ հետո Մեծ ովկիանոսի ափին, առաջացել ե նրանից, վոր
քամիներն այստեղ մշտապես ցամաքից են փչում:

Յամաքի ոելյեֆի ազդեցությունը տեղումների վրա: Յեթե

¹⁾ Տող կոչվում են գարնանը տերեների, խոտի և գետնի վրա նստած
ներ մանրեկ կաթիները:
²⁾ Յեղյամը ձյունի բարակ շերտի նմոն է, վոր աշնանը տերեների, Խո-
ռի և գետնի վրա յէ նստում:

ծովից փչող քամիների առաջը բռնված ե լեռներով, ապա այդ քամիներին յենթակա տարածությունը բաժանվում է յերկու մասի՝ խոնավ և չոր: Ծովից փչող քամիները, հանդիպելով լեռներին, տեղումներ են առաջացնում ծովի և այդ լեռների միջև գտնված տարածության վրա. լեռների վրայից անցնելիս քամիները ցրտում են և նրանց մեջ յեղած դոլորշները խտանում ամպեր ու անձրկներ են առաջացնում. լեռան մյուս կողմից իշնելիս, ողը տաքանում է և այդ պատճառով նրա մեջ յեղած դոլորշներից այլևս ամպեր և տեղումներ չեն առաջանում: Այդ պատճառը, վոր այստեղ տարածությունն անամպ է լինում և չոր մինչդեռ լեռների և ծովի միջև ընկած տարածությունը չափազանց խոնավ է լինում:

Մթնոլորտային տեղումների տեղաբաշխումը յերկրագնդի վրա: Հասարակածային գոտին անընդհատ ամբողջ տարվա ընթացքում սաստիկ տաքանում է. դրանից ջրերն այստեղ ուժեղ գոլորշիանում են և ողի մեջ ստեղծվում են բարձրացող հոսանքներ: Դրա չնորհիվ հասարակածային յերկիրներում, կամ ինչպես ասում են, տաք գոտում տեղումներ առանձնապես շատ են լենում—մեկ տարվա ընթացքում 100 սմ. ավելի: Ամենից շատ տեղումներ, տարվա ընթացքում մոտավորապես 12 մ., թափվում են արեաղարձային յերկիրների այն մասերում, վորոնք գտնվում են ծովային քամիների անմիջական աղղեցության տակ. որինակ վայա-Մալե լեռան լանջերի վրա, վորը Հավայան կղզիներից մեկի վրա յեղանվում, Զերբավունչում, վորը Հիմալայան լեռների լաներին և գտնվում, Կամերունի լանջերում, վորն Սֆրիկայի Գվինեյական ծոցի մոտ և գտնվում:


Տեղումներով շատ հարուստ յերկիրների կարգին են պատկանում նաև՝ 1) մուսոնային շրջանի յերկիրները, 2) Յելլոուպի մերձալանտյան մասերը, 3) Յելլոուպայի այն մասերը, վորոնք գտնվում են լեռներից դեպի ծովին ընկած տարածությունների վրա և յենթակա յևն ծովային քամիների անմիջական աղղեցության. դրանց կարգին են պատկանում նաև կովկասի ուծովլյան տիերը, 4) Հյուսիսային Ամերիկայի արևմտյան ափերը և Հարուստ վային Ամերիկայի հարավ-արևմտյան ափերը (ամերիկյան այլ վային վային ափերը տեղումներ չեն առաջացնում):

ախերը դանվում են արևմտյան խոնավ քամիների աղղեցության տակ):

Ամենաքիչ տեղումները լինում են ցուրտ գոտում և պաստառների գոտում:

Ցուրտ գոտում գոլորշիացումը շատ աննշան է. այնտեղ գերակշռում են ողի շած ինող հոսանքները և այդ պատճառով ել տեղումները շատ քիչ են:


Պաստառները փչում են ծովից. նրանք իրենց խոնավությունը հալորդում են ծովափնյա վայրերին և ծովից վորքան հեռանում, այնքան չորանում են. առանձնապես արագությամբ են չորանում նրանք այն ժամանակ, յերբ նրանց ճանապարհի հենց սկզբին հանդիպում են լեռների, ինչպես որինակ՝ Ասիայում և Ավստրալիա-



Նկ. 68. 1930 թվի Խոկումբեր 6-ի յեղանակի քարտեզը
յում: Բացի այդ, կա և մի այլ հանդամանք. այդ այն է, վոր պատկաները փչում են դեպի հասարակածն, այսինքն ավելի ցուրտ վայրերից դեպի ավելի տաք վայրեր. ողը, անցնելով դեպի ավելի տաք վայրեր, տաքանում է և այդ պատճառով նրա մեջ յեղած խոնավությունը տեղումներ չեն առաջացնում:

Անապատային գոտին հենց պասսատավյին դոտու չքշանում ե գտնվում :

Առանձնապես մեծ տարածություն ե բռնում արևելյան կիսագնդի անապատային գոտին: Այդ գոտին կազմված է հետեւյալ անապատաներից: Ասիայում՝ Գորի անապատ, Պարսկական անապատ, ԽՍՀՄ-ի Միջին-ասիական հանրապետությունների անապատ, ԽՍՀՄ-ի Միջին-ասիական հանրապետությունների անապատային մասեր և արարական անապատը, Աֆրիկայում՝ Ասհապատային մասեր և Արարական անապատաներ և Ավստրալիայում՝ Աժեմտյան Ավստրալիայի անապատ:



Նկ. 69. 1930 թվի հոկտեմբերի 7-ի յեղանակի քարտեզը

Ամերիկայի անապատաները գտնվում են ցամաքի արևմտյան կողմը, վորովհետեւ. ինչու Հյուսիսային, այնպես և Հարավային Ամերիկայում բարձր լեռնաշղթաներն ընկած են վո՛չ թիվունակաց ամպերին, այլ ավելի մոտ են արևմտյան ափերին:

Յեղանակների նախագուշակումը: Գյուղատնտեսական աշխատանքների պլանավորման համար չափաղանց կարեռը և նախաղեցիան իմանալ՝ յեղանակները բարեհաջող են լինելու նրանց համար:

Թե՛ վոչ: Յեղանակներից ե կախված բույսերի հաջող ծլումը, աճումը, հասունացումը, հացահատիկների բերքը, բերքահավաքը և այլն:

Յեղանակների նախագուշակումը մեծ նշանակություն ունի նաև ծովային ու ողային հաղորդակցության համար, վորովհետեւ ուժեղ փոթորիկները չատ վտանգավոր կարող են լինել նրանց համար: Յերբ փոթորիկ ե նախագուշակվում, այդ մասին անմիջապես հայտնվում ե համարական հիմնարկներին:

Հնարավո՞ր ե արդյոք յեղանակները նախագուշակել: Այս՝ այդ հնարավոր ե և այժմ ԽՍՀՄ-ում այդ գործը չատ լավ ե կաղամակերպիչած: Գործը դեկավարում ե յեղանակի բյուրոյի սպասարկությունը (Հիղըոմետենորոլոցիական կոմիտե Մոսկվայում), վորի կաղմած յեղանակի քարտեզները հնարավորություն են տալիս հետեւ ցիկլոնների և անտիցիկլոնների ընթացքին և դրանից համապատասխան յեղակացություններ հանել:

Յեղանակի փոփոխությունները կախված են ցիկլոններից և անտիցիկլոններից: Ցիկլոնի կենտրոնում ողի հոսանքը վերև և բարձրանում և ամպեր առաջացնում: իսկ ամպերը վո՛չ միայն անձրեներ են տալիս, այլև ամառվա յեղանակներին բուլացնում են արեգակի ճառագայթների ազդեցությունը և յեղանակը զովացնում, ձմեռ ժամանակ ամպերի ծածկոցը թուլացնում ե յերկողի ջերմության ճառագայթումը (տաքացում): Ցիկլոնի արևմտյան կողմում փչող քամիները տաք են լինում և խոնավ: դրանք հարավային և հարավ-արևմտյան քամիներն են. արևելյան կողմում փչող քամիները ցուրտ են լինում և չոր: դրանք հյուսիսային քամիներն են: Այդ պատճառով ցիկլոնի աղբեցությունը յեղանակի վրա կարող ե տարբեր լինել, նայած թե նա իր վոր կողմով կանչնի տվյալ վայրի վրայով:

Անտիցիկլոնի կենտրոնում ողի հոսանքները ցած են իջնում: այդ պատճառով անտիցիկլոնը չոր և պարզ յեղանակ ե առաջացնում: անտիցիկլոնի ժամանակ ամառները սաստիկ չողեր են մենում, իսկ ձմեռները՝ սաստիկ սառնամանիքներ:

Յեղանակի մեջ ուժեղ փոփոխություններն առաջանում են առանձնապես ցիկլոնի տեղափոխության ժամանակ:

Յեղանակի բյուրսն կազմում ե յեղանակի քարտեզներ յու-

բաքանչյուր որվա ժամի 1-ի (գիշերվա), 7-ի (առ.) 13-ի և 19-ի համար:

Քարտեղները կազմվում են տեղական դիտակայանների հազարդած տեղեկությունների հիման վրա: Տեղեկությունները հազորդվում են ռադիոյի միջոցով: Առօրհրդային Միության մեջ գոյություն ունեն մի քանի հարյուր դիտակայաններ: Տեղեկություններ ստացվում են նաև արտասահմանից, նույնպես ռադիոյի միջոցով: Քարտեղների վրա նշանակվում են իդորաբները, տեղումները, մառախուղները, ոլաքներով ցույց են տրվում քամու ուղղությունը, ույժը և ալին:

5 ԿԼԻՄԱ

Յեղանակ և կլիմա: Յեղանակ ասելով մենք հասկանում ենք մթնոլորտի վիճակը ավյալ որվա համար:

Կլիմա ասելով հասկանում ենք տվյալ տեղի բարեխառնությունը, խոնավության, մթնոլորտային տեղումների, գերիշտող քամիների ուղղության և մթնոլորտի ճնշման միջին վիճակը:

Տեղի լայնության ազդեցությունը կլիմայի վրա: Կլիմայական գոտիներ և նրանց սահմանները: Կլիմայի հիմքն արեգակից ստացած ջերմությունն ե կազմում: Վորքան հեռանանք հասարակածից արեգակի ջերմությունն այնքան կավակասի: Այդ պատճառական լայնության վրա արեգակի առաջնային գոտիները կան: Բայց կլիմայական գոտիների սահմանները վորոշվում են վո'չ թե արեգակարձներով և բևեռային շրջաններով, այլ իդութերմներով:

Կլիմայական տաք կամ այրեցյալ գոտին, վոր ամենալայնն ե, գտնվում է 20° ջերմության տարեկան իդութերմների մեջ՝ Դրանք արեգակածային բուսականության սահմաններն են:

Կլիմայական բարեխառն գոտիների սահմանները կազմում են ամենատաք ամսվա (հյուսվային կիսադնդում՝ հուլիսի, հարավայինում՝ հունվարի) 10° ջերմության իդութերմները: Սա անտառների սահմանն ե:

Այս գծից դեպի բևեռները տարածվում է կլիմայական ցութ գոտին:

Ցիշտ ե կլիմայական դոտիները ընդհանուր առմամբ համանեղում են բարեխառնության գոտիների հետ, բայց նրանց սահմանները համատեղել չեն կարող, քանի վոր միենույն լայնության վրա դժուած վայրերը, չնորհիվ ցամաքի ոելմֆի, ծովի, ծովային հոսանքների և քամիների աղդեցության, կարող են միմյանցից շատ տարրեր կլիմայական պայմաններ ունենալ:

Ցամաքի ուղեթի ազդեցությունը: Ենթային կլիման և ձյան սահման: Ինչպես դիտենք, դեպի բևեռներն անցնելիս կլիման փոխվում է, նա հետզետե ցրտում է: Նույն բանն է տեղի ունենում, յերբ մենք ցածր վայրերից ավելի բարձր վայրեր ենք տեղափոխում. վորքան բարձանանք, կլիման այնքան ցուրտ կլինի, իսկ շատ բարձր տեղերում մենք կասանենք մշտական ձյան սահմանին, —վորտեղ կլիման նույնն է, ինչ վոր մշտական ձյունով ծածկված բևեռային յերկրներում:


Ցերք ողջ ցրտում է, նրա միջի գոլորշին խտանում է և առաջցնում տեղումներ. լեռներում տեղումներն առաջանում են քամու կողմը դարձած լանջերում. այդ պատճառով ել այստեղի կլիման խոնավ և անձրևային ե մինում:

Լեռնային ողջ մաքուր ե՝ նրա մեջ փոշի և բակտերիաներ չկան. նա շատ հարուստ և ելեկտրականությամբ, ողոնով և ավելի շատ և արեգակի քիմիական ճառաղայթներ պարունակում: Այդ պայմանները շատ նպաստավոր են սրտի և թոքերի համար. այդ պատճառով լեռների վրա բուժական լեռնային կայաններ են հիմնվում: Կովկասում այդպիսի կայաններ կան՝ Տիբերդայում, Արասթումանում, Կիոլավողսկում, Սոչիի մոտ կրառնայտ Պուլանյում, Դիլիջանում և այլն:

Կլիմայի համար մեծ նշանակություն ունի լեռնաշղթաների ուղղությունը: Զուգահեռականների ուղղությամբ անցնող լեռնաշղթաները արգելքներ ստեղծելով հյուսիսային քամիների՝ սուած, կլիմայական անջրուեներ են հանդիսանում իրենց հյուսիսային և հարավային կողմն ընկած վայրերի մեջ. դրա չնորհիվ, նրանց յերկու կողմն ընկած վայրերում միմյանցից շատ տարրեր կլիմայական պայմաններ են ստեղծվում: Որինակ՝ Հյուս. Կովկասը ծածկված և լինում ձյունով, իսկ այդ միջոցներուն կովկասյան

մոներից հարավ, Անդրկովկասի Սևծովյան ափին աճում են ժամադաշտալար բույսեր:

Ծովերի ազդեցությունը կլիմայի վրա: Ծռվային և ցամանային կլիմաներ: Ցամաքը ջրից ավելի արագ և տաքանում և ավելի արագ է ցրտում: Այն աեղեռում, վրտեղ գերակշռում և տաշուցում, այսինքն տաք գոտում ցամաքը միշտ ծովից տաք և լինում: Մկան բարեխառն գոտուց ամառները տաքացումն են գերակշռում, իսկ ձմեռները՝ ցրտացումը: Այդ պատճառով ձմեռներն այսուհետ ցամաքի ներսը ցուրտ և լինում ծովից և նրանից տափաթյուն և ստանում: Ամառն ընդհակառակը, վորքան ցամաքը



Նկ. 70. Սացադաշտային ժամանակաշրջանի կլիմայական գոտիները

ավելի հեռու յե ծովից, այնքան ավելի տաք և լինում: Այդ պատճառով, այդ գոտում, ցամաքների ներսը ամենատաք և ամենացուրտ ամիսների բարեխառնության մեջ շատ խիստ տարբերություն կա:

Այդպես, Խորհրդային Միության սահմաններում տարեկան ամպիտուղը արևմտյան մասում հավասար է 25° , Արևմտյան Միքրում հասնում է 40° , իսկ Արևելյան Միքրում՝ $50-60^{\circ}$:

Բաթումում (Սև ծովի ափին) բարեխառնության տարեկան

տատանումը $17,1^{\circ}$ է, իսկ Եկրեանում, վոր չը ջապատիված է լեռներով, $32,4^{\circ}$:

Մինչեւյն գոտում գտնվող յեվրոպական այն յերկրներում, վորոնք Ատլանտյան ովկիանոսի ափերին են ընկած, ամենացուրտ ամպիւս միջին բարեխառնությունը հավասար է $+9^{\circ}$, իսկ ամենատաք ամպիւսնը՝ $+108^{\circ}$ տարեկան ամպիտուղը հավասար է լիդամենը $+9^{\circ}$:

Հնդկանրապես, յեթե տեղի տարեկան ամպիտուղը 15° -ից բարձր է, նրա կլիման ցամաքային և համարվում, իսկ յեթե 15° -ից ցածր է՝ ծովային:

Հոսանքների և քամիների ազդեցությունը: Տաք և սառ հոսանքները խոչոր ազդեցություն ունեն այն յերկրների կլիմայի վրա, վորոնց մոտով նրանք անցնում են: Նրանց ջերմությունը քամիների միջոցով տարածվում և ցամաքների վրա: Գոլֆշտրոմի աղղեցությունն անհամեմատ ավելի զգալի յե Յեվրոպայի համար, քան Ամերիկայի, չնայած, վոր նա ավելի մոտ և գանվում վերջինս. այս բացատրվում ենրանով, վոր Գոլֆշտրոմի վրայից անցնող քամիները փչում տանում են հարավ-արևմուտքից և նրա տափությունը տանում են դեպի Յեվրոպա: Գոլֆշտրոմի աղղեցությունն այնքան մեծ է, վոր ձմեռները Յեվրոպայի հյուսիս-արևմտյան ափերի բարեխառնությունը 20° բարձր է լինում նորմալ միջին բարեխառնության աստիճանից: Այդ հոսանքի աղղեցության յենթակա ծովերը յերբեք չեն սառչում:

Կուրո-Միզո հոսանքի աղղեցությունը տվելի թույլ է: Այս հոսանքը հնարավորություն չունի, Գոլֆշտրոմի նման, հեռու հյուսիս անցնելու, քանի վոր նրա ճանապարհն այստեղ չափազանց նեղանում է:

Հալավային կլիմանդում, Աֆրիկայի և Հար. Ամերիկայի արևմտյան ափերի մոտից անցնող ցուրտ հոսանքները (Պերուանյան և Բենգալյան) մեծ չափով իշեցնում են այդ ափերի բարեխառնության աստիճանը:

Քամիները շատ են աղղում նաև ոդի խոնավության վրա. ծովային քամիները խոնավ ոդ են բերում, իսկ ցամաքային քամիները՝ չոր:

Կլիմայական շրջաններ: Մովերի, քամիների և մակերեսութիւն

ունի աղջիկի աղջիկության չնորդիվ, միենույն կլիմայական գոտու տարբեր վայրերում շատ տարբեր կլիմայական պայմաններ են սուզծված: Այդ սրատճառով կլիմայական գոտիներից յուրաքանչյուրն ունի իր ստորաբաժանումները, իր կլիմայական գլխանձնութ:

I Յուրա գոտին բաժանվում է 2 կլիմայական շրջանների՝
1) Բնեային և 2) Տունդրային շրջան:

II Յարեխան գոտին բաժանվում է 3 շրջանների: 1) Տայդայի, 2) Խառն անտառների և 3) Տափաստանների շրջան:

III Անտառային կիմայի շրջանը գտնվում է բարեխառն տաք գոտիներին կից վայրերում:

IV Տաք գոտին բաժանվում է 2 շրջանի: 1) Արևադարձային կլիմայի շրջան և 2) Սալանների շրջան:

V Տաք և բարեխառն գոտիների փոխման շրջանը կտղմում է մերձարեադարձային կլիմայի շրջան: Սա բաժանվում է 2 մասի՝
1) մօտսոնային և 2) կոչտասերեւ բույսերի շրջան:

Բնեային կիման ամենացուրա կլիման և յուրան այստեղ տեսվում է ամբողջ տարին: Այստեղ ցամաքն ու ծովը սկսած ին սառուցով, սառուցը նույնիսկ ամառը համարյա չի հալչում: Քանի փոք ամենատաք ամսվա միջին ջերմությունը 0° ցածր է: Այս շրջանի համար բնորոշ են հաճախակի և յերկարաւան բույսեր:

Յունդրային կլիմայական շրջան գոյություն ունի միայն հյուսիսային կիսադներում: Սա ցրտի տիրապետության շրջանն է: Ջան շերտն այստեղ աննշան է լինում: Հաճախ ուժեղ քամին ծյունը հր քում է և դետինը բարորովին մերկացնում: Յուրան այնքան սաստիկ է, վոր գետնի վերին շերտի տակի հողը միշտ սառած է ինում: ամառային արևը կարողանում է տաքացնել միայն գետնի վերին շերտը: Ձմեռային ցրտերը տեսվում են 8 ամիս անընդհատ: Իսկ յերեմն եւ ավելի: Սառնամանիքները 50° ավելի յն լինում:

Ամառը յեղանակները չափաղանց փոփոխական են լինում: յերեմն բարեխառնությունը հասնում է 20° և հանկարծ իջնում՝ մինչև 0°: Շատ վտանգավոր են ձյունախառն բուքերը (պուրդա) վորոնք անսպասելի կերպով են սկսվում:

Տայգաների կիմայական շրջանում ամառը շատ կարճ, իսկ նաև համեմատաբար տաք և լինում, իսկ ձմեռը յերկար և ցուրդա:

Յուրան առանձնապես շատ ուժեղ է լինում Արևելյան Սիբիրի տայգաներում, Յենիսեյ գետից դեպի արևելք: Յակուտիայում պատահել են 64° հասնող սառնամանիքներ, իսկ վերիխոյանսկում նույնիսկ մինչև 69°:

Մասն անտառների չըջանի կլիման ցամաքային է: Նրա տարեկան ամպլիտուդան, մանավանդ աշխարհամասի ներսում, ինչպես որինակ Ռ.Ա.Ֆ.Լ. Հ.-ում, չափաղանց մեծ է. Մոսկվայի տարեկան միջին ամպլիտուդը հավասար է մոտավորապես 30°:

Զմեռն այստեղ տեսվում է 3—4 ամիս. ամառը բավական տաք և լինում: որինակ հուլիսի միջին բարեխառնությունը հավասար է 18°: պատահում են որեր, յերբ բարեխառնությունն անհամեմատավելի բարձր է լինում: Զմեռները պատահում են—40° սառնամանիքներ, բայց դեկտեմբերն անցնում է առանց սառնամանիքների և ցրտերի:

Տարվա տեղումները 500 մ.մ-ից մի քիչ ավելի յեն: Դեպի արևմուտք տեղումները մեծանում են:

Առանձնապես մեծ քանակությամբ տեղումներ թափվում են Մերձ-Ալտայան շրջանում:

Ցամաքային կլիման փոփում է ծովային կլիմայի և ամառն ավելի զով և լինում, իսկ ձմեռն ավելի տաք. սառնամանիքները հաղվաղեալ են: իսկ Մեծ Բրիտանիայի և Իրանդիայի արևմուտքում համարյա միշտ անձրև և մառախուղ և լինում:

Տափաստանների շրջանի կլիման աչքի յե լինում իր չորությամբ, իր չոր ամառներով և դաֆան ձմեռներով: Տափաստանների շրջանն անտառների շրջանից բաժանվում է բարձր ձնշման մի դուիսիկ, վորից գետի հոյսիս (հյուսիսային կիսադնում) գերակշռող զեր են կատարում հարավ-արևելացյան և արևմտյան խոնավ քամիները, իսկ դեպի հարավ, տափաստաններում, հյուսիսարևելյան և արևելյան չոր քամիները: Վորքան ավելի դեպի արևելք անցնենք, կլիման այնքան ավելի չոր կլինի:

Անապատային շրջանի կլիման բնորոշվում է չափաղանց չորությունով, չոր ամառներով և ցերեկվա ու դիչերվա բարեխառնությունների միջև յեղած խոչը տարբերությամբ: Բարեխառն գոտու անապատներում ձմեռը չափաղանց դաֆան է լինում: այդպես, որինակ գորի անապատում, իսկ տաք գոտու անապատում,

որինակ՝ Սահմարայում ձմռան դիմելներին միմիայն թեթև սառանամքներ են լինում :

Արևադարձային կամ արևադարձային խոնավ անտառների շրջանի կլիման միշտ խոնավ և տաք է : Ցերեկվա ժամի 1-ին բարեխառնությունը հանում է 30_o։ Համարյա ամեն որ փոթորիկ և հեղեղ է լինում :

Սականների շրջանում կլիման յերկու ժամանակաշրջան ունի խոնավ և չոր : Մթնոլորտային տեղումների քանակին այստեղ մեծ է, յերեմն հասնում է 1000 մ.մ., բայց ուժեղ գոլորշացման պատճառով տեղումների նույնիսկ այդ քանակը չի կարողանում բարձրաբել անընդհատ անտառների աճման պահանջը : Առանձնակեր չոր են ձմեռային ամիսները : Այդ ժամանակ կանաչը խանձրում, չորանում է և ծառերի մեծ մասը տերևաթափ և լինում վոչ թե ցրտից, այլ չորությունից :

Մուստնային կլիման նույնպես, սականների շրջանի կլիմայի նման, յերկու միմյանց հաջորդող ժամանակաշրջանի յև բաժանվում, բայց տեղումներն այստեղ անհամեմատ ալելի շատ են, քան առաջինում . տեղումների քանակը համարյա այնքան է, վոր քան արևադարձային դուռում (1000- 2000 մմ և ավելի) :

Հաճախ ձմեռային մուստնը ամառայինի փոխելիութեադի տեղի յին ունենում ուժեղ փոթորիկներ : Էաղաղ ովկիանոսում նրանք տայ ֆուն են կոչվում :

Կոշտատերի բույսերի կամ Միջերկրա-ծովյան կլիմայի շրջանում ամառն առանձնապես յերկար, չոր և տաք և լինում, իսկ ձմեռը՝ կարճ, մեղմ և բավական խոնավ : Չորությունից պահանջնելու համար բույսերն այստեղ հարմարվել են ընական պայմաններին . վորոշ կաղմության շնորհիվ նրանք ալելի դոլորշիներ են արտադրում :

VI. ՀՈՂԱ-ԲԻՌԱԿԱՆ ԳՈՏԵՆԵՐ

1. ԿԼԻՄԱՅԻ, ՀՈՂԵՐԻ ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԵՆԴՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ

Հողային և բուսական գոտիներն ու շրջաններն իրար հաջորդում են նույն կարգով, ինչ կարգով իրար հաջորդում են և կերպայական գոտիները : Յեզ ինչպես վերը տեսանք, կլիմայական

գոտիները անվանվում են այն բուսականության անունով, վորանորոշ և տվյալ գոտու համար :

Բույսերը կամ հարմարվում են տեղի կլիմային կամ վոչ չանում են : Բևեռային ծաղկավոր բույսերի կազմությունը հարմարված և այնպես, վոր բևեռային կարճ ամսվա ընթացքում նրանք կարողանան ալվարտել իրենց աճման շրջանը : Նման հարմարումն էարկե, ավելորդ և վնասակար կլիներ տաք և խոնավ կլիմայի պայմաններում : Այստեղ ապրող բույսերն, ընդհակառակ տաքին և խոնավությանն են հարմարվել : Չոր տափաստանային բույսերը միջոցներ են ստեղծել յերկրի խորքերից խոնավություն դուրս ծձերու համար (յերկար կամ բազմանցուղ արմատներ) : Դոլորշիացումը թուլացնելու նպատակով, տերենները կամ ծածկվում կամ սղմվում փոքրանում : Են դեպի արեն ևն դարձնում վոչ թե երենց սկսուածողը, այլ նրա յեղերքը :

Կենդանիները նույնպես հարմարվում են կլիմային և բուսականության : Մառերի վրա մագլցող կենդանիները տափաստաններում չեն ապրում, արագավաղ խոտակելներն անտառներում չեն ապրում : Տաք բրդով ծածկվում են միայն ցուրտ յերկրի կենդանիները, վորովհետեւ այդ նրանց անհարաժեշտ ե իրբեկ ցրտից պաշտպանվելու միջոց : Այն վայրերում, վորտեղ ձմեռը յերկար և, կենդանիները փոխում են իրենց մուշտակի գունավորումը՝ ձմեռները նրանք սպիտակ գույն են ստանում, ամառները՝ մոխրագույն : Պաշտպանողական գունավորում տափաստաններում և անտառներում այլ ե . տափաստաններում նա հարմարվում է տափաստանային խոտի դեղին գույնին, իսկ անտառներում՝ ծառերի կեղևի կամ խայտարղետ ծաղկելների գույններին :

Հողի կաղմությունը կախված է կլիմայից, բուսականությունից, կենդանիներից և մանավանդ—աչքով անտեսների մանր որդիկանիզմներից կամ մանրեներից (սունկեր, բակտերիաներ) :

Հողի գոյացման գլխավոր քիմիական պրոցեսներն այս որդիկանիզմների կենսական գործունեյությունից են կախված : Այդպիսով, կլիմայի դերը ևս շատ մեծ է հողի գոյացման համար, քանի վոր միկրոօրգանիզմների կենսական գոյությունը տարբեր ե բնականում տարբեր տաքության և տարբեր խոնավության պայմաններում :


2. ՑՈՒՐՏ ԳՈՏԻ

Բնեռային շրջանը սառույցի անապատ ե, վոր զուրկ է բուսական և կենդանական աշխարհից: Կյանքն այնտեղ սկզբում է միայն ամառը—ծովափերի մոտ՝ յերբ համատարած սառույցի ծածկոցի յեղբերը սկսում են մասամբ հալվել: Այդ ժամանակ ծովափերը ծածկվում են գիշատիչ թռչունների, մըրկահալվերի և որորների այնպիսի բաղմությամբ, վոր ամբողջ տարածությունը կարծես թռչունների կույտերից բաղկացած լինի:

Բնեռային ծովերի կյանքը միանդամայն այլ պատկեր ունի, քան բնեռային ցամաքը: Ծովի մեջ յեղած մանրադիտական ջրաբուժութերից և կենդանական որգանիզմներից, ծովի յերեսին սննդարար նյութերի շերտեր են գոյանում. այդ նյութերը կեր են ծոռայում կետերի և զանազան կողմերից այստեղ հալվաքլող անթի՛ ձկների համար. ձկների վտառներին հետևում են գիշատիչ թռչունների յերամները և ծովային մաշկոտն կաթնառունների (ծովացուկեր, փոկեր) վորմակները:

Տունդրաների շրջանը գտնվում է բնեռային շրջանից անմիջապես հարավ (միայն հյուսիսային կիսագնդում): Տունդրաները կարող են լինել բարձրադիր և ցածրադիր: Տունդրաները ծածկված են տորֆային ճահիճներով, մամուռներով, քարաքորոշերով և մանր ծառերի թփուտներով (կարճահասակ վողորենիներ և ուստիներ): Խոտարույսերից շատերը, մանավանդ նրանց ընձյուղերը, շարունակում են ապրել և ձմեռը, ձյունի տակ, գետնի կղած. ձյունը նրանց պաշտպանում ե քամիների սառեցնող և սմբցնող աղդեցությունից:

Տունդրայի բույսերից ամենակարևորը քարաքոտն ե, վոր տեղում յագել կամ յեղջերիլի մամուռ և կոչվում: Յեղջերուների դիխափոր կերն այդ մամուռն ե. նա շատ դանդաղ և աճում. յագելի ողտադրծված արոտատեղերը կարող են նորից ողտադրծվել միայն 20 տարուց հետո: Թույլ գոլորչիացման հետևանքով տունդրաների մեծ մասը ճահիճներով և ծածկված լինում: Գետերի հովիտները ծածկված են մարգաղետիններով. Հողը, այդ տեղերում, կաղմված և գետերի բերած կիտվածքներից: Բարձր գետավիր հովիտները զգալի կերպով պաշտպանում են քամիներից:



Վ. Դ. Բուսկան գրքին

Հաճախ անտառային բուսականությունը դետափերով տարածվում է գեղի հեռու հյուսաստունդրայի խորքերը, հասնելով յերբեմն բնեռային ծովի ափերին:

Տունդրայի կենդանիներից կարևորներն են՝ յեղջերուն (բնանի և զայրենի) բնեռային կրծողները, սպիտակ աղվեսները և ընտանի չները:

Յեղջերուն տունդրայի ամենաոգտակար կենդանին ե. նա, տունդրայի բնակչության, մնադի և հագուստի հիմնական աղբյուրն ե: Լծելու համար նա անփոխարինելի յե. մարդատար սահակներին լծված՝ նա մի ժամում 10—15 կմ. ճանապարհ կարող ե անցնել: Երա մորթուց նուրբ կաշիներ են պատրաստվում:

Յերեմն կրծողները չափազանց շատ են բազմանում և անթիվ քանակությամբ ծածկում տունդրայի տարածությունները: Արանց յերեալուն պես, անմիջապես հայտնվում են և սպիտակ աղվեսները, վորոնք միշտ հետապնդում են նրանց և նրանցով կերակրվում:


Տունդրայի շոնր հաջող չների ցեղին ե պատկանում: Յենիսեյ գետից դեպի արևմուտք նրան ողտագործում են իրեն հոտի շուն՝ հոտերը գայլերից պաշտպանելու և հսկելու, վոր հոտերը բնակտեղիներից չհեռանան: Յենիսեյից դեպի արևելք նրանք ողտագործում են վորպես լծկան շներ (նրանց լծում են զույգ՝ զույգ, ամեն մի սահնակին 10 շուն կամ ավելի):

Յեղջերուները և կրծողները ձմեռում են տունդրաներում՝ թունդրաներից տունդրաներում ձմեռում են՝ սպիտակ կաքավի՛ բնեռային բուն: Զիող թունդրաները մայիսին զալիս են այստեղ և սեպտեմբերին նորից չվում: Ամառները, յերբ անընդհատ ցերեկ ելնում, թունդրաների աղմուկը յերբեք չի դադարում:

Ամառը մոծակն այստեղ կատարյալ պատիժ ե. անթիվ քանակությամբ նրանք թափվում են թե՝ մարդկանց և թե կենդանիների վրա. իրենց պատճառած տանջանքներով յեղջերուներին նրանք կատաղության են հասցնում:

3. ԲԱՐԵԽԱՐԱԿԱՆ ԳՈՏԻ

Տայգա: Տունդրայի հարավային սահմաններից սկսվում է ինժադիճու (4—6 մ. բարձրությամբ) ծառերի նոսր անտառները՝ Դա անտառատունդրան ե:



Դրանից հարակ սկսվում է տայգայի լայն գոտին։ Տայգան ծածկած է փշտերեւ ծառերի խլտ անտառով, վորի մեջ ընդարձակ ճահճային տարածություններ են ընկած։ Ինչպես խոսն առ տառների շրջանում, այստեղ նույնպես հողը մոխրահողային և նա բազկացած է ճմառողի բարակ շերտից, վորի մեջ հումուս և պարունակում, և սպիտակավուն մոխրահողի շերտից։ Զուրը լուսում է մոխրահողի մեջ յեղած հարվող նյութերը և այդ պատճառով մոխրահողերն իրենց բնական գրության մեջ անբերդի լինում։ Պատշաճ պարարտացումով այդ հողերը կարելի յերբ հողեր դարձնել, մանավանդ յեթե պարարտացվեն հանքայինութերում։

Խորհրդային Սիության սահմաններում տարբերում են 3 ամսակի տարյա՝ 1) Աւրալից դեպի արևմուտք, 2) Աւրալի և Յելենի սեյի միջև (Արևմտյան Սիրիր) և 3) Յենիսեյից արևելք (Արևելյան Սիրիր)։

Յելենոսկական տայգայի անտառները գլխավորապես յեղենով և նոճի ծառերից են բաղկացած։ Յեղենին պահանջկոտ չեն լուսավերաբերմամբ, բայց նա բավական պահանջկոտ ե հողի և խոնավության վերաբերմամբ։ Նա բանում ե խօնավ և կավոտ հողերում։ Յեղենու սովորախիտ անտառներում լույսի պակասության պահանջառված է, թիվը և խոտ չեն բռնում։ յեղենու անտառի սովորեցրում կարողանում են աճել մամուռները և խոտապտուղ բռնում։ Մըկարմիր հապալասը և մրտենական հապալասը։

Հյուսիսային Դվինայից դեպի արևելք, յեղենու տայգայում պատահում են նաև սիրիրյան յեղատենի և փիճի ծառեր, ինչ բառական առաջարկում է աճել աճած առաջարկում։

Նոճին լույս շատ է սիրում, հողի և խոնավության վերաբերմամբ պահանջկոտ չե։ Նա մեծ մասամբ բանում է ավաղոտ և աճել լուսում։ մանր ծառեր և խոտաբույսեր նոճու անտառում ավելի լուսում։ կան, քան յեղենու անտառում։

Արևմտյան Սիրիրի տայգայում հողը չափաղանց ճահճում է շյուսիսում անտառը բաղկացած ե յեղենու և փիճի ծառերում։ Հյուսիսում անտառը բաղկացած յեղենուց, մայրուց և մասամբ ել յեղատենուց։ Արևելյան Սիրիրի տայգայում ծառերի համար աճել աճած առաջարկում։

Դառնյան փիճին ե։ Արևելյան Սիրիրը ավելի չոր ե, քան Արևելյանը և այդ պատճառով ճահճուներն այստեղ ավելի քիչ են։ Անտառը բաղկացած է փշտերեւ ծառերից, վողորենու և նույն խառնությունով։

Մինչև XIX դարի սկզբները տայգայի կենտրանական աշխարհը չատ հարուստ եր։ առանձնավոր շատ ելին մուշտակավոր կենդանիները։ Ներկայումս մուշտակավոր կենդանիների ամենաարենավոր տեսակները, ինչպես են սամույը և սև աղվեսը, մնացել են միայն Արևելյան Սիրիրի և Հյուսիսային Ամերիկայի տայգաների ավելի անմարդաբնակ մասերում։ Արժեքավոր մուշտակավորների պահպանության համար Խոչհրդային Միության վորոշ անառաներում վորոշ անելն արգելված ե։ Հաճախ այստեղ պատահում են նաև իշածյամ։ Շատ կան այստեղ՝ աղմեսներ, գալլեր, սովորական արջեր, սպիտակ նաղաստակներ և մանավանդ սկյուռներ։ Քիչ չեն պատահում նաև կղաքիսներ, կնդուղներ, կուլիսներ և լուսաններ։ Թուչուններից վորոշում են՝ մայրահավեր, վայտածորիներ, աքարներ և ողիտակ կաքապներ։

Խառն և տերեւափոր անտառները։ Խառն անտառներում փշտերը ծառերի հետ միասին կան և լայնատերեւ ծառեր, որինակ՝ կաղնի։ Կաղնին լույս շատ է պահանջում։ ամենից լավ նա աճում է կավա-ալիազախառն հողերում։ կաղնիների միջև յեղած աղատարածության վրա, բանում են այնպիսի ծառեր, վարոնք լույսի մեծ պահանջ չունին, ինչպես են՝ յեղենին, լորին, թղին և ծղին, իսկ ավելի լույս տեղերում՝ հացին։ Գետինն այս անտառներում ծածկած ե լինում խոտահատադառաջին և լայնտարերեւ խոտարույնուով։

Այս շերտերում վայրի կենդանիները համարյա վոչնչացվել են։ Ավելի հաճախ պատահում են՝ արջեր, գալլեր, աղմեսներ, կնդուղներ, ողիտաներ, նաղաստակներ։ Շատ են միջատակներ թուչուններ (կտցահար, յեղաշտահավ, կեռնեի, հոպոս և այլն)։

Անտառի առանձին տեսակ են կաղմում Հեռավոր Արևելյան Ծերկիրի անտառները։ Բացի մոխրահողերից, այստեղ մեծ տարածություններ են բանում նաև հողերը, վորոնք բերքատվության տեսակետից պակաս չեն ունահողից։ Բայց դրանք սեահողա-

Հին կաղմություն չունեն, այլ մարդագետնային—կիսաճահճայի հողեր են:

Իրենց բարձագանությամբ աչքի յեն ընկնում հարավ-Ռուսական անտառները: Այստեղ հյուսիսային և հարավային մեսական բարձր խառն են բանում. գերակշռում են կաղնին, վորի հետ միասին այնտեղ բանում են նաև յեղնին, մայրի (վոր խոշոր ընկույր ներ և տալիս), վողորենի, լորի, թղիկ, նշղարենի, ծփի և տանձենի:

Տեղ-տեղ պատահում են և ամուրյան խաղողի բույսեր, վրոնք լինաների նման ծառերին փաթթաթված են լինում:

Կենդանական աշխարհի հյուսիսային և հարավային տեսակները նույնպես խառը ճեղվ են տարածված: Միւնքույն անտառներում, տայգայի կենդանիների հետ միաժամանակ ապրում են և հարավային կենդանիներ՝ մանջուրական վաղր, ընձառյուծ, վարդ, յեղներու, այծյամ, ֆասիան:

Խառն անտառի շերտը հարավում փոխվում եւ սաղարքավոր անտառի: Այստեղ աճում են գլխավորապես լայնատերեւ ծառեր, բացի սաղարթավոր ծառերից, այստեղ կա նաև նոճի, բայց յեղենին այս մասերում այլևս չի պատահում: Այս շերտում հիմնական տեսակը կաղնին է, իսկ Սրբամտյան Յելրուղայում, կաղնու միասին, նաև հանարենին:

Տափաստաններ: Յելրուղայում և Հյուսիսային Ամերիկայում, անտառների և տափաստանների անցման շրջանում կամ միջին շերտ—այդ անտառափաստանային շերտն եւ: Այստեղ անտառները այլևս անընդհատ զանգվածներով չեն տարածվում, այլ ընկած են այստեղ-այնտեղ առանձին կտորներով: Բաց տարածություններում լինում են և թփուտներ:

Նախնական տափաստանները ծածկված են յեղել բարձր և խիտ խոտերով: Խուլու փտելով, հումուսի հարուստ պաշարներ և գոյացրել այստեղ: Տափաստանների յենթահողը բաղկացած լյոսից և կալիից: Այդ հումուսի և լյոսի կամ կալիի խառնուրդ գից առաջցել են տափաստանների չափազանց արդավանդ մաս Հողային հողերը: Հումուսի քանակությունը, տարբեր տեղերում, տարբեր եւ: Ուկրաինայի արկմտյան հողերում նա 6—7% եւ կամ մում, իսկ Անդրվոլդայում հասնում եւ 14%:

Սևահողն իր մեջ պարունակում եւ մեծ քանակությամբ աղոտ, կալիոն և փոսփոր, վորոնք անհրաժեշտ են բույսերի համար. նա Դուրաթափանց ե ջրի ու ողի համար և տաքությունն ու խոնավությունը լավ են պահպանվում նրա մեջ: Իսկ այդ պայմանները չափազանց կարեոր են բույսերի աճման համար:

Այդ նպաստավոր պայմանների չնորհիվ, ներկայումս, բոլոր խոտավետ տափաստանները մշակված են: Վայրի կենդանիները, բացի նապաստակներից և կրծողներից (դաշտային մեկներ, սկարպիններ) ։ արդեն վոչնչացված են այդ տեղերում:

Հարավային ավելի չոր շերտերում բուսական ծածկոցի պատկերը փոխվում է. այստեղ խոտն այլևս կանաչ ծածկոց չի կազմում, այլ տեղ-տեղ բանում ե փնջերով. յեղածն ել չոր և լինում: Դրանց փոփոխածքից շատ քիչ բուսահող ե ստացվում և սեահողը փոխարինվում ե սակալվահումուս հողով՝ չաղանակադույյն, դորչկարմրավուն և ազա գորչ հողերով:

Այս շերտում վայրի կենդանիներ շատ քիչ են. շատ են կբծող-ները. կան վաղող թռչուններ (արոսներ և այլն):

4. ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ԳՈՏԻ

Անապատները լինում են ավաղոտ կամ քարքարոս: Անապատի հողը միանդամ ին գուրիկ և լինում ջրից և անձրեներից. բուսականություն և կենդանիներ համարյա չեն լինում: Տեղ-տեղ միայն պատահում են բուսականությամբ հարուստ փուքը տարածություններ, վորոնք կոչվում են ողիս: Բաղիսներն առաջանում են ավաղուներից բղխող աղբյուրների չուրջը: Արևադարձային գոտունապիսներում բանում են արմավեներ, բարեխառն զոտու սաւիսներում՝ կաղամախիներ:

Անապատն իր ափերի մոտ փոխվում ե կիսանապատի: Այստեղ վենում ե կարճատե անձրեային շրջան. բայց դրանից անապատի պատկերը շատ քիչ է փոխվում: Բուսականությունն այստեղ չտափազանց աղքատ ե. նոսր փնջերով բանում են զանազան հոտափետ չոր խոտեր և փշոտ մացառներ: Կան տեղեր, ուր մացառուտները շատ խիտ են լինում և մեծ տարածություններ են բանում: Ավատրավիական կիսանապատներում այդ փչոտ թիւուտները

շատ տեղերում միանդամայն անանցանելի յեն մարդու համար՝ ջամարի ջոր անապատներում ազրում են կամ արագավազ կենդանիների որինակ՝ վիթը, կամ ցատկող կենդանիներ, ինչպես որինակ ավտրալիական կենդուրուն:

5. ՏԱՐ ԳՈՏԻ

Սալտանելիք: Տաք գոտում, վորտեղ անձրեային և չոր յեղանակները միմյանց հաջորդում են պարբերաբար՝ անտառատափառութեաներն այլ տեսք ունին. սրանք այստեղ կոչվում են սավաններ: Սավանները ծածկված են լինում բարձր խոտերով և բաղմայա բույսերով, վորոնք անձրեների շրջանում վառ-կանաչ դույն են տալիս ամբողջ տարածության, իսկ չոր յեղանակին բոլորովին չորանում են: Անտառները շերտերով տարածվում են գետերի ի մեջ կարությամբ: Պատահում են և առանձին, յերբեմն ել հսկայական մեծության ծառեր, որինակ՝ աֆրիկական բառ-բարը:

Սավաններում ազրող կենդանիների մեծ մասը խոտակերներ են, վորոնք ապրում են հոտերով: Շատ կան անտիլոպաներ, առաջ ընձուղաներ, գերբեր: Թռչուններից հայտնի յե արագավազ ջամը: Կենդանիներից ոնդեղջուրն ե միայն, վոր չի վախենում դիւշատիչներից և մենակ և ապրում:

Խոտակեր կենդանիների հոտերը շարունակ գիշատիչների հարձակմանն են յենթարկվում. վախից նրանք ջրերին մոտենում են միայն գիշերները: Բայց այդ ել չի փրկում նրանց, քանի վոր այստեղ արգեն գարան են մտնում առյուծը, վագրը և կոկորդի լոսը:

Խոնակ արևադարձին անտառները բաղկացած են մշտակալար և շատ խոշոր ծառերից, վորոնց ճյուղավորությունն սկսվում է 50—60 մետր բարձրության վրա: Մասերի մերկ բները սյունաշարքերի յեն նմանում: Խիտ ճյուղավորության միջից արևի լույսը համարյա չի անցնում և այդ պատճառով անտառը միշտ մութ ե լինում: Արմատների հսկայական ճյուղերը, դուրս դրավով գետնից բարձր, ալիքանման թմբերով տարածվում են ծառերի շուրջը. խիտ լիաններն իրենց բաղմաթիվ ճյուղերով փաթաթիւմ են բներին, իսկ ներքեւում, ստվերներում աճող մանր ծառեր:

Ել և թփերը ծածկում են դետինը և դժվարանց թալուտներ գոյացնում:

Անտառի կյանքը դվամավորապես վերեւում՝ ճյուղերի վրա յե կենտրոնացած: Անտառի կենդանիների մեծ մասը ճյուղերի վրա յն ապրում, որինակ՝ կապիկների հոտերը, բազմաթիվ թաչունների յերածները: Մասապառուղները նրանց առատ կերակուր են մատակարարում: Ասիայի և Աֆրիկայի արևադարձային անտառներում կան և փղեր, իսկ Աֆրիկայի անտառներում ապրում են նաև հսկայական գորիլլաներ:

Արևադարձային գոտու հողերը կալախառն կարմրահողերից են բաղկացած, վորոնք մեծ քանակությամբ յերկաթի միացումներ են պարունակում իրենց մեջ. կրային աղեր շատ քիչ կան դրանց մեջ: Հողի կարմիր գույնը յերկաթի միացումներից ե առաջցել:

Մերձարևադարձային անտառներում հողերը նույն կազմությունն ունին, ինչ վոր և արևադարձային անտառներում:

Մուսանային շրջանում տեղումները շատ առատ են, բայց նրանք լինում են միայն ամառը: Այստեղ անտառները շատ ճոխ են, բայց ավելի նոսր են, քան արևադարձային անտառները: Զոր ժամանակաշրջանում նրանք տերեւաթափ են լինում:

Միջերկրածովյան և Ավստրալիայի մերձարևադարձային շրջանների անտառներն ավելի ևս նոսր են: Նրանք բաղկացած են եկատ թփուտներից և կոշտատերեւ մշտադար մանր ծառերից, ինչպես են՝ դափնին, դափնակեռասը, հովանոցածե ակացիան և մշտադար կիպարիսը Միջերկրածովյային յերկրներում: Այս անտառները սովորախիտ չեն. ավելի պակաս սովորախիտ են Ավստրալիայի Եվկալիպտի անտառները:

6. ՄԱՐԴՈՒ ԱՌԱՋԱՑՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Բուսական և կենդանական աշխարհները շատ քիչ տեղերում են մնացել բնական, անփոփոխ դրության մեջ: Համարյա ամեն տեղ մարդը նրանց փոփոխման ե յենթարկել. նա վոչչացրել ե վայրի բույսերն ու կենդանիները և նրանց փոխարինել կուլտուրական բույսերով և ընտանի կենդանիներով: Վաշկառուն անամնապահ-

Ները շատ քիչ աղդեցություն ունելին բուսական ծածկոցի վառ Բայց նստակյաց հողագործները մեծ փոփոխություն առաջացրին Նրանք կտրտեցին անտառները, մշակեցին տափաստանները, չորացրին ճահճները, կառուցեցին ջրանցքներ, մանավանդ անջրդի վայրերում և վերամշակեցին հողը. սակավահող վայրերում նրանք ողտագործեցին հողի ամեն մի կտորը. Միջերկրականի ծովափնյա յերկրներում, ուր հողը չափազանց սակալ է, բերովի հողից լեռնալանջերի վրա նրանք տերրասներ կառուցեցին կուտուրական բույսեր տնկելու համար: Այդ բոլորը արվեց աշխատավորների դարձուր ջանքերի չնորհիլ:

Աշխատավորների ջանքերով ստեղծված կառուցումները փոխեցին յերկրի տեսքը. ովկիանոսները միացան ջրանցքներով, շամաքը ամեն տեղ կտրտվեց գանաղան ուղղությամբ անցնող յերկաթուղիներով. այստեղ, ուր առաջ անտառներ և անմշակ տափաստաններ են ելին, այժմ ցորենի, բրնձի և բամբակի ղաշտեր են տարածվում: Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում և Նոր Զելանդիայում ընդարձակ չափերով, դարձացալ արդյունաբերական անասնական հողություններում. դրա չնորհիլ, այդ յերկրներին արտահանում են մեծ քանակությամբ բուրդ, միևնու կաթնամթերքներ:

Արևադարձային և մերձարևադարձային յերկրները ներկայումս կապիտալիստական պետությունների գաղութներն են կարմում: Նրանք հարկադրված են զբաղվել միայն հումույթների առաջրությամբ. այդպես են պահանջում կապիտալիստների շահերը: Հաճախ, հումույթի արժեքն իջեցնելու նպատակով, կարիտատիստներին հարկադրում են զաղութների աշխատավորներին, դրադիլել միայն մի վորեե հումույթի մշակությամբ. որինակ մի տեղ արտադրվում եմ միայն բամբակ, մի տեղ՝ համեմունքներ՝ մի այլ տեղ՝ սուրճ կամ բամբակ և այլն:

Պլանտացիաներում և կառուցումների վրա աշխատեցնում են տեղացիներին. նրանց աշխատեցնում են բնի ուժով, մանավանդ դուռալիորներին: Աֆրիկայի արևադարձային մասերում, յերկաթուղիներ կառուցելիս, նեղրերին աշխատանքի ելին բերում չըլլայակապ, քանի վոր նեղրերը դերադասում ելին կյանքները վտանգի յենթարկելով փախչել, քան աշխատել ստրկական ծանրվանդի յենթարկելով փախչել, քան աշխատել ստրկական ծանր-

պայմաններում. յերկաթուղիների վրա աշխատող նեղրերը, համարյա մինչեւ վերջին մարդը, կոտորվեցին հիմանդություններից կամ հյուծվելուց:

Եատ և ծանր գաղութային յերկրների դրությունը. կատալուգաստներն աշխատում են միայն, վորքան կարելի յէ, շարուստություններ հափշտակել գաղութներից. անտառները, հողը, հանքերը և յերկրի այլ հարատություններն ողտագործվում են ամենադիշատիչ ձեռվ: Խոկ գաղութային յերկրի շահերն ամենուն հաշվի չեն առնվում կապիտալիստների կողմից:

7. ԽՈՐՃՐԴՅԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

Աննախուցնթաց թափով և ընթանում մեր յերկրի տնտեսական վերելքը. նա ընդդրկում է ամբողջ յերկիրը, սկսած հյուսիսային ունդապատճերից մինչեւ հարավի տաք յերկիրը: Զարդացման այդ տեմպերը ստեղծվել են չորրոշիվ այն նվաճումների, վոր ունեցել ե Խորհրդային Միությունը բնական պայմանների ողտագործման ասպարիզում:

Այսպես, յերբ մոտ ժամանակներս կոլա թերակղում հայտնաբերվեցին ապատիտի, նեֆելինի, յերկաթի, պղնձի, նիկելի և անքատեսակներ, անմիջապես Խիբինի տունդրայում ստեղծվեց սոցիալիստական արդյունաբերության մի նոր խոշոր կենտրոն—Խիբինագորսկ քաղաքը:

Յերբ Յենիսեյ գետի վրա, բևեռային ըրջանից այն կողմ, եղարկայի ծովափին մեծ նավահանգիստ կառուցվեց, անմիջապես այստեղ հիմք դրվեց փայտամշակման արդյունաբերության:

Տայղայի հյուսիսում ներկայումս զարգանում է դյուղատրնեկությունը. հացարույսերի մշակման սահմանը դեպի բենոն և շարժվում: Այդ հնարավոր չեր լինի իրադրծել, յեթե նախապես մեր փորձակայանները չուսումնասիրեցին տեղի պայմանակարգությունը: Փորձակայաններն ապացուցեցին, վոր Տայղայում հնարավոր և նույնիսկ ցորենի մշակում:

Խնդուստրացման ե յենթարկվում վոչ միայն յելլորդական ուայդան, այլև Սիբիրի տայգան. մեքենաշինական հսկա դործա-

բաններ են կառուցվել այդտեղ՝ Նովոսիրիսկում, Ստալինսկում, այդ տեղերում սոցիալստական քաղաքներ են կառուցվել:

Հարավային տայդայի, խառն անտառների ու տափաստանային գոտիները վաղուց արդեն մշակման են յենթարկվում: Այդ վայրերը բարձր տեխնիկայով զինված կոլտնտեսությունների և խորհանտեսությունների և ծաղկած ինդուստրիայի շրջան են դարձել: Իսկ մինչև Հոկտեմբերյան Հեղափոխությունն այդտեղ իշխում եր մանր, աղքատիկ տնտեսությունը, դաշտերն ու գյուղերը խղճուկ տեսք ունեցին, իսկ նահանդական ու գավառական քաղաքներն անշարժության մեջ հաղիւլ ելին քարշ տալիս իրենց գոյությունը:

Ամենալայն չափերով ոդտագործվում են և եներգիայի աղբյուրները: Շինված են բազմաթիվ խոշոր ելեկտրակայաններ, վորոնցից ամենանշանավորը Դնեպրոգետսն է: Ելեկտրակայաններն աշխատեցնելու համար ոդտագործվում են՝ սպիտակ ածուխը, քարածխի հասարակ տեսակները և տորֆը, վորով շատ հարուստ և անտառային շրջանը: Իսկ առաջ տորֆային հողերը միանամայն անպետք հողեր ելին համարվում:

Չափաղանց բարձրացել ե քարածխի, նաևթի, թուջի և պողպատի արտադրությունը:

Նոր մետաղաձուլական գիգանտներ են կառուցված հարավում, Ուրալում, Սիբիրում:

Մեզ հաջողվել ե նաև չոր տափաստաններում հայտնատիկային և անասնապահական խորհուտեսություններ կաղմակերպել և արհեստական վոռոգման ընդարձակ ցանցեր կառուցել այդտեղ՝ Դրա համար մեծ գժվարություններ պետք եր հաղթահարել: Ներկայումս կաղակստանի անջրդի անապատներում 1 միլ. հեկտար վոռոգելի հող և ստեղծված բամբակի ցանքի համար: Միջին Ասիայի անապատները և Անդրկովկասի արևելյան մասի չոր տափաստանները, վոռոգման ցանցերի շնորհիվ ծածկվում են բամբակի և բրնձի հարուստ պլանտացիաներով և մրգատու այգիներով, Ներկայումս բամբակի կուլտուրայի սահմանները դեպի հյուսիս են տարածվում: Բամբակի կուլտուրայով պարագաներ են վուշիային հարավում, այլև հարավային Ուկրաինայում, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում: Ստեղծված են թելատու նոր բույսերի

համբի և քենդիրի, նաև կառուչուկաբեր և եթերատու բույսերի պլանտացիաներ:

Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման միասին, ուժեղ կերպով ընդարձակվել ե նաև յերկաթուղիւրի և հաղորդակցության ջրանցքների կառուցումը:

Այս, ինչ արված ե մեղ մոտ տրանսպորտի սապարիզում հինգ ընթացքում, կալիստալիստական յերկրներում կարելի յերազործել մի քանի տասնյակ տարիների ընթացքում միայն:

Վեր բերած որինակները ցույց են տալիս, թե ինչպիսի խոր նշանակություն ունի բնական պայմանների պլանային ողտարկումը յերկրի տնտեսության գարգացման համար:

ԽՍՀՄ-ի տնտեսության զարգացման աննախընթաց տեմպերը բարեւճ են կոմունիստական կուսակցության պլանային զեկարության և աշխատավորների ենտուզիազմի ու կաղմակերպվածության:

VII. ՅԵՎՐՈՊԱ

1. ԴԻՐԻՔ ՅԵՎՐՈՊԱ

Յեվրոպան Յեվրասիայի մի մասն է կազմում: Նա Յեվրասիա-արևմտյան կողմից թերակղու նման ձգված և գեղի Ատլանտիկի ովկիանոսը: Յերեք կողմից՝ հյուսիսից, արևմուտքից և հավաք նա շրջապատված և ծովերով (վո՞ր ծովերով), իսկ արևելյան միացած է Յեվրասիային: Միացման սահմանն անց է կացած պարմանական ձևով, վորովհետեւ վորով կերպով չի կարելի թե, միացման դիմը վո՞րտեղից և անցնում: Այդ սահմանը արարում են արևելքից՝ Ուրալյան լեռները և Ուրալ դեաը, իսկ արալ-արևելքից բնական սահմանն ամարում են կումա-Մանիչի շրջարկությունը:

Մի շարք նպաստավոր պայմանների շնորհիվ, աշխարհիս ամենաշեղ արդյունաբերական և առետարական պետությունները վերապայում են կաղմակերպվել: Այդ պետությունների բուրականի իր ձեռքն է վերցրել աշխարհիս մեծագույն մասը և Յեվրոպայի արագ զարգացմանը նպաստող հիմնական աշխալային կովկասում: Ստեղծված են թելատու նոր բույսերի

խարհագրական տպայմանը նրա զիրքն եւ հանդիսացել և առավել ևս այն հանդամանքը, վոր նա բարեխառն գոտում է գոտնվում և մոռ և Առլանտյան ովկիանոսին և Գոլֆշտրոմի տաք հոսանքին:

Դրա չնորհիվ Յեվրոպայում ստեղծվել են աշխարհիս ամենաբարեհաջող և անասնապահության ու յերկրագործության համար ամենանպաստավոր կլիմայական պայմանները:

Յեվրոպական ցամաքը շրջապատող ծովերը՝ Միջերկրական նր—հարավից և Գերմանական ու Բալթիկ ծովերը՝ Հյուսիսից իրենց բազմաթիվ խոր ծոցերով մեծ հարմարություններ են ստեղծել ծովային հաղորդակցության համար:

Բնական տնտեսությունից ապրանքայինի անցնելու ըլլանում յերբ ծովային ճանապարհներն առաջնակարգ նշանակություն ստացան ապրանքափոխանակության զարգացման համար, Յեվրոպայի համար ստեղծվեցին առավելադույն նպաստավոր պայմաններ՝ չնորհիվ ծովային հաղորդակցության համար ունեցած այն հարշաբությունների:

Հետաւոյում, XVI դարում յերբ համաշխարհային հաղորդակցության հաստատվեցին յերկրների միջն, Յեվրոպան, Կմելով ծովային ճանապարհների հանդույցում, համաշխարհային հաղորդակցության կենտրոն դարձավ:

Արևադարձային Աֆրիկայի հյուսիսային մասը՝ Սուդանը կազմում ե արևադարձային անտառների և անապատային դասում միջին փոխանցման դոտին : Սա առատ տեղումների և արևադարձային կլիմայի շրջան է : Բայց Սուդանի զանազան մասերում տեղումները միևնույն չափով չեն թափվում : Այդ պատճառով Սուդանի տարածությունը տեղ-տեղ ծածկված ե սավաններով, իսկ տեղ-տեղ արևադարձային անտառներով :

Անապատներ : Հյուսիսային Աֆրիկայի միջին մասը, սկսած Ալեանտյան ովկիանուսից մինչեւ Կարմիր ծովը մի անընդհատ ավաղոտ անապատ է : Դա Սահարայի անապատն է, վորն իր մակարդակի մեծությամբ համարյա հավասար է Յելլուսլային : Սահարայի արևելյան կողմում գտնվում ե Լիբիական անապատը : Անապատն անձրեադորեկ շրջան է. կլիման այստեղ չափազմնչոր և ու տոթակեզ : Անապատի ներքին մասերում ողի բարեխառնությունը բարձրանում ե մինչև 60° , իսկ գետինը տաքանում է մինչև 70° :

Ողի բարեխառնության տատանումներն այստեղ չափազմնչում են . ցերեկներն, ինչպես ասացինք, բարեխառնությունը հասնում է 60° , իսկ գիշերները փոխարինվում ե մի քանի աստիճան շրառությամբ : Կյանքը բացակայում ե անապատներում, բացի ոտղիսներից : Ուզիմների գլխավոր բուսականությունը կազմում են փյունիկան արմավենիները : Արհեստական կերպով վոռոգվող

ուղիսներում կարելի յեւ պարապել հացարույսերի և զանազան պլողատու ծառերի մշակությամբ : Աղիսները ծառայում են իրեւ կայարաններ յերկար ճանապարհոց ուժասպառ յեղած քարավանների համար : Վերջին ժամանակներս Փրանսիական կապիտալիստները Սահարայով ավտոմոբիլային յերթեւեկություն են հաստատել : Ներկայումս աշխատանքներ են տարվում Սահարայից յերկաթուղի անցկացնելու համար :

Յեղիպտոսը Սահարայի ամենախոշոր ուղիսն է . նա ընկած և ստորին Նեղոսի յերկարությամբ :

Յեղիպտոսում հինգ ամիս անընդհատ նույնպիսի չող ե լենում, ինչպես և Սահարայում : Տեղումները լինում են գլխավորապես ձմրան ամիսներին :

Ամբողջ ջուրը, ինչպես դործածության, այնպես ել վոռողման ու այլ նպատակների համար, ստացվում է Նեղոսից :


Նեղոսը Աֆրիկայի ամենայերկար գետն է : Նա սկիզբն է առնում Վիկտորիա լճից : Յերբ կենտրոնական Աֆրիկայում սկսվում ե անձրեների շրջանը, այդ ժամանակ Նեղոսը հորդանում է . գետի ջուրն իջնելուց հետո ափերին նստած տիղմը պարարտացնում ե առափնյա հողը և խոշոր չափերով բարձրացնում նրա բերքատվությունը : Հողերը վոռողելու և պարարտացնելու նպատակով գետի ամբողջ յերկարությամբ կառուցված են ջրանցքների խոչը ցանցեր : Կառուցված են նաև մի շարք պատճեններ ու ջրամբարներ, վորոնք հարավորություն են տալիս կանոնավորել ջրի ողտաղործումը :

Հարավային Աֆրիկայում ավազոտ անապատներ չկան : Հեշտակել կարելի յեւ միայն Կալահարի կիսանապատը, վորը ծածկված է կարճ խոտերով և թփուտներով :

Մերձարևադարձային շրացներ : Մերձարևադարձային կլիմայական սղայմաններ գոյություն ունին միայն հյուսիսային ամերում և ցամաքի հարավային մասում :

Կենդանիները : Ցամաքի զանազան մասերի կենդանական աշխարհները միմյանցից շատ են տարբերվում : Արևադարձային անտառներում ապրում են՝ գոմեշներ, վարազներ, կապիկներ, ընձառյութներ և առյուծներ : Սավաններում ապրում են՝ անտիլոպներ, գերբեր, ընձուղտներ, փղերեր, գորշեր, գորշագործեր, փղեր և առյուծներ : Ջրային կենդանի-

ներից նշանավոր են բեգեմոտը և կոկորդիլոսը։ Սավաններում շատ են մրջյունները և մորեինները։ Կիսանապատճերում կան ռողտեր և ջայլամներ։ Ցամաքի հյուսիսային և հարավային մասերում գնացանիներն տեսակները նույնն են, ինչքոր Ցեղուղայում։ Չափազանց բաղմազան են Աֆրիկայի թռչունների տեսակները,



Նկ. 77. Ռազի

այսուղի կան թռւթակներ, յեղիպտական արագիլներ, սովորական արագիլներ, ջրածիծառներ, խայտահավեր, կեռնեխներ, բուեր, փայտիրներ, աղավնիներ և ուրիշ շատ տեսակներ։

6. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Աֆրիկայի բնակչության թիվը մոտավորապես 140 միլիոնի յի հասնում։ Միջին խտությունը 1 քառ. կմ. վրա հավասար է 5 մարդու։ Ամենից խիտ բնակված ե Նեղոսի բարեբեր հովիտը՝ 1 քառ. կմ. վրա 360 մարդ։ Սահարան և Կալահարին անմարդա-

բնակ են։ Այսուեղ բնակչություն կա միայն ուղիսներում։ Հյուսիսային Աֆրիկայում 1 քառ. կմ. վրա ապրում ե 10—15 մարդ, Արևմտյան Աֆրիկայում՝ կոնդոր գետի ներքին հոսանքի հովտում՝ 25 մարդ, Հարեւատանում՝ 11 մարդ։ Բայտ աղդության Աֆրիկայի բնակչությունը չափազանց բազմազան է։ Հյմնական բնակչությունը կազմում են նեղբերը, բուշմենները, քաֆրերը, և հոտանառաները։ Հյուսիսում ապրում են արաբները, բերբերները, տուարեզները և հարեչները։ Բացի սրանցից Աֆրիկայում ապրում են և յեվրոպական աղդեր (անգլիացիներ, Փրանսիացիներ և այլն)։ Մրանք ապրում են դլամավորապես մերձարեադարձային Աֆրիկայում։

Համարյա ամբողջ Աֆրիկան գաղութների յի վերածված։ Այդ գաղութները պատկանում են Անգլիային, Ֆրանսիային, Բելգիային, Իտալիային, Խոպանիային և Պորտուգալիային։

Գաղութներում տեղական բնակչությունը, կազիտալիստական պետությունների կողմից յենթարկվում է անխա և դաժան շահագործման։

Տեղական բնակչությունը միանդամայն իրավագուրկ է։ Նրանից վաղուց արդեն խլված են նրա հողամասերը։ Բուրժուազիան այդ հողերը վերածել ե պլանտացիաների։ Ծանր հարկերի միջով նա ստիպում է տեղացիներին աշխատել այդ պլանտացիաներում։ և տեղացիները ստիպված են աշխատել քանի վոր դաշտակ տեղն ե, ուր նրանք կարող են աշխատանքի ընդունվել։ Կարեւոր դեպքերում բուրժուազիան ողտագործում է տեղացիներին և հարկադիր կերպով։

Տեղացիների դրությունը չառ հեռու չե ստրկությունից և թեև ստրկությունն որենքով վաղուց արդեն վերացված է։

Համաշխարհային պատերազմի ժամանակ տեղացիներն ողտագործվում եյին իրեւ թնդանոթային միս։ Նրանց համաքաղերում եյին և առանձին զօրամասեր կազմում՝ գերմանական Փրունտ ու Դարկելու համբուր։

ԱՄԵՐԻԿԱ

1. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՅՈՒՏԸ ՑԵՎ ՆՐԱ ԳՐԱՎՈՒՄԸ ՑԵՎՐՈՊԱՅԻ ԿՈՂՄԻՑ

Ամերիկան մյուս աշխարհամասերից առանձնացած է : Յեղոպայից և Աֆրիկայից նա բաժանվում է Ատլանտյան ովկիանոսով, Ասիայից և Ավստրալիայից՝ Խաղաղ ովկիանոսով : Միայն Հյուսիս-արևմուտքում նա բավական մոտ է Ասիային : Բներինդյան նեղուցը, վորն այդ յերկու աշխարհամասերի մեջ ե գտնվում, րնդամենը 89 կմ . լայնություն ունի : Նա 9 ամիս ծածկվում ե սառուցով, այդ պատճառով չափ հին ժամանակներում բնակչությունն այդ սառուցի վրայով Ասիայից անցնում եր Ամերիկա : Ամերիկայի և Ցեղոպայի միջև ամենակարևոն ճանապարհը Ատլանտյան ովկիանոսի Հյուսիսային մասում 3500 կմ . է :

Ցեղոպացիները դեպի Հնդկաստան ծովային ճանապարհ լուրունելիս պատահմամբ զտան Ամերիկան : Հնդկաստանը դրալում եր իր համեմունքներով՝ դարչինով, մուսկատի ընկույզով, մեխիակով, վորոնք այն ժամանակ վոսկու չափ թանկ եյին դնահատվոմ : Դեպի Հնդկաստան կարելի յեր գնալ և Ասիայի աշխարհամասով . բայց այդ ճանապարհը դժվար եր ու վտանգավոր : Ցեղոպարզեց յերկրի գնդաճեռությունը, սկսեցին փորձել ծովով անցնել Հնդկաստան, ուղերձվելով դեպի արևմուտք :

Հույս ունենալով, վոր Ատլանտյան ովկիանոսով կարելի յի ծովային ճանապարհ գտնել, իտալացի Քրիստովոր կոլումբոսը 1492 թ. հոկտեմբերի 12-ին խսպանական կառավարության նախլուրով ուղերձվեց դեպի Հնդկաստան : Յամիս հետո նա հասավ Բահամյան խմբի կղզիներից մեկին՝ Վեստ-Ինդիայի մոտ, հետո դուավ կուբան և ուրիշ Վեստինդիական կղզիներ : Բայց նա մինչև իր մահը համոզված եր, վոր հանդիպել ե Զոնդյան արշակելաբարի կղզուն և գտել ե ծովային ճանապարհ դեպի Հնդկաստան :

XVI դարի սկզբներում իտալացի աշխարհագրագետ Ամերիկո Վեսպուչին հետազոտեց Հարավային Ամերիկայի Հյուսիսային և արևելյան ափերը : Նա առաջինն եր, վոր նկարագրեց նոր աշխարհամասի մինչ այդ գտած յերկրները և այս նոր աշխարհամասն ստացավ նրա անունը (Ամերիկո=Ամերիկա) :

Ամերիկայում, բացի պղպեղից, ուրիշ համեմունք չդտան ; Իայց դտան մեծ քանակությամբ արծաթ ու վոսկի, մանավանդ Մեքսիկայում և Պերուում : Այդ յերկու յերկրների բնակչությունը հասել եր կուլտուրայի բարձր մակարդակի, բայց նա չուներ յերկաթ և հրազեն : Մի խումբ իսպանական ավանտյուղիստներ հոգին հավասարեցրին Մեքսիկայի և Պերուի շենքերը, պլանտացիաները և այգիները, բնակչության մի մասը վոչչացրին, իսկ մյուսը՝ ստրկացրին :

XV դարի վերջում և XVI դարի սկզբում իսպանացիները զրավեցին Հարավային և Կենտրոնական Ամերիկան, բայց իրակիւայից, վորը գրավել եյին սորոտվալացիները : XVI դարի սկզբներից անգլիացիներն ու ֆրանսիացիներն սկսեցին գրավել Հյուսիսային Ամերիկան : Կարճ ժամանակով Հյուսիս-արևելքում հաստատվեցին հոլանդացիները : Նյու-Յորքն այդ ժամանակ կոչվեցիները : Ամերիկան Սմատրերամ, բայց հետո հոլանդական տիրապետությունները : Այսպես, յերկար ժամանակով Ամերիկան տիրապետությունները : Այսպես, յերկար ժամանակով Հյուսիսային Ամերիկան՝ անգլիացիների, իսկ Կենտրոնական և Հարավային Ամերիկան՝ իսպանացիների և պորտուգալացիների :

2. ԴԻՐԻԾ ՑԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ամերիկան ունի յերկու յեռանկյան ձև, յեռանկյուններ, վորոնք միացած են Պանամայի պարանոցով : Ցեռանկյուններն իրենց լայն կողմով գարձած են դեպի Հյուսիս, իսկ նեղ ծայրով՝ դեպի Հարավ . Մինչդեռ Ասիան ձգված ե արևմուտքից դեպի արևելք, Ամերիկան, ընդհակառակին, ձգված ե միջորեյականի ուղղությամբ : Հյուսիսից հարավ, սկսած հ. լ. 72°-ից մինչև հ. ր. լ. 56°-18 հաղար կմ . յերկարությամբ :

Ափերի գծագրությամբ իրարից տարբերվում են մի կողմից Հյուսիսային և Հարավային Ամերիկան, մյուս կողմից՝ Ատլանտյան և Խաղաղ ովկիանոսային յեղերքները :

Հյուսիս . Ամերիկան ափերի գծագրությամբ հետ և մնում միայն Ցեղոպացից : Հյուսիսում նրա մոտ գտնվում ե ընեռային արշեպելացը, հարավ-արևելքում՝ Վեստինդիական կղզիների շարքը : Նա ունի չորս թերակղզի (Վորո՞նք են) : Ափերը, մանավանդ հյուսա-արևմուտքում, խիստ կտրտված են :

Հակառակ Հյուսիսային Ամերիկայի, Հարավայինը պարզ գծադրություն ունի: Բացառությամբ հյուսիսային և հարավային ձայրամասերի, այսուեղ վոչ թերակղղիներ կան, վոչ մոտիկ կը դիմքներ: Ենդերքը քիչ է կտրտված:

Ատլանտյան ովկիանոսի յեղերքն ավելի շատ ե կտրտված, քան թե Խաղաղ ովկիանոսի յեղերքը: Բացառություն կազմում են միայն հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան յեղերքները: Այսուեղ յեղերքը խիստ կտրտված ե: Ատլանտյանի յեղերքը, բացի այն, վոր կտրտված ե, հարմար և դաշտավայրերով և գետերով միջին շրջանների հետ կատվելու համար: Խաղաղ ովկիանոսի ալիերճ, ընդհակառակը, միջին շրջաններից անջատվում են բարձր լեռներով: Խիստ կտրտված և մանավանդ Հյուս: Ամերիկայի Ատլանտյանի այն ծովափը, վոր տարածվում ե Յօ-րդ գուգահեռականից մինչև Լավրինտիփոսի գետաբերանը: Այսուեղ առաջացան խոշոր նավահանգիստներ, վորոնք առևտրական մեծ կապեր են հաստատել աշխարհի հեռավոր ծայրերի հետ: Դրանց մեջ ամենանշանավորը Նյու-Յորքն է, վորն իր առլրանքաշրջանառությամբ առաջինն է ամբողջ աշխարհում:

Հյուսիսային Ամերիկայի Խաղաղ ովկիանոսային ալիին նաև վահանգիստների առևտրական նշանակությունն սկսեց բարձրանալ միայն այն ժամանակ, յերբ Ատլանտյան և Խաղաղ ովկիանոսների ավելը միացան յերկաթուղիներով և բացվեց Պանամայի ջրանցքը:

Հարավ. Ամերիկայում կարևոր նավահանգիստները գտնվում են գետաբերաններում: Նրանցից նշանավոր են՝ Բուենոս-Այրեսը և Բիո-Ռե-Ֆանելյոն:

Ամերիկայի՝ Ատլանտյան նավահանգիստների դարգացմանը նպաստեց մանավանդ Յեկուպայի մոտիկությունը: Խաղաղովկիանոսային նավահանգիստներն ընդհակառակություն չեռու յեն: Այդ նավահանգիստները մտնելու համար պետք եր հարավից պատվել Ամերիկայի շուրջը կամ անցնել Սուեզի ջրանցքով: Խաղաղ և Ատլանտյան ովկիանոսների նավահանգիստների մերձեցման դործում հսկայական նշանակություն ունեցավ Պանամայի ջրանցքը, վորի վերջնական բացումը տեղի ունեցավ միայն 1920 թ.:

3. ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԳԵՏԵՐԸ

Ամերիկայի համար բնորոշ են խոչը և պարզ հատկանիշները: թե Հյուսիսային և թե Հարավային Ամերիկան բաժանվում են յերեքական մասերի, վորոնք գտվում են Հյուսիսից գետի հարավ: Արեմուտքում գտնվում են շատ բարձր, համեմատաբար յերիտասարդ լեռներ: Նրանց ընդհանուր անունն է Կարդիլյերներ (Հար. Ամերիկայում նրանք հաճախ կոչվում են Անտեր): Միջին մասը բոնված և դաշտավայրով: Արեւելքում տարածվում են հիսությամբ լեռներ և աննշան բարձրություններ:

Հյուսիսային Ամերիկան իր կաղմությամբ այնքան և նման Յեղրապային, վոր վոչ վոք չի կասկածում, վոր նրանք մի ժամանակ իրար հետ միացած են յեղել: Հար. Ամերիկան առաջ միացած եր վոչ թե Հյուս: Ամերիկայի, այլ Աֆրիկայի հետ: Բրազիլիական բարձրավանդակն իր կազմությամբ նման և հարավ-աֆրիկական բարձրության:

Ամերիկայի գլխավոր գետերն սկսվում են Կորդիլյերներից, վորոնցից արեւելք գտնվում են ընդհարձակ դաշտավայրեր: Գետերն իրենց վտակներով տարածվել են այդ դաշտավայրերով: Բացի այդ Ամերիկայի արեւելքն ընդհանուր առմամբ ավելի խոսնակ ե, քան թե արեմուտքը: Այս բնական պայմաններն են պատճառը, վոր Խաղաղ և Ատլանտյան ովկիանոսների գետային ավազաններն իրենց մեծությամբ տարրերվում են իրարից:

Հյուսիսային Ամերիկա: Իր լայն մասում Հյուսիսային Ամերիկան բաղկացած է հարթ Արեւելքից և լեռնութ Արեմուտքից: Արեւելքի հարթությունները բաղկացած են կանագայի հին զանդակածից, Ապարաւաշի լեռներից և Միսսիսիպի դաշտավայրից: Լեռներն ու զանդակածն այնքան են մաշվել, վոր դարձել են հարթություն:

Կանադական զանդակածը բլրուտ զրանիտյա յերկիր ե: Կանադակամաթիվ սառցաղաշտային ծագում ունեցող լճեր և ճահճներ: Գետերը սահանգավոր են: Հյուսիսում զանդակածը տարածվում է նաև ամբողջ բևեռային Արշիպելագի վրա: Այդ զանդակածի հարավային սահմանը կազմում են Կանադական լճերի շարքը և Հյուսիսամերիկան 5 մեծ լճերը:

Ապալալաշները միայն մեկ գաղաթ ունեն, վորի բարձրությունը 2 կմ-ից ավել ե: Հյուսիսում նրանք մոտենում են ուղղակի ծովափին: Դեսի հարավ լեռների և ծովեղերքի միջև գոյանում է դաշտավայր, վորի լայնությունը կազմում է մոտ 500 կմ: Այդ դաշտավայրի կողմից բարձրությունները սուր եջք ունեն: Այդ եջքից առաջացել են սահանքներ այն գետերի մեջ, վորոնք Ապալալաշներից հոսում են գետի Ատլանտյան ովկիանոսը: Եջքից թափվող ջրերի ուժն այժմ ողտագործվում է ֆարբիկաների համար:

Մէսսիսիպիի դաշտավայրը բոնում է Հյուսիսային Ամերիկայի մոտ քառորդ մասը: Նա ամբողջապէս գտնվում է Միսսիսիպի գետի ավաղանում: Դա հին հարթություն ե, ավելի ճիշտ «համարյա հարթություն» ե, վորն աննկատելի կերպով բարձրանում և գետի արեմուտք և կաղմում տափակ բարձրություն:

Արևմտյան լեռնաշխարհը բոնված է Կորդիլյերներով: Սրանք բաժանվում են յերկու գլխավոր լեռնաշղթայի՝ արևմտյան լեռնաշղթա և արևելյան լեռնաշղթա կամ ժայռոտ լեռներ: Այդ լեռնաշղթաների միջև գտնվում է մի բարձր բարձրավանդակ, վոր կոչվում է Հյուսիս-ամերիկյան Մեծ բարձրավանդակ: Արևմտյան լեռնաշղթան իր հերթին բաժանվում է Յեզերային լեռնաշղթայի և մի շարք ուրիշ լեռնաշղթաների, վորոնք գտնվում են նրանից դեպի արևելք: Հյուսիսում նրանք կոչվում են Կասկադյան լեռներ, հարավում Սիերա-Նեալդա: Կորդիլյերների ամենաբարձր դադաշը գտնվում է Հյուսիսում, Ալյասկայի լեռներում: Դա Մակ-Կինլի դադաթն ե, մոտ 6200 մետր բարձրությամբ: Ժայռոտ Կասկադյան և Սիերա-Նեալդա լեռների բարձրությունները համում են 4—4½ կմ.:

Զնայելով իր բարձրության, Կորդիլյերը դյուրանցանելի յեն՝ Դա հնարավորություն տվեց կոլոնիստներին շարժվել գետի հեռավոր Արևմուտք, Խաղաղ ովկիանոսի ավերը: Կոլոնիստների հոսանքն ուժեղացալ այն ժամանակ, յերբ այդ լեռներով անցան յերկաթուղիներ՝ Ատլանտյան ովկիանոսի ավերից մինչեւ Խաղաղ ովկիանոսը:

Հյուսիսային Ամերիկայի արևելքը Կանադական զանդկածի և հին Ապալալաշների սահմաններում շատ հարուստ է յերկաթով, պղնձով և քարածխով, ինչպես և կաղարի, ցինկի ու նիկելի ահա-

պին պաշարներով: Ապալալաշների և երի լճի միջև գտնվում է յին նալթի շատ հարուստ հանքեր, բայց սրանք այժմ սպառված են: Զաղաղաված պաշարներ գտվում են Մեքսիկայի ծոցից դեպի հյուսիս: Արևմուտքն ունի նալթի, վոսկու, պղնձի և արծաթի մեծ պաշարներ:

Հյուսիսային Ամերիկայի հարավային նեղ մասն ամբողջապէս բարձրավանդակ է (Մեքսիկայի բարձրավանդակ): Նրա հարավում անցնում է հրաբուխների շղթա: Այդ շղթայի ասանձին դադաթները 5 կմ-ից բարձր են: Մեքսիկայի բարձրավանդակը հարուստ է նալթով և արծաթով:

Հյուսիս Ամերիկայի ամենայերկար գետը Միսսիսիպին է: Իր քիչ նավարկելի Միսսուրի վտակի հետ միասին ունի 7200 կմ. յերկարություն և իր յերկարությամբ առաջինն է ամբողջ աշխարհում: Հնդկացիները նրան անվանում ենին «գետերի հայր»: Միսսիսիպիի վերին հոսանքում շատ սահանքներ կան: Գետն այսուղ ողտագործվում է ելեկտրական եներդիա ստանալու համար: Ահայո վտակի թափվելուց հետո, Միսսիսիպին հոսում է զանգաղ: Ահայոն նավարկելի յեւ ջրանցքների միջոցով նա միանում է երի լճերի հետ:

Գլխավոր նավարկելի ճանապարհը կաղմում է հինգ Մեծ լճերը, վորոնց ընդհանուր մակարդակը 245 հար. քառ. կմ. է: Լճերը տարրեր բարձրություն ունեն և մեկը մյուսից բաժանվում է եջքով. մանավանդ մեծ է երի և Ռիտարիո լճերի միջև գտնվող եջքը: Երի լճից սկսվող Նիագարա գետը կազմում է մի վեհապահծ ջրվեժ, վոր կոչվում է Նիագարայի ջրվեժ: Նա ողտագործվում է Հիդրոկայանների համար: Նրա շուրջը փորված է ջրանցք: Կուռուցված են նավարկելի ջրանցքներ նաև մնացած լճերի միջև: Լճերից սկսվող Լավրենտիոս գետի հունց խորացնելուց հետո դեպի զարձել է մատչելի նաև ծովային մեծ նավերի համար: Կառուցվել է խոր ջրանցք Երի լճից մինչև Հուդզոն գետը, վոր թափվում է Ատլանտյան ովկիանոսը՝ Նյու-Յորքի մոտ: Մեծ լճերը կարծես Ներքին ծովեր են զարձել: Նրանց նավահանդիսուներում կանգ են առնում ծովային շունափեր: Այդ ճանապարհի մեծ պակասությունն այն է, վոր Լավրենտիոս գետը և ջրանցքը 3—5 ամսով առչում են:

Հարավային Ամերիկա : Հար . Ամերիկայի Կորդիլյերները , կամ Անդերը հյուսիսամերիկյան Կորդիլյերներից բարձր են : Այս տեղ լեռնանցքները հասնում են մոտ 5 կմ . բարձրության : Գլխաւոր ագաթը (Ակոն-կաղուան) 7 կմ-ից բարձր է : Հասարակածի մոտ 16 լեռնագագաթ բարձրանում են ճյան սահմանից վեր . մի քանիսի վրա կան վոչ մեծ սառցաղաշտեր : Անդերը դժվարանց են : Առաջին յերկաթուղին մեծ դժվարությամբ անցավ միայն XX դարում , հյուսիսամերիկյան Կորդիլյերներով անցնող յերկաթուղուց 50 տարի հետո :

Անդերը բաժանվում են յերկու լեռնաշղթայի՝ արևելյան և արևմտյան : Նրանց մեջ ընկած են մի շարք վոչ բարձր բարձրագանդակներ , վորոնցից ամենաբարձրը Բոլիվիականն է : Նրանից զեպի հարավ արևելյան Անդերը վերջանում են , իսկ արևմտյան Անդերը ձգվում են ամբողջ արևմտյան տափի յերկարությամբ մինչև Ամերիկայի հարավային ծայրը : Նրանք ըստ յերկույթին տարածվում են նաև Անտարկտիդայում :


Հար . Ամերիկայի միջին մասը բռնված է հսկայական դաշտավայրով , վոր կաղմվել է Որինոքո , Ամազոն և Լա-Պլատա գետերի բերած կիտվածքներով : Այս գետերով նա բաժանվում է յերեք մասի՝ Որինոքոյի , Ամազոնի և Լա-Պլատայի դաշտավայրեր :

Դաշտավայրերից ամենամեծը՝ Ամազոնի դաշտավայրը , ծածկված է դժվարանցանելի խոնավ արևադարձային անտառներով : Որինոքոյի դաշտավայրում տարածվում են սալաններ , վորոնք այստեղ կոչվում են լյանոսներ , իսկ Լա-Պլատայի դաշտավայրում՝ տափաստաններ , վորոնք կոչվում են պամպաններ : Արեւելքը բռնված է Բրազիլիական հին բարձրավանդակով : Այս տեղ միայն արևելքում են պատահում լեռներ , վորոնք 2½ կմ -ից փոքր ինչ բարձր են : Հար . Ամերիկայի լեռներն ու բարձրավանդակները հարուստ են հանածոներով : Բրազիլիական բարձրավանդակները հարուստ են հանածոներով : Հարավիլիական բարձրավանդակները գտնվում են մեծ քանակությամբ յերկաթահանք , բայց դա դեռ չի շահագործվում : Այդ բարձրավանդակներում ինչպես վոր Աֆրիկայում , գտնվում են վոսկի և ալմաս :

Անդերը և նրանցով յեղերվող բարձրավանդակները հարուստ են պղնձով և արծաթով . հյուսիս-արևմուտքում գտնվում են շատ նավթ և պղատինի բավական հարուստ հանքատեղեր : Բոլիվիական

բարձրավանդակն անաղի արտադրանքով յերկրորդ տեղն ե բանում ամբողջ աշխարհում (Մալակայից հետո) : Խաղաղ օվկիանոսի ափին , անապատային գոտում (Ատակամա անապատում) գտնվում են բորակի համաշխարհային գլխավոր հանքատեղերը :

Հար . Ամերիկայի ատլանտյան թեքվածքի գետերը հսկայական են , մանավանդ Ամազոնը : Իր ավաղանի մեծությամբ Ամա-



Նկ. 78. Անդերը և նրանց կապակցությունը Հյուսունական ու Անտարկտիդայի լեռների հետ

գոնն առաջինն և ամբողջ աշխարհում . Նրա գլխավոր վտակները Յաղար կմ-ից յերկար են , իսկ ինքն Ամազոնն ունի 6 հազար կմ . յերկարություն : Շողենավերն Ամազոնով հասնում են մինչև Անդերը : Դեպի Սաղար ովկիանոս հոսում են կարճ , բայց կատաղ զատեր , վորոնք նավարկելի չեն :

Գ. ԿԼԻՄԱՆ, ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԸ

Ամերիկան հյուսիսից հարավ այնքան յերկար է ձգված, վոր բնդզերկում ե քաղոր կլիմայական գոտիները, բացի հարավային բևեռային գոտուց: Ընդմիջական լեռնաշղթաների բացակայության պատճառով աշխարհամասի արեւելյան մասում այդ դոնաներն աստիճանաբար փոխվում են մեկը մյուսի:

Հյուս. Ամերիկայի հիմնական մասը գտնվում է արեադարձից հյուսիս և ունի բարեխառն կլիմա, բացառությամբ ամենահյուսային մասի, վորն անցնում է ցուրտ կլիմայի դոնան: Կենտրոնական Ամերիկան և ամբողջ Հար. Ամերիկան, բացառությամբ հր. լայն. 40-րդ զուդահեռականից հարավ գտնվող նեղ մասի, գտնվում են տաք դոնայում:

Ընդմիջական լեռների բացակայության պատճառով Հյուս. Ամերիկայի հիմնական մասի բարեխառնությունը մեծ տատանումներ և տալիս: Հյուսիսից փչող ցուրտ քամիները և հարավից փչող տաք քամիները միանգամից փոխվում են: Ցրերի կրկնվելուց յերեմն փշանում են հացահատիկների ցանքները և պաղատածառերի ծաղիկները: Այդ նույն լայնության վրա տաք և չոր քամիներն այրում են հացահատիկները և խոտերը: Միսսիսիպիի դաշտավայրում բարեխառնության որվա տատանումները կազմում են 20°, իսկ մեծ բարձրավանդակում՝ մինչև 40°:

Հյուսիսային Ամերիկայի ափերի յերկարությամբ անցնում են Առլանտյան ովկիանոսի Գոլֆշտրոմ տաք հոսանքը և լարրադորական ցուրտ հոսանքը: Խաղաղ ովկիանոսում՝ Կուրո-Սիվո տաք հոսանքի Կալիֆորնիական հոսանքը: Քամիները դեպի Ամերիկա փչում են կալիֆորնիական և լարրադորական հոսանքների կողմից: Առաջինը բարձրացնում է Հյուսիս-արևմտյան ծովափի ցուդահեռականի միջին բարեխառնությունը 3°-ով: Իսկ մնացած Հյուսիսային Ամերիկան լարրադորական ցուրտ հոսանքի աղդեցությունը 5°-ով ցուրտից և բևեռային ցուրտ քամիների աղդեցությունը 5°-ով ցուրտ ե, քան թե պետք ե լիներ՝ համաձայն աշխարհադրական լայնության: Գոլֆշտրոմն, ինչպես գիտենք, տաքություն ե հարզորդում վոչ թե Ամերիկային, այլև Յեվրոպային:

Հար. Ամերիկան վողողվում է պերուական ցուրտ և բրազ-

իական տաք հոսանքներով: Մեկ և մյուս հոսանքի աղդեցության տարբերությունը յերեսում է 20° իզոթերմի ծովելուց (աեսքարտեղը):

Հյուսիսային Ամերիկայի արևելքի կլիման հիշեցնում է Յեվրոպայի կլիման, բայց վոչ թե Արևմտյան Յեվրոպայի, այլ Արևելյան: Այստեղ նույնպես ցամաքային կլիմա յե, բայց տարեկան ավելի մեծ տատանումներով և ավելի խիստ: Հյուս. Արջաններում տարածվում են տայգաներ և տունդրաներ. տայգայից հարավ ձգվում են խառն և սաղարթավոր անտառներ, վորոնք ավելի բազմազան բուսականություն ունեն, քան Յեվրոպան. վերջապես ավելի հարավ, Ֆլորիդա թերակղուր վրա աճում են միջերկրածովային բույսեր: Տափաստանների գոտին բավական դեպի հյուսիս և անցնում, բաժանելով անտառային գոտին յերկու մասի՝ արևմտյան և արևելյան:

100-րդ միջորեյականից գեպի արեմուտաք յերկիրը զգալի չափով բարձրանում է: Այդ միջորեյականով խոնավ արևելքը բաժանվում է չոր արևմուտքից: Նրանք գեպի արևմուտք տարեկան տեղումների քանակը 50 մմ-ից պակաս ե, տեղ-տեղ 20 մմ-ից ել պակաս ե լինում: Նկատի ունենալով այն հանգանքանը, վոր կլիման աստիճանաբար փոխվում է վոչ թե հյուսիսից դեպի հարավ, այլ արևելքից դեպի արևմուտք, հողային բուսական դոնաները (գոտիները) ձգվում են վոչ թե ընդմիջական, այլ յերկայական ուղղությամբ:

Հյուսիսամերիկայն Մեծ բարձրավանդակի չորության պատճառով յերկրագործությունն արհեստական վոռողման կարիք ունի: Այդ բարձրավանդակի վրա կառուցվել են հսկայական պատվարներ, վորոնց չնորհիկ վոռողման համար գոյանում են մեծ ջրամբարներ: Վոռողման համար խոշոր կառուցվածքներ ըլնվել են նաև Մեքսիկայի բարձրավանդակի վրա:

Կենտրոնական և Հար. Ամերիկայի արևադարձային գոտում կլիման փոխվում է վոչ թե լայնության, այլ բարձրության համեմատ: Մեքսիկայի բարձրավանդակի, Պանամայի պարանոցի, Անդերի ստորոտների ցածրադիր ծովափերը և Ամազոնի դաշտավայրն ունեն տաք և խոնավ կլիմա: Մբանք տոք յերկրներ են և հասնում են մինչև 1 կմ բարձրության՝ ծովի մակերեսութիւց: Սա վատառողջ շրջան է: Ողտակար բույսերից այստեղ մշակում՝

են կակոսյան արմավենիներ, կակառ : 1 կմ-ից բարձր գտնվում են միջն գոտին կամ տաք յերկրները, վորոնք մերձարևադարձային լլիմա ունեն : Յերեկներն այստեղ շատ չոգ են լինում, իսկ գիշերները՝ զով : Սա սուրճի և բանանի պլանտացիաների, ցորենի և յեղիպտացորենի պլանտացիաների շրջանն է : Մինչև 3 կմ բարձրության գտնվում են ցուրտ յերկրները : Բացի հացահատիկներից տաստեղ մշակում են նաև կաքտոֆիլ : Յեղիպտացորենի և կարտոֆիլի հայրենիքը Ամերիկան է :

Հար . Ամերիկայի այն մասը, վոր արևադարձներից դուրս են գտնվում, իր խոնավությամբ բաժանվում են մի քանի յերկայինական բուսական-կլիմայական շրջանների : Լա-Պլատայի շրջանում տարածվում են տափաստաններ կամ պամպասներ, հետո գալիս են միջին չոր տափաստանները, ապա լեռնային շրջանը :

Ամերիկայի վայրի բուսականությունն ավելի հարուստ են, քան յելքոպականը : Կենդանական աշխարհն, ընդհակառակն, ավելի աղքատ են : Մինչև յելքոպացիների գալը Հյուսիսային Ամերիկան հարուստ եր միայն մուշտակալոր գաղաններով, ինչպես Յեղրասիան, և բիզոններով : Մինչև Կոլումբոսը՝ Ամերիկան ընտանի կենդանիներ չուներ : Հարավ . Ամերիկայում քնտելացրել եյին ուղղին ցեղակից լամաներին, վորոնք տալիս եյին միս, բուրդ և փոխադրում եյին ծանրություններ : Տափաստանում գտնվում են մեծ քանակությամբ զանազան կրծողներ : Անտառներում պահպանվել են մրջնակերը, համրուկը, զրահամորթը, վորոնք ուրիշ տեղերում անհետացել են : Գիշատիչներն այստեղ ավելի մանր են, քան Յեղրասիայում և Աֆրիկայում . դրանցից Հար . Ամերիկայում հայտնի յեն պուման և յագուարը : Գետերում շատ կան կոկորդիլոսներ և կրիաներ : Ներկայումս Հյուսիսային և Հարավային Ամերիկան անասնաբուծական յերկրներ են, վորոնք ունեն խոշոր և մանր յեղջուրավոր անասունների հոտեր և խողեր :

Ե. ՅԵՂԱԳՐԱԿԱՆ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ. ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՏԵՍԱԽԹՅՈՒՆԸ

Ամերիկայի բնիկները հնդկացիներն են : Սրանք յեկել են Աստիայից և, գուցե, Խաղաղ ովկիանոսի կղղիներից : Բնակչության ավելի նոր խավը կաղմում են հեռավոր Հյուսիսի եսկիմոսները :

XVI դարից սկսվում են սպիտակ ցեղի ներդադթը, վորից փոխվում են Ամերիկայի բնակչության կաղմը : Ակրնական շրջանում յեղրոպացիները բնակություն են հաստատում գլխավորապես Հյուսիսային Ամերիկայում, վորի կլիման նպաստավոր եր նրանց համար : Դրանց հիմնական կորիզը կազմում եյին անդրսաքսորդ, այսինքն, անգլիացիները և չուտանդաշիները : Կան նաև իրանդացիներ, Փրանսիացիներ, իտալացիներ, գերմանացիներ, սկանդնավագիներ, սլավոններ, բայց տիրապետող լեզուն անգլիականն է :

Կենտրոնական և Հար . Ամերիկան, վոր բնակված են ոոմանական կամ լատինական ցեղերով, կոչվում են Ռոմանական կամ Լատինական Ամերիկա :

Կոլոնիստները համարյա բոլորովին վոչնչացրին Հյուս . Ամերիկայի հնդկացիներին : Մասամբ սովամահության հասցին, խելով նրանց հողերը, մասամբ ուղղակի գաղանաբար կատորեցին : Լատինական Ամերիկայում, մանավանդ նրա տոթ մասերում, հնդկական բնակչությունը պատահում ե թե մաքուր, զարգուն վիճակում և թե խառն սպիտակների հետ, վորպես մետիոններ : Մինչև որս ել նրանք շատ տեղերում կազմում են բնակչության մեծամասնությունը :

XVII գարի կեսից խոշոր կալվածների սոլիտակ սեփականատերերը Վեստ-Ինդիայի, Հարավ . Ամերիկայի և Հյուս . Ամերիկայի պլանտացիաներում աշխատեցնելու համար սկսեցին Աֆրիկայից բերել ստրուկ նեղբերին : Նրանց բերում եյին հարյուր հաղարներով . բերածները կոտորվում եյին, փոխարենը նորերն եյին բերում : Միայն XIX դարի յերկրորդ կեսում ստրկագաճառությունն արգելվեց և նեղբերին աղասառություն տրվեց . բայց նեղբերն այսոր ել կիսաստրուկ վիճակում են գտնվում : Էլիշի դատաստանը, այսինքն գաղանաբարոր գատաստա՞ր և կեղծ ժեղագրանքներով նեղբերին մտհապատիծ տապ—սովորական յերեւյթներ են անգլոսաքսոնական Ամերիկայում : Զինացիներին և յապոնացիներին այժմ Ամերիկա ներս չեն թողնում, բայց նրանցից փոքր քանակությամբ այնտեղ կան : Յերկու Ամերիկաների բնակչության թիվը 240 միլիոն է : Նրանցից 2/3-ը սպիտակներ են . 1/6-ից փոքր ինչ ավելի նեղբեր, 1/6-ից քիչ պակաս հնդկացիներ ու մետիոններ : Յաղոնացիներն ու չինացիները մի քանի տասնյակ հաղար են, իսկ եսկիմոսները, միքանի հաղար :

Ամերիկայի բնակչության միջին խտությունն է 1 քառ. կմ-ի վրա 6 մարդ : 100 մարդուց ավելի խտություն ունեցող շրջանը գտնվում է միայն Հյուսիսային Ամերիկայում, Մերձատլանտյան ծովափին 45° և 40° հս. լայնությունների միջև : Այստեղից դեպի հարավ, ովկիանոսի յեղերքով և լայն շերտով, Մեծ լճերից հարավ տարածվում են այնպիսի վայրեր, վորտեղ բնակչության խտությունը 1 քառ. կմ-ի վրա 25 մարդուց ավել է : Մինչև 100-րդ միջորեյականն արևմուտքում և 50-րդ զուգահեռականը հյուսիսում բնակչության խտությունը 10 մարդուց ավել է : Ամբողջ տայգան, տունդրան և տոթակեղ շրջանն ունեն աննշան խտություն՝ 1 քառ. կմ-ի վրա մեկ մարդուց պակաս : Հարավային Ամերիկայում աշխարհամասի ավելի քան կեսի, այն ե՛ Որինոքոյի և Ամազոնի դաշտավայրերի և յերաշտային հարավի խտությունը 1 քառ. կմ-ի վրա 1 մարդուց պակաս է : Ամենախիտ բնակչությունն ունի ծովամերձ շերտն, Ամազոնի դետաբերանից մինչև Լա-Պլատան :

Հյուսիսային Ամերիկայի հիմնական մասը համարյա կիսվում է կանադայի և Հյուսիսամերիկայն Միացյալ Նահանգների միջև (համառոտակի՝ ՀԱՄՆ) : ՀԱՄՆ-ը «կապիտալիզմի գլխավոր յերկիրն է, նրա միջնաբերդը» (Ստալին) : Կապիտալիզմի արագ աճը, հետո նրա փոելը և կրեղիսն այստեղ ալիքի սուր է :

ՀԱՄՆ-ը գերիշխող դիրք են բռնել Ամերիկայում և կենարունական ու Հարավային Ամերիկայի հանրապետությունները դարձրել կախյալ յերկրներ :

Կանադան Անգլիայի ինքնավար գաղութը կամ դոմինիոնն է : Նրանից դեպի արևելք Նյուֆառնորդենդ կղզու վրա գտնվում է համանուն փոքրիկ դոմինիոնը : Կանադայի առևտուրը, մասսամբ ել արդյունաբերությունը մեծ մասով ՀԱՄՆ-ի կապիտալիստների ձեռքն է անցել : Հյուսիսային Ամերիկայի հարավային մասում իր մեծությամբ մեկ միջակ պետություն կա . դա Մեքսիկա հանրապետությունն է . վեց մանր հանրապետություն ել դտնվում է պարանոցի վրա : Վեստինգհական կղզիների վրա գտնվում է յերեք հանրապետություն¹⁾ : Այս բոլոր հանրապետություններում տերու տնօրենը Միաց . Նահանգներն են : Մեքսիկան կապիտալիստների համար կարեւոր է իր նավթով . Պատմամակ միջամատականությունը շեր-

տով, վոր պատկանում է ՀԱՄՆ-ին : Մնացած հանրապետությունները՝ շաքարեղեգնով, սուրճով, բանանով և ծխախոսով :

Հարավային Ամերիկայում վորոշ ինքնուրույնություն պահպանել են՝ Բրազիլիան, վոր բռնում է Հար . Ամերիկայի կեսը, Արգենտինան և Ուրուգվայը, ինչպես և Չիլին : Այս հանրապետություններում ազգեցության համար պայքարում են անդլիական և ամերիկական կապիտալները :

Բրազիլիան աշխարհի սուրճի գլխավոր յերկիրն է : Արգենտինան Ուրուգվայի հետ համաշխարհային շուկային յեղիպտացրեն, ցորեն, միս և բուրդ մատակարարողն է, Չիլին՝ բորակ : Հար . Ամերիկայի²⁾ մնացած հանրապետություններն ամբողջապես ՀԱՄՆ-ի իշխանության տակ են գտնվում : Նրանք Միաց . Նահանգներից գնում են գործարանային բանվածքներ և փոխարենը տալիս են նավթ, պղինձ, անաղ, բանան, կակաո, սուրճ, շաքարեղեգն :

XI ԱՎԱՏՐԱԼԻԱ ՅԵՎ ՈՎԿԻԱՆԻԱ

Ավատրալիան ամենափոքր աշխարհամասն է : Նրա տարածությունը հավասար է 7 մելիոն քառ. կմ-ի : Նա 6 անգամ փոքր է Ասիայից և $1\frac{1}{2}$ անգամ Յեվրոպայից : Ավատրալիայի ափերը վողողում են Խաղաղ և Հնդկան օվկիանոսները : Նա միակ աշխարհամասն է, վոր ամբողջապես գտնվում է հարավային կենարունական միջամատում : Վաղ կորցնելով իր կապն Ասիայի հետ, նա մնաց մեկուսացած և յերկար ժամանակ պահպանում եր իր նախնական կենարունական և բռւսական աշխարհը :

1. Ա.ՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կղզիներ : Ավատրալիան ունի քիչ կտրտված յեղերային գիծ : Մոցեր ու թերակղզիներ շատ քիչ կան : Հյուսիսում դժուվում . Եռոք թերակղզին :

Այն կղզիները, վորոնք գտնվում են Ավատրալիայից գեպի արևելք, Խաղաղ օվկիանոսում, կոչվում են Ովկիանիա : Ովկիանիայի ամենախոշոր կղզիներն են Նոր Գվինեան, Նոր Զելանդիան, Նոր Կալիդոնիան : Նրանք նախկին ցամաքի մնացորդներ են : Ավելի մանր կղզիների թվին պատկանում են Պոլինեզիայի կղզիներ :

¹⁾ Կորա և յերկու հանրապետություն Հայքի կղզու վրա . նեղիտական շայիթի և մուլտական դոմինո :

²⁾ Կոլումբիա, Վենեսուելա, Պերու, Բոլիվիա և Պարագվայ :

Նրանցից մի քանիսը կրթալային ծագում ունեն, որինակ՝ Կարուլինյան, Մարշալյան կղզիները, մյուսները՝ հրաբխային, որինակ՝ Հավայի, Ընկերության և այլն:

Ավտորալիայի հյուսիս-արևելյան տիեզերությամբ ձգվում է այսպես կոչված «Մեծ բարիերային խոռվաշարքը», վոր կորրալային ծագում ունի:

2. ԳՅՈՒԽԻ ՅԵՎ ԳՐԱՎՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ավտորալիան գտան հոլլանդացիները 1605 թ., այսինքն նա Ամերիկայից հետո գտնվեց : Հոլլանդացիները նրան նոր Հոլլանդիա անվանեցին : Ավտորալիայի ափերի և Ովկիանիայի կղզիների հետազոտությունը կատարեց գլխավորագետ անդիւցի նշանակող ծովագնաց :

1788 թվականից Ավտորալիան դարձավ Անդլիայի համար հանցադորձների աքսորալիայր : Այսպես յերեացին առաջին ապետակ գտղթականները (կոլոնիաները) : XIX դարի կեսին անդլիացիները գրավեցին ամրող Ավտորալիան : Ակորում նրանք բնակություն եյին հաստատում միայն ծովափերին, վորովհետեւ անապատով դժվար եր անցնել զեղին ներս : Ավտորալիայի ներքին մասի հետազոտությունը կատարվեց շատ համարձակ ճանապարհորդությունների կյանքի դնուի : 1862 թ. անդիւցի ճանապարհորդությունների համար մասնակի գործառնությունը առաջին անգամ կարեց Ավտորալիան հարավից դեպի հյուսիս : 1922 թ. անդիւցի ներայուր ավտոմոբիլով կորեց Ավտորալիան, անցնելով Ազելախտ քաղաքքց (Հարավում) մինչև Փարմինի նախահանդիսուր (հյուսիսում) :

3. ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳԵՏԵՐԸ

Ավտորալիայի մակերեւությը շատ միապաշադ է : Դա մի հարթություն է, վորի յեղերքները բարձրացած են : Ամենախոչըն շղթաները գտնվում են Ավտորալիայի արևելյան մասում : Իր կազմությունը Ավտորալիան շատ բանով նման է Հարավային Աֆրիկային, Հնդկաստանին և Անտարկտիդային, դորոնց հետ բարեկառութիւն հեռաց մեջին հեռավոր անցյալում կապ ե ունեցիլ : Արևելյան բարձրագիր մասում գտնվում են Ավտորալիական Ալպերը (2800 մետրից բարձր) : Ավտորալիական Ալպերի գագաթները ձյունի սահմանից ցածր են գտնվում : Դեղի արեւմուտք լեռներն իջնում

են շատ թեք լանջերով և յերկիրն աստիճանաբար փոխվում ե դաշտավայրի : Ամենացածր մասերը գտնվում են գաշտավայրի արևմտյան յեղերքի մոտ (Ելլ լիճը 12 մետրով ցածր ե ծովի մակերեւույթից) :

Ավտորալիայում գետեր քիչ կան և յեղածներն ել սակավածուր են : Ամառը նրանք հաճախ ցամաքում են և վերածվում լճերի . իսկ անձրևների ժամանակ, ընդհակառակը, նրանք յերբեմն տասնյակ կիլոմետր տարածությամբ փակվում են : Այսպիսի դիտերն ստացել են կրիկ անունը՝ կուպեր-կրիկը : Ավտորալիայի ամենամեծ գետը Մուրբեյն ե՝ Դարլինգ վտակով : Մուրեյլ նավարկելի յի ամբողջ տարին, իսկ Դարլինդը միայն անձրևների ժամանակ :

4. ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ԿԼԻՄԱՆ

Ավտորալիան դժոնվում ե հարավային կիսագնդում, այդ որածառով այնտեղ տարվա յեղանակները մերի հակառակն են : Ամենատաք ամիսը հունվարն ե, իսկ ամենացուրտը՝ հունվարը : Ավտորալիայի հյուսիսային մասն ընկած ե տաք գոտում : Բարեխառնությունը բարձր ե և համահավասար . ամենատաք և ամենացուրտ ամիսների բարեխառնությունների տարբերությունը 2—4°-է չի անցնում : Անձրևները շատ են դալիս, մոտ 2 մետր տարեկան : Անձրևները բերում են ամառային հյուսիսային մուսսոնները :

Ավտորալիայի հարավային մասում կլիման մերձարևադարձային է : Տարվա միջին ջարեսառնությունը 20°-ից մինչև 14° ե, Ամառվա և ձմեռվա տարբերությունն արդեն բավական մեծ ե, մանավանդ աշխարհամասի ներքին մասում : Ամառը բարեխառնությունը հասնում է մինչև + 50°, իսկ ձմեռը՝ մինչև — 5° : Մինուրտային տեղումները թափվում են գլխավորապես արեւելյան մասում, վորի խոնավությունը բերում են ծովից վչող հարավարեւելյան պասատաները : Դեղի արևմուտքը մինուրտային տեղումները քչանում են, վորովհետեւ նաղաղ ովկիանոսից բերվող խոնավությունը մնում է լեռներում :

5. ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԵՆԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԾ

Ավտորալիայի հյուսիսային մասը ծածկված ե մշտադարձունակ արևելագրածային անտառներով և սականներով : Հարավ-

արեւելյան Ավտորալիայում աճում են մշտաբավար անտառներ, վորոնք բաղկացած են զլխավորապես եվկալիպտներից։ Այս ծառները լավ հարմարվել են չոր և տոթակեղ կլիմային։ Նրանց արմատները բափական յերկար են, այդ պատճառով կարող են խոնավություն ծծել յերկրի խոր շերտերից։ տերեները կախված են ուղղաձիգ, վորի շնորհիվ արեւի ճառագայթները սահում են նրանց վրայով։ Եվկալիպտի անտառներում առատ լույս կա։ Այդ անտառներում ծառերը շատ նոսր են աճում։ Բացի եվկալիպտից այստեղ աճում են նաև կաղուարինա, ակացիա, չածառ՝ տակառածե ուռած բնով։

Ցամաքի ներքին տոթ մասը ծածկված է ցածրահասակ եվկալիպտների և ակացիաների մացառուաներով, վորոնք այստեղ կոչում են «սկրուբ»։ Նրանց միջով անցնելը բավական դժվար է։ Արևմտյան Ավտորալիան բռնված է անտառությունով։ Ներքին Ավտորալիայի ընդարձակ տարածությունները ծածկված են չոր տափաստաններով։ Այստեղ են վոչխարաբուծության գլխավոր շրջանները։ Յերկրագործներն ստիպված են արհեստական վոռոգման ողնության դիմել։

Ավտորալիան սեփական կուլտուրական բույսեր չունի։ Ինչ հացահատիկները և թե պտղատու ծառերը բերված են Յունիությունությունում։

Ավտորալիայի կենդանական աշխարհն ավելի շատ և տարբերում ուրիշ աշխարհամասերի կենցանական աշխարհոց, քանի թե րուսականը։ Մինչև յերկրագիների գալր Ավտորալիայությունը գերիշտում ելին պարեավոր կենդանիները։ Նրանք վորի կողմնանեն առանձին պարկ, վորի մեջ կրում են դեռևս չզարգացած ձագերին։ Դրանց թին են պատկանում կենդուրուն, պարկավոր դարյուր, պարկավոր սկյուռը և ուրիշները։ Այստեղ կան և այնպիսի կաթնասուններ, վորոնք ծու յեն դնում և վորոնք ուրիշ աշխարհակառություններ, վորոնք ծու յեն դնում և վորոնք ուրիշ աշխարհակառություններ։ Ըստանի կենդանիներից մինչեւ յերկրագիների դալը միայն դիմուշունն եր գտնվում։ Թուչուններից Ավտորալիայում պատահում են թութակներ, սավաններում՝ եմու և «սկրուբում» քնարահավ։ Յերկրություններն իրենց հետ Ավտորալիա բերին մեծ քնարահավ։ Յերկրությունների կենդանիներ՝ ճաղարներ, վոչխարներ, խոշոր յեղջուրավոր անասուններ և ձիեր։

6. ՅԵՂԱԳՐԱԿԱՆ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՔԱՐՑԵԶՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավտորալիայում ապրում ե մոտ 6 միլիոն բնակչություն։ Հետեամբես բնակչության խոռոչունը 1 քառ. կմ.ի վրա մեկ մարզուց պակաս է։ Բնակչությունը շատ անհավասարաշահու և տեղաբաշխված։ Հարավ-արևելքում, խոշոր քաղաքների մոտ, խոռոչյունը 1 քառ. կմ.-ի վրա կազմում է 50 մարզուց ավել, տափաստաններում մոտ 1 մարդ, իսկ անտապատների և մաշտառուաների ընդարձակ տարածությունները բոլորովին անմարդաբնակ են։

Ավտորալիայի բնակչությունը բաղկացած է զլխավորապես յելուպացի կոլոնիաներից։ Նրանց մեծ մասը կազմում են անդամակիցները, իուլանդացիները և շոտլանդացիները (Ավտորալիայի լեացիները)։ Կան նաև չինացիներ, յապոնացիները ընակչության մոտ 96%-ը)։ Կան նաև չինացիներ, յապոնացիները և ուրիշ ազգություններ։ Բնիկ բնակչությունը կազմված է սեռ-մորթ ավտորալիացիներից, վորոնց թիվը ներկայումս հազիվ 50—60 հազար է։ Յերկրությունների մուտքն Ավտորալիա կորսառաբեր յեղալ ավտորալիացիների համար։ Յերկրություններն իրենց համար հավատիսիկ հիմքություններ (ծաղիկ և ուշետ բերին ողի, տարախոխիկ հիմքություններ)։ Նրանք ավտորալիացիներից խլում ենին թիշ հիվանդություններ)։ Նրանք ավտորալիացիներից խլում ենին թիշ հիվանդություններ)։ Նրանց հողը և բարբարոսաբար վոչխարինում նրանց հատուկ վարժեցրած չների միջոցով վարսալով կամ մինդեղով թունավորելով։

Ավտորալիան վեց առանձին նահանգների (շտատների) մեջուն եւ այդ շտատներն են՝ Նոր Հարավային Ռւելս, Վիկտորիա, Ջունինենգ, Հարավային Ավտորալիա, Արևմտյան Ավտորալիա և Ֆինանսներ։

Տասմանիա։ Միւր թյան մայրաքաղաքը կաներբարան է։

Ավտորալիական Միությունն Անդիայի ինքնավար գաղեւնաբերից, կամ դոմինիոններից մեկն է։ Նա ունի առանձին պարտաքննություն, պատասխանատու նախարարություն, սեփական նախառորմ, զորք և ֆինանսներ։ Անդիային վերապահված է իրավունք նշանակելու իր գեներալ-նահանգապետը։

XII. ԱՆՏՐԱԿԱՏԻ ԴՊ

1. ԱՇԽԱՐՀԱՄԱՆԻ ԳՅՈՒՏԸ ՅԵՎ ՀԵՏՍԶՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մինչեւ կուկի ճանապարհորդությունը (1772 թ.) հին քար-անդների վրա արտահայտվում եր հսկայական հարավային աշ-

խարհամաս, վոր բնելուց տարածվում եր մինչև հր. լայն. 50-րդ դուրս հեռականը: Կուկը վոչչացքից այդ սասապելը: Նա յերեք անդամ՝ կարեց բնելույին շրջանը, հասավ մինչև հր. լայն. 71°, բայց շամաք չգտավ: Առաջին ստույգ տեղեկությունները տվին Ռոսսի եկապեղիցիաները (գիտական արշավախմբերը՝ 1840—1842 թ.թ.): Նա մատավ այն ծովը, վոր այժմ կոչվում ե Թոսոսոյի ծով, և գրավ բարձր լեռնու յեզերք, վորին նա տվեց Հար. Վիկտորիա յերկիր անունը: 77° 30' լայնության վրա Իսոսը գտավ յերկու հրաբուխ, վորոնց նա տվեց իր նավերի անունները (Երերուս, Տերըոր): Ավելի հարավ անցնել նա չկարողացավ սառուցի բարձերի պատճառով:

Աշխարհամասի և նրա սառուցի բարիերի վրա առաջին անգամ ձմեռն անցկացրին XIX դարի վերջը և XX դարի սկզբին:

1911 և 1912 թ.թ. Ամունդսենի և Սկոտափի եկապեղիցիաները հասն հարավային բնեռը. անցնելով շամաքի ներքին սառուցի վրայով, Ամունդսենը 1911 թ. գեկտեմբերի 14-ին բնեռ հասավ և բարեհաջող կերպավ վերադարձավ: Սկոտափի եկապեղիցիան գուրս յեկավ համարյա միաժամանակ Ամունդսենի հետ, բայց բնեռ հասավ մեկ ամսով ուշ (17 հունվարի 1912 թ.): Վերադարձին սաստիկ վոթորիկներից նրա եկապեղիցիան փչացավ, կայսեր 18 կմ. հեռավորության վրա:

Ներկայումս լավ հայտնի յե միայն Հարավային Վիկտորիա յերկիրը: Սառուցի բարիերը, վոր ձգվում ե Վիկտորի յերկիրի յերկարությամբ, հնարավորություն և տվել միայն մի քանի տեղ մոտենալ յեզերքին: Աշխարհամասի մակարդակի մեծությունը մուտքագրապես ե վորոշված—12 մլն. քառ. կմ—ից մինչև 14 մլն. քառ. կմ: Հարավային Վիկտորիա յերկիրի հյուսիսային մասերում գտնվել ե հարավային մագնիսական բնեռը, այսինքն այն կետը, ուեպի վորը դառնում ե կողմնացուցի սլաքի հարավային ծայրը:

2. Ա.ՓԵՐԻ ԳԾԱ.ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ


Անտարկտիդան ուրուցիկ դանդամ ե, վորը յերկու լայն և խոր կարգած քով բաժանվում ե յերկու մասի: Այդ կարգածքներից մեկը թրսսի ծովն ե Մեծ ովկիանոսի հարավում, մյուսը՝ կեղդեկի ծովն ե Ատլանտյան ովկիանոսի հարավում: Այդ յերկու կտրվածք ներն իրար հանդեպ են դուրս գալիս: Դեռևս հայտնի չե այդ

կտրվածքները բաժանում են արդյոք Անտարկտիդան յերկու առանձին մասերի՝ արևելյան մեծ և արևմտյան փոքր, թէ այդ յերկու մասերը միացած են պարանոցով: Արևելյան Անտարկտիդան դեպի հյուսիս տվելի յէ ձգվում, քան թէ Արևմտյանը: Նրա հյուսիսային ափն անցնում ե հարավային բնեռային շրջանի մոտով: Ամենից լավ հայտնի յէ այն հատվածը, վոր գտնվում ե աղեկը. յերկ. 160°-ի և արևմտ. յերկ. 170°-ի միջև: Գտնված են լեռնաշղթաները, վորոնք ձգվում են Հար. Վիկտորիա յերեքի յերկարությամբ, հավանաբար մինչև բնեռը (2000 կմ. յերկարությամբ): Գլխավոր լեռնաշղթայի միջին բարձրությունը 3 կմ է, առանձին գագաթները հասնում են 4 կմ—ի և ավելի: Բնեռը գտրնվում ե 3 կմ բարձրության վրա: Գլխավոր լեռնաշղթայի առաջ ձգվում են նախալեռները մոտ 1½ կմ բարձրությամբ: Յերկու տեղ՝ նրանք բացակայում են, այսուեղ դանվում են հրաբխային շնչաները: Դրանցոց գլխավորը գտնվում ե թոսսի արշխալեւագի հարավային խմբում, վորանդ Երերուս (4 կմ—ից բարձր) և Տերւոր (3¼ կմ) հրաբուիներ են: Թոսսն ականատես յեղակ Երերուսի ժայթքմանը: Այժմ նրա վրա բարձրանում ե ծխի սյուն, վորը յերեմն կարմիր գունավորում ե ունենում (լավայի անգրագույնը):

Արևմտյան Անտարկտիդայի մասին հայտնի յէ միայն այն, վոր նրա ափը վերջանում ե 70°-ից հարավ: Մինչև 1929 թ. յենթագրում ելին, թէ նրա հյուսիսային ցցլածքը կազմում ե Գրամմի յերկիրը, վոր հասնում ե մինչև 60-ը գուղահեռականը: Հայց այժմ պարզված ե, վոր այդ յերկիրը կողմիների արշխիւադ ե, բաժանված նեղուցներով: Գտել են, վոր Արևմտյան Անտարկտիդա բաժանված հարավային յեղերքով (Բոսսի ծովի յերկարությամբ) անցնում են շղթաներ, վորոնք ուղղվում են գեպի հարավային բնեռը (Անտարկտիանդեր—ամերիկական Անդերի շարունակություն):

3. ՎԼԻՄԱՆ: ԿԵՆԳԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Անտարկտիդայի կլիմայի բնորոշ առանձնահատկությունն այն է, վոր «ամառը» բարեխառնությունը լինում ե շատ ցածր, միջին սառուցի բարձրավանդակի վրա—28°: Անընդհատ ցրտությամբ ե բացատրվում սառուցի բացառիկ հաստ ծածկոցը: Համարյամբ ե բացատրվում սառուցի բացառիկ հաստ ծածկոցը: Համարած սառուցի պատճառ ե վոլ միայն ցածրաքը, այլև ցամաց քամերձ ծովը: Խակական յեզերքին շատ տեղ միանում ե սառուցի



Նկ. 79. Անտառի կտիլուա

կեղծ յեղերքը, այսպէս կոչված, սառույցի բարիերը: Թուսսի ծովում նա ձգվում է համարյա 1000 կմ, ծածկելով ½ մլն քառ. կմ տարածություն: Մոլի կողմից նա բարձր պատի տեսք ունի (20—50 մետր բարձրությամբ), նրանից հետո գալիք ե ճյունի անընդհատ հարթություն: Մակընթացության և տեղատվության ժամանակ այդ բարիերը որորվում է: Այստեղից յնզբակացնում ենք, վորդա լողացող բարիեր է:

Ցամաքի ներսը սառույցը չի հաջում: Այսուեղ չկան բոյսեր ու կենդանիներ: Մովափին տեղ-տեղ սառույցը հալչում է, յերկում են մանր հողամասեր, վորտեղ աճում են մամուռներ ու քուեր: Ամառը ծովում գտնվում են բազմաթիվ մանր կենդանիներ: Սննդի առատությունն ամառները գրավում ե ձկներին, խեցնմորթներին, կակդամորթներին, սրանց հետեւում են թուշուները, մանավանդ վորոնները պինդպիններին, ինչպես և կաթնառուները (փոկերը, կետերը):

Կետորսությունն անսովոր զարգացման հասավ XX դարում և սուցավ թալանի բնույթ: Միջին հաշվով տարեկան 20.000 կետ և սպանվում: Կետի մասնատումը, ճարալի հալումը կատարվում ե բաց ծովում, լողացող սառույցի վրա:

Կետորսության, ձկնորսության ողուտները դրդեցին Անդրկայի խմակերիալիստներին գրավել Անտառկտիգայի ծովերը սրանց կեց յերկրներով (թուսսի և Ֆալկլանդի հատվածները): Բայց այդ, նկատի ունենալով, վոր մեծ մասամբ անվելացիներն են դաել այս ու այն յերկերիը, նրանք պահանջում են Արենլյան Անտառկտիգայի ափերի միացումը: Բայց այդ յերկրներով շահագրգուլած են նաև ամերիկացիները (հենվելով ամերիկացի վելւի գյուտի վրա ալելի քան 100 տարի առաջ):

Իմպերիալիստներն Անտառկտիգան պրավում են գլխավորակեա կետորսության համար: Բայց նրանք հույս ունեն, վոր ապագայում նրա վրայով կարող են անցնել միջազգային ողային շահապարհներ, և կարող ե գտնվել քարածխի հորուստ պաշտու:

Ներածություն

3

I. ՅԵՐԿԻՐԸ ՄՈԼՈՌԱԿՆ

1. ՅԵՐԿԻՐԻ ԿԵՐՆԹԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍԼԱՋՈՒՅՑՆԵՐ	5
2. ՅԵՐԿԻՐԻ պատովելն իր առանցքի շուրջը	7
3. ՅԵՐԿՐԱՊՆԴԻ ՄԱՐԵԼԿԱՆ ՀԱՐԺՈՎՄՆԵՐ	9
4. ՅԵՐԿԻՐԻ ԴԻՔՔԸ ՄԻԵՆԳԵՐԱԼԿԱՆ ՄԱՐԱԺՈՒԹՅԱՆ մԵջ	14

II ՀԱՏԱԿԱԳԻԾ ՅԵՎ ՔԱՐՏԵԶ

1. Կողմնացույց	18
2. Մասշտաբ	21
3. Տեղադրական քարտեզներ և պլաններ	23
4. Բնդորինակումներ աչքաշափով	26
5. Քարտեզի աստիճանացանցը	29

III ԼԻԹՈՍՖԵՐԱ

1. ՅԵՐԿՐԱՊՆԴԻ ԿԱՂՄՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ պատկերը	36
2. Յամաքի և ջրի բռնած մարածությունը յԵՐԿՐԱՊՆԴԻ վրա	37
3. ՅԵՐԿԻՐԻ կեղեկի կաղմությունը	38
4. ՅԵՐԿՐԱՊՆԴԻ ներքին ուժերը	41
5. ՅԵՐԿԻՐԻ արտաքին ուժերը	49
6. ՅԵՐԿԻՐԻ մակերևույթի զանազան ձևերը	62

IV. ՀԻԴՐՈՍՖԵՐԱ

1. Սառերկրյա ջրեր	78
1. Հոսող ջրեր	82
3. Լճեր	90
4. Ռվականուններ և ծովեր	92

1. Բջջի կաղմությունը և բարձրությունը	102
2. Մթնոլորտի տաքանակը	103
3. Բղի ճնշումը և քամիները	111
4. Մթնոլորտային տեղումներ	129
5. Կլիմա	126

VI. ՀՈԴԱ-ԲՈՒՍԱԿԱՆ ԳՈՏԽՆԵՐ

1. Կլիմայի, հողերի, բուսականության և կենդանական աշխարհի տեղաբաշխումը յԵՐԿՐԱՊՆԴԻ վրա	132
2. Ցուրտ գոտի	134
3. Բարեխառն գոտի	136
4. Անապատային գոտի	141
5. Տաք գոտի	142
6. Մարդու առաջացրած վորիոխությունները բուսական գոտիների բնության վրա	143
7. Խորհրդային Միության նվաճումները բնական պայմանների ոգտագործման ասպարիդում	145

VII ՅԵՎՐՈՊԱ

1. Դիրքը և սահմանները	147
2. Մակերեսույթի կաղմությունը	151
3. Կլիման	155
4. Գետերն ու լճերը	156
5. Հողագործական գոտիներ	158
6. Յեղագրական, բնակչության խտության և պետական բարեկանության քարտեզների համառոտ տեսություն	158

VIII. Ա.ԱՒԱ

1. Դիրքը և սահմանները	163
2. Մակերեսույթի կաղմությունը	165
3. Կլիման	168
4. Գետերը	170
5. Բուսական և կենդանական աշխարհը	171
6. Յեղագրական, բնակչության խտության և պետական բաժանման քարտեզների համառոտ տեսություն	174

IX ԱՅՐԻԿԱ

1. Դիրքը և սահմանները	176
2. Աֆրիկայի հետազոտումը	177
3. Մակերեսույթի կազմությունը	178
4. Գետերը	179
5. Կլիման, բուսականությունը և կենդանական աշխարհը	182
6. Բնակչությունը	183

X ԱՄԵՐԻԿԱ

1. Ամերիկայի գյուտը և նրա դրավումը Յելլոոպայի կողմէց	184
2. Դիրքը և սահմանները	185
3. Մակերեսույթի կազմությունը և գետերը	187
4. Կլիման, բուսականությունը և կենդանական աշխարհը	192
5. Ցեղադրական, բնակչության խտության և պետական բաժանման քարտեղների տեսությունը	195

XI ԱՎՍՏՐԱԼԻԱ. ՅԵՎ. ՈՎԿԻԱՆԻԱ

1. Ափերի գծագրությունը	198
2. Գյուտի և գրավման պատմությունը	198
3. Ավստրալիայի մակերեսույթը և գետերը	199
4. Ավստրալիայի կլիման	199
5. Բուսականությունը և կենդանական աշխարհը	200
6. Ցեղադրական, բնակչության խտության և պետական բաժանման քարտեղների տեսությունը	201

XII ԱՆՏԱՐԿՏԻԿԱ

1. Աշխարհամասի գյուտը և հետազոտությունը	202
2. Ափերի գծագրությունը և կազմությունը	203
3. Կլիման: կենդանական աշխարհը	205



ԳԻՒԸ | Ա. 80 ԿԱՊ.
ԿԱԶՄԸ 40 ԿԱՊ.

11822

Լ. Դ. Синицкий
ФИЗИЧЕСКАЯ ГЕОГРАФИЯ
Учебник для средних школ
Гиз ССР Армении
Эривань 1933 г.